հայ եկեղեցւոյ կամարներուն տակ ըլլալ, հայ ուսուցիչին դիմաց ըլլալ, Վարդանին զինակից դառնալ:

Հ.Մ.Ը.Մ.ի մէջ ըլլալ՝ կը նշանակէ Հայաստանի հողին վրայ ըլլալ՝ Սփիւռքի ապահայացնող՝ տխուր ու տժգոյն պայմաններուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքի մէջ «Փոքրիկ Հայաստան» մը եղաւ. աշխարհի բոլոր անկիւններէն յուսաւառ աչքերով ու վճռական քայլերով Հ.Մ.Ը.Մ.ը կը շարունակէ քալել դէպի Արարատի փէշերը եւ Արաքսի ափերը, դէպի ճշմարիտ հայրենիք՝ յաւիտենական Հայաստան:

**ԱՐԱՄԱ. ԶԷՇԻՇԵԱՆ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

# «ԱՐԻ ԱՐԱՆՅ» ՎԱՅԵԼ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՌԻԹԵԱՄԲ

...Չգիտեմ, ո՞ր թիւին պիտի հասնի Հ.Մ.Ը.Մ.ի յառաջգնացութիւնը: Վստահաբար, շա՛տ ատելի բարձր թիւերով պիտի հանգրուանուի ան, առանց սակայն վերջակիտուելու: Չգիտեմ, նոյնիսկ երբ ժամանակը գայ եւ հայութեան Մեծ Երազը լոյս զգենու՝ հարկ ըլլայ թերեւս, որ անունն իսկ նոր տարազ հագնի: Բայց գաղափարը, ոգին, տեսլականը եւ առաքելութիւնը չեն կրնար մահ ճաշակել: Այնքան ատեն, որքան իբրեւ հայ կ'ապրինք եւ մանաւանդ որոշած ենք հայօրէ՛ն ապրիլ՝ անպայման Հ.Մ.Ը.Մ.ը եւ անոր նման երիտասարդութիւն կազմաւորելու արուեստին սպասարկու միութիւնները պիտի ապրին մեր մէջ: Որովհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ը հայ երիտասարդութեան մէջ կը սաղմնատրէ եւ կը կերպարատրէ՝

ա) Կարգի ու կանոնի կենցաղակերպը:

Եւ չմոռնանք, որ առանց կարգի ու կանոնի ամրաշէն ազդակներուն՝ մարդիկ չեն կրնար ազգ կազմել:

բ) Պարտականութեան եւ պատասխանատուութեան գիտակցութիւնը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ որեւէ հաւաքականութիւն թոյլ ընկերութեան մը կը վերածուի:

գ) Ազգային արժանապատուութեան զգացումը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ կա՛մ սին հպարտութեան եւ կա՛մ անտարբեր, տժգոյն հանրութեան մը կը վերածուի մեր ազգութիւնը:

դ) Արիւթեան եւ ասպետականութեան ոգին:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ տերեւի նման շարժում եւ ամէն հովի առջեւ տատանող գոյութեան մը կը դատապարտը՛լի հայութիւնը:

ե) Ծառայութեան եւ նուիրումի պատրաստականութիւնն ու յանձնառութիւնը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ անբովանդակ, կամապաշտ ու անձնակեղրոն անձերու գումարի մը կը վերածուի հայկազնեան ցեղը:

զ) Բարձրանալու եւ բարձրացնելու նախանձախնդրութիւնը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ գետնաքարշ, տափակ եւ յետսագնաց ընկերութեան մը պատկերին կը սահմանուի Թորգոմայ ազգը:

է) Աստուծոյ եւ հայրենիքի գերազանցութեան ըմբռնումը:

Եւ չմոռնանք, որ առանց անոր՝ ուժաքամ եւ դատարկ խաժամուժի մը կը փոխակերպուի Լուսաւորչի եւ Վարդանի սերունդը:

Ահա թէ ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ի եօթանասունամեակը վերստին մկրտութեան աւազան մը պէտք է դառնայ, եւ որուն ջուրին մէջ խառնուած պէտք է ըլլայ եօթնազան հոգի - հիւրերով շինուած այն միտունը, որ մեր ազգի հոգիին հարազատ կաթն է:

Սիրելի՛ արիներ եւ արեւոյշներ, ձեր իսկ հարազատ բառերով՝ Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ եւ քոյրեր,

Հայութեան անկախութեան, յարութեան ճամբով մահէն դէպի կեանք քալած տարւոյն՝ 1918-ին կեանքին բացուած այս ազնուածին կազմակերպութիւնը ձեր եւ ձեզի հետեւող երիտասարդներու կեանքի ոճով ու գործելու եղանակով, 1988-ին, հարկ է որ դառնայ նորահրաշ գորութեամբ վերակենսաւորւած կազմակերպութիւն: Մի՛ մոռնաք, որ ձեր եօթանասունամեակին գուգադիպեցաւ Ղարաբաղի վերահայացման նախանձաւոր ու ազգապարծան շարժումը: Ուժ առէք հայութեան մէջ նոր ուժի բարձրացած միութեան եւ ամբողջական նուիրումի այս պայծառափայլ եւ շքեղագոյն շարժումէն, որ մագնիսի գորութեամբ անցաւ ամէն մէկ հայու հոգիէն:

Այդ շունչով կենսաւորեցէք եօթանասունամեակը, որպէսզի անունն հայուն մնայ միշտ բարձր, եւ՝ յարաճուն բարձրացումին մէջ հպարտ ու արիական, «արի արանց» վայել արժանապատուութեամբ, յաղթանակի կամքով ու ասպետական ազնուականութեամբ:

**ԳԱՐԵԳԻՆ Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ**



# ՄԵՐՈՒՆԴՆԵՐ ՆԵՐՇՆՉՈՂ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Կրկնուած ճշմարտութիւն է, թէ ծառը իր պտուղէն կը ճանչցուի. այդպէս ալ, որեւէ միութիւն կամ կազմակերպութիւն իր գործերէն կը ճանչցուի:

Հ.Մ.Ը.Մ.ը այն միութիւններէն է, որ իր յարաճուն գործունէութեամբն ու բոլորանուէր ծառայութեամբը ծանօթ է բովանդակ հայութեան եւ արժանի դարձած է անոր արդար գնահատումին:

Հ.Մ.Ը.Մ.ը հայ գաղթաշխարհին մէջ եղած է հայ պատանի-ին նկարագիրը կերտող, հոգին ազնուացնող եւ անոր առողջ միտք եւ առողջ մարմին տուող մեծագոյն միութիւնը:

Մերունդներ ներշնչող եւ առաջնորդող մեծութիւն մըն է Հ.Մ.Ը.Մ.ը, եւ մեծութիւն մը պէտք չունի գնահատագրերու՝ ատելի եւս մեծնալու եւ կամ հանրութեան ներկայացուելու համար, երբ մէջտեղն է ինքը այդ մեծութիւնը իր բոլոր շքեղութեամբը եւ տարիներու բեղուն վաստակովը:

Ա՛յս է իմ վկայութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի մասին:

Այս առթիւ, կ'օրհնեմ յիշատակը Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր հիմնադիրները:

Կ'օրհնեմ Հ.Մ.Ը.Մ.ի այժմու բոլոր ղեկավարները, որոնք ամբողջական նուիրումով լծուած են անոր գեղեցկագոյն եւ ազնուագոյն նպատակներու իրագործման:

Կ'օրհնեմ անոր բազմահազար անդամներն ու սատար հանդիսացողները, որոնք իրենց սրտանուէր ընծայաբերութեամբն ու զոհողութեան ոգիովը ծաղկեալ եւ կենսունակ կը պահեն այս մեծ միութիւնը:

**ԽՈՐԷՆ Ա. ԲԱՐՈՅԵԱՆ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

# ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԹԵԱՄԲԸ «ԱՐԻ»

Հայ ցեղի, հայ մեծ ժողովուրդի բոլոր վսեմ ու սրբազան առաքինությունները խտացած են Հ.Մ.Ը.Մ.ի հանգանակներուն մէջ, այդ հանգանակներուն լոյսն ու գաղափարական ջերմութիւնը մեր տղաքը կը դարձնեն գոհաբերութեան եւ հայրենասիրութեան մէյ մէկ անօթներ:

...Կը մաղթեմ, որ պարտութիւն չճանչնա՛յ Հ.Մ.Ը.Մ.ը: Կը մաղթեմ, մանաւանդ, որ ՀՈԳԵԿԱՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ չճանչնայ ու շարունակէ իր փրկարար գործը՝ ներկայ ու հասնող երիտասարդ սերունդներու ֆիզիքական եւ բարոյական զարգացումով:

Հիմա, որ Ի. դարու մէջ, մեր դարու այնքան բազմաթի՛ւ գիտերէն վերջ, մարմնական քաջութիւնը, ֆիզիքական ոյժի արտայայտութիւնը այնքան մեծ արժէք եւ նշանակութիւն չեն ներկայացներ, որքան հոգեկան արութիւնը՝ որուն այնքա՛ն պէտք ունինք մեր այժմու կեանքին մէջ: Ես պիտի ուզէի, որ Հ.Մ.Ը.Մ.ի արիները ըլլան մեր պատմութեա՛ն արութեամբը «արի»:

Պատմութեան մէջ, մենք զմեզ մի՛շտ արի դաւանած ենք: Կ'ուզեմ, որ մեր ժողովուրդը թէ Հ.Մ.Ը.Մ.ը պահե՛ն իրենց արութիւնը, ընդդէմ ամէն տեսակ վատութեանց եւ անարդարութեանց, մէկ խօսքով, «անարութեանց», ինչպէս կ'ըսեն մեր պատմիչները:

**ԶԱՐԵՀ Ա. ՓԱՅԱՍԼԵԱՆ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

# ԱՄԷՆՈՒՆ ՄԻՐԱԾ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Անոնք որ Հ.Մ.Ը.Մ.ը հիմնեցին, կամեցան երիտասարդ Հայաստանին պարգև տանիլ կազմակերպութիւն մը եւ ոգի մը, որուն դրօշին տակ պէտք է բոլորուէր ամբողջ հայ պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը, դառնալու համար մարմնով առողջ եւ կորովի, մտքով՝ պայծառ եւ արթուն, հոգիով՝ մաքուր եւ ամուր, նկարագրով՝ ուղիղ եւ գաղափարապաշտ. ու այսպէս հասակ նետած այդ սերունդը պիտի կոչուէր հայ ազգին ու հայ հայրենիքին իտեալներուն ծառայելու:

Այդ շրջանին ի՛նչ կանաչ լոյսեր կը ծաղկէին Հայ Մարմնակրթական այս Ընդհանուր Միութեան շուրջ:

Ասա՛ղ, սակայն, հիմնական նպատակը չիրականացաւ:

Ու Հ.Մ.Ը.Մ.ն ալ, հայ թափառականի ցուպը ձեռքին, կ'ապրի դեռ օտար արեւներու տակ:

Բայց անոր նպատակն ու ոգին մնացած են ու պէտք է մնան նոյնը:

Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է ապրի նոյն ոգիով, պէտք է հաւաքուի նոյն դրօշին տակ, պէտք է մարմնով ու հոգիով պատրաստուի, ծառայելու համար նոյն իտեալին:

Ահա թէ ինչո՛ւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը եղած է ու կը մնայ ամէնուն սիրած Միութիւնը:

Ահա թէ ինչո՛ւ բոլորս պէտք է գուրգուրանք անոր վրայ ու պէտք է տանք անոր մեր անվերապահ, մեր ամբողջական օժանդակութիւնը:

**ՎԱԶԳԷՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ**  
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

## Ո՛Չ ՄԻԱՅՆ ՄԱՐՄԻՆ

Հ.Մ.Ը.Մ.ի անունը ինձ համար պատճառ է ազնիու հպարտութեան, օրինաւոր պարծանքի: Անոր անուան հետ կ'երեւակայեմ խումբեր ու խմբակներ հայ պատանիներու առողջ մարմնով, կարմիր այտերով, կրակուրոց աչքերով, հագուստով ու կապուստով մը, որ հեռու է գիրք ու զէխ կեանք մը մատնանշելէ:

Ազգը իւր դաստիարակութեամբ կը փրկուի, իւր դաստիարակութեամբ կը կորսուի:

Գիտեմ, որ ընտանիք ու դպրոց ըլլալու են սրբանոցները դաստիարակութեան:

Բայց կը կատարե՞ն, կրնա՞ն կատարել անոնք իրենց պաշտօնը: Արտաշխարհի, միջավայրի ազդեցութիւնը աւելի ուժեղ է յաճախ: Ընտանիք ու դպրոց չեն կարող տղուն հետեւիլ ամէն տարիքի եւ ամէն տեղ: Շատերը կը քեն դպրոցը ճիշդ այն հասակին, երբ ամէնէն աւելի կարօտ են ուղղուելու, առաջնորդուելու:

Դպրոցի եւ ընտանիքի քով ուրեմն՝ գործունէութեան ընդարձակ դաշտ մը բաց կը մնայ:

Անհրաժեշտ է կազմակերպութիւն մը, որ մասնաւորապէս այդ շրջանին նեցուկ ըլլայ պատանիներու: Չթողու որ դպրոցի եւ ընտանիքի մէջ տրուած թռիչքը կասի: Արգիլէ գահավիժումը: Ամրապնդէ սկզբունքները: Տայ կեանքի փոթորիկներու դիմացոյ գաղափարականներ:

Հ.Մ.Ը.Մ.ը կրնայ խաղալ այդ դերը: Կրնայ դառնալ հրապարակային թումբ՝ վատասերումի եւ օտարացումի դէմ:

\*\*\*

Եթէ հարցնէք փրկութեան ճանապարհը - աչքերս կ'ուղղ-

ուին Հ.Մ.Ը.Մ.ին: Միակը չէ այն, որ կրնայ ու պետք է կռուի օտարութենէ ներածուած որումին դէմ: Կան ուրիշ հաստատութիւններ եւս: Բայց ոչ նոյնքան յարմար ու ազդու՝ քան Հ.Մ.Ը.Մ.ը:

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.ը կը կրթէ, կը կերտէ - անաղմուկ, անշշուկ: Ամենապարզ ու գործնական միջոցներով: Կեանք ու գործ, բնութիւն ու ճարպիկութիւն, խաղ ու վազք են միջոցները: Արձակ ասպարէզ կու տայ պատանիներուն՝ ցուցնելու, որ անարժէք չեն ու կը մղէ բարձրագոյն արժէքներու:

**ՀԱՅՐ ՄԱՀԱԿ ԿՈԳԵԱՆ**

# ՆԱԲԱՏՔԻ ԳՈՐԾ

Հայութեան կամքին խորհրդանիշ կազմակերպութիւնն է անիկա՝ Հ.Մ.Ը.Մ.ը, որուն գլխաւոր հիմնադիրը՝ նահատակ Շաւարշ Քրիսեանը պատգամեց.-

Հաւատքի գործ է անիկա:

Ձայն ճանչնալու համար իւրաքանչիւր հայ թող իր մտքին դիմաց պատկերացնէ մեր կենսունակութեան խորհրդանիշ եւ համազգային գուրգուրանքի արժանի կազմակերպութեան՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան չորս բառերէն իւրաքանչիւրին իմաստը:

ՀԱՅ.- Ասպետական ցեղն է անիկա, որուն անուան «Արի»ն, քաջ մարդն է, «Արմէն» հռովմունով: Հայը մարդկային պատմութեան մէջ յայտնաբերած իր արի գործերու բերումով տիրացաւ այս տիտղոսին եւ անով կոչուեցաւ ՀԱՅ:

ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ.- Յեղին մարմինն է անիկա, իր ամբողջական կազմութեամբ. մարմինը, որուն ներդաշնակութեան եւ կազմաւորման համար միտքն ու հոգին սերտ գործակցութեամբ կը ձեւաւորեն, կը դաստիարակեն ու կը կրթեն, անձը դարձնելու համար կազմուածքով, տեսքով եւ էութեամբ վայելուչ, հմայիչ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ.- Համայն հայութեանն է, ոչ մէկուն սեփականութիւնն է անիկա, ոչ սեփն ու ճերմակին եւ ոչ ալ կարմիրին ու կապոյտին, ոչ առաքելականին եւ ոչ ալ կաթողիկէին ու աւետարանականին, այլ բառին ամբողջական առումով Ընդհանուրին:

ՄԻՈՒԹԻՒՆ.- Բովանդակ հայութեան արտայայտութիւնն է անիկա, միացած հոգուով ու սրտով, ապրումով եւ գործով, սիրով, եղբայրութեան նուիրական ուխտով զրահուած, կազմակերպութեան շունչով սնանող, անոր գուրգուրանքով ու խնամքով աճող, ծլող-ծաղկող Միութիւն:

**ՇԱԽԱՐԾ ԶՀՆՅ. ՄԵՀՐԱՊԵԱՆ**

## Ն.Մ.Ը.Մ.

Մարզիկ չեմ: Գործով հեռու, բայց սրտով մօտ եմ ձեր միութեան՝ իր հանրային մեծ արժէքի համար: Մարզանքի առողջապահական օգուտն անվիճելի է: Ընտանիքներին տալիս է առողջ հարսներ ու փեսաներ, երիտասարդ զոյգերին՝ առոյգ սէր եւ կայտառ երեխաներ եւ ապահովում է ազգի տեւողութիւնը, ինչ որ մեծ բարիք է հանրային առումով:

Բայց անձնական առողջութիւնը ապագային բարիք է. մեր ազգին թէ այլազգին մեծապէս ձգտում են նրան: Այս ձգտումը հանրային մեծ արժէք է ստանում, երբ նա դառնում է հաւաքական եւ առնում է ազգային պիտակ: Բարեբախտաբար Ն.Մ.Ը.Մ.ը կառուցուած է ազգային հիմքի վրայ, որով իր յաջողութիւնն ու փառքը հասնում են ազգին: Ապրում ենք այնպիսի միջավայրի մէջ, ուր հոգեւոր մասը գերակշիռ դեր ունի եւ կուսակցական շերտաւորումը կատարուած է խմբակցութեան գծով եւ ոչ աշխատիմացութեան. ուստի շեշտուած ձգտում կայ այս լիովին աշխարհիկ եւ ազգային շարժումը վարել յարանուանական եւ խմբակցական ուղիներով, ինչ որ տանում է դէպի պատակտում եւ թուլացում: Աւելորդ եմ համարում յորդոր կարդալ այս բեմից, որովհետեւ վատթարագոյն խոսքերը նրանք են, որ չեն ուզում լսել: Պէտք է թեւ ու թափ տալ Ն.Մ.Ը.Մ.ին, որ զօրանայ իբրեւ հաստատուն կաղնի. իր թանձր շուքի տակ՝ բնական բերումով՝ պիտի խամրին վտիտ ծիւերը:

Անհատական եւ հանրային առողջութիւնը ձեր վարած շարժման արդիւնքներից մէկն է, բայց ոչ միակը: Ասած են. առողջ հոգին առողջ մարմնի մէջ: Եթէ այսպէս է, ուրեմն մարմնակրթանք ասել է հոգեկրթանք: Այս գործի մէջ առաջին աստիճանի վրայ կեցած են երկսեռ արիները: Արիների շարժման հայրենիքն Անգլիան է, ուստի իր նպատակն է նկարագրի ազնուացում եւ զօրացում: Եւ իրաւամբ, որովհետեւ կենսական պայքարի մէջ վերջին խօսքը նկարագրինն է: Մեր նկարագիրը խաթարուած է դարաւոր ստորադասութեան հե-

տեսանքով: Մեզ պետք է մի զգաստ, զուսպ եւ կարգապահ հայութիւն. եւ կարգապահութիւնը ոչ թէ սաստի տակ, այլ ինքնաբուխ, որ ասել է՝ գիտակից: Այս յատկութիւնները կը զօրանան եթէ զարգանայ միասնութեան ապրումը իբր հոգեկան կայուն վիճակ: Զօրաւոր է հայն իբր ես, բաւական զօրաւոր իբր ընտանիքի անդամ, պակաս զօրաւոր իբր յարանուանութեան կցորդ եւ լիովին թերի իբր ազգութեան անդամ: Մարզական շարժումը մշակում է միասնութեան ոգի. արհմերի բանակումները եւ մեծերի մրցանքները մարզում են ոգին. ամէն մէկն ունի մի դեր եւ բոլորի ունեցած դերերով կատարում է մի ընդհանուր գործ: Այս վարժութեամբ պատանին եւ երիտասարդը պատրաստում են ազգի կեանքի մէջ եւս մի դեր ստանձնելու եւ դրանով ազգի պահպանութիւնն ապահովելու: Եւ այդ պետք է լինի գլխաւոր նպատակը՝ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գործով նկարագիր ազնուացնել ու զօրացնել:

Իմ հարցումին թէ արդեօք պատանի օրերին նա պատկանա՞ծ է արհմերի կազմակերպութեան՝ անգլիացի մի զինուոր պատասխանեց - ոչ. ես անարժան էի. թերութիւններ ունէի: Նոյն օրերին պատահեցի հայ արհմերի, որ պարծենում էին թէ ինչ ճարպիկութեամբ խաղող գողցած էին Լիբանանի այգիներից: Ահաւոր է վիհը, որ բաժնում է այդ երկուսին եւ այդ վիհը պետք է լեցուի. եւ ոչ թէ արեւմուտքի շիտակ գաղափարը ճկելով եւ մեր կորացած մէջքին յարմարելով, այլ մեր կորացած մէջքը արեւմուտքի շիտակութեամբ շտկելով: Պէտք է վերակառուցել ասիական հորդանների ատերմունքը մեր նկարագրի մէջ. պէտք է ազնիւ ու շիտակ նկարագիր մշակել, որ ուրիշ բան չէ՝ քան տիրել անձին, կամ որ նոյնն է՝ լինել զուսպ: Եւ ուրեմն, զգաստ, զուսպ ու կարգապահ - ահա նշանաբանը:

Մարդկային մարմինը ճկուն է եւ պատրաստական հնազանդելու մարդու կամքին. սովորոյթը արմատանում է արագ, բայց եւ անցնում է արագ, եթէ հսկողը թերանայ: Այսպէս է եւ հոգին: Մարդ պէտք է աշալուրջ հսկէ իր անձին՝ նրա տէրը մնալու համար: Այսպէս միայն կարելի է կայուն սովորոյթներ ձեռք բերել, որ ասել է՝ միօրինակ պահուածք՝ միատեսակ դէպ-



քերի հանդէպ եւ ուրեմն վստահութիւն ներշնչել թէ իբր անհատ եւ թէ իբր հաւաքական միութիւն, իբր ազգ: Երիտասարդը վաղուան վարիչն է մեր ճակատագրի. յանցաւոր կը լինենք իբր ազգ, եթէ չպատրաստենք առողջ, զգաստ, զուսպ ու կարգապահ նոր սերունդ, իբր ժառանգորդ ու վարիչ. բայց եւ երիտասարդները յանցաւոր կը լինեն եթէ չպատրաստուին: Սերունդների յաջորդութիւնը բնական երեւոյթ է. ինչ որ հին է պէտք է մեռնի, բայց բնական փոխանցման պէտք է ջանանք բնական կերպարանք տալ մեր կամքի միջամտութեամբ՝ թերացողներիս գործը աւելի լաւերին թողնելու մտահոգութեամբ:

Վերջին մի խօսք. եթէ կ'ուզէք՝ քնարական մի զեղում: Տարեցներիս վիճակուած չէ հայրենիք տեսնել: Ազգովին մեղանչեցինք ազատութեան աստուծոյ դէմ եւ ահա թափառում ենք տարագրութեան անապատներում: Երանի թէ Իսրայէլի պէս մեզ քառասուն տարի վիճակուած լինէր թափառել. կէսն արդէն անցած կը լինէր: Բայց ուրիշ դարերում, ուրիշ ուժերից մղուած մեր տարագիր բազմութիւնները հայրենիք երազելով աչքերը փակեցին օտարութեան մէջ եւ նրանց սերունդները դարերով խամրեցին ու չքացան առանց հայրենիք տեսնելու: Առածն ասում է. յոյսն է կերտել աշխարհը: Բայց եւ յոյսը մաշում է եթէ չի պահում գիտակից ճիգով ու գործով: Խօսքս փորձում է քաղաքական բնոյթ ստանալ որի ո՛չ տեղն է, ո՛չ ժամանակը: Մենք չենք մեր վիճակի տնօրէնը: Գուցէ այնպէս պատահի, որ նոր սերունդը բախտ ունենայ իր չտեսած հայրենիքը դառնալու: Պէտք է ջանալ մի զգաստ, զուսպ եւ առողջ սերունդ ուղարկել հայրենիք, որ իմանան գնահատել նրա մեծ արժէքը եւ կառչին իրենց հողին: Հ.Մ.Ը.Մ.ի գործը չէ այս խնդիրը լուծել. բայց նրա հանրային պարտականութիւնն է ազնիւ եւ առողջ հայութիւն պատրաստել, որ երբ ժամը հնչէ՝ կարենայ հայրենիքին ներկայանալ իր զգաստ ու առոյգ շարքերով եւ ազնիւ հպարտութեամբ ասել.

- Ահա ե՛ս եւ մանկուո՛ք իմ:

**Ն. ԱՂԲԱԼԵԱՆ**

## Ն.Մ.Ը.Մ.

Այս հանդեսին առոյգ մարզիկ մը պէտք էր խօսեր, եւ ոչ թէ ինձ նման կորաքամակ ծերունի մը, բայց քանի որ հրաւիրած են խօսելու, ուրեմն բան մը կը սպասեն: Ես ինքս կ'որոշեմ դերս. պիտի խօսիմ իբր հին սերունդի անդամ մը, նորերու հանդէպ:

Ի՞նչ կրնամ ըսել, եթէ ոչ գնահատել, քաջալելել, թելադրել ու մաղթել: Այս քսանհինգամեակին պէտք էր որ ազգային մարմիններ գային շնորհատրանքի. բայց ասոր համար պէտք էր ազգային պայծառ գիտակցութիւն մը, որ չկայ: Պէտք էր գիտակցիլ թէ քսանհինգ տարուան ընթացքին մարմնակրթութանքը յեղաշրջած է մեր կեանքը, որ վերադարձած է շատ հին անցեալին-նաւասարդեան օրերուն: Ամէն վերադարձ ինքնին յեղաշրջում մըն է: Այսպէս էր մեր քաղաքական եւ ռազմական վերադարձը, որուն շնորհիւ այսօր ունինք պետութիւն, բանակ եւ ռազմասէր ու ռազմունակ ժողովուրդ: Արդ, մեր երկրէն դուրս հայ կեանքը պէտք է ընթանայ ներսի զուգահեռ. այնտեղ մեծ է մարմնակրթական շարժումը, պետական նպաստով եւ պետականօրէն կազմակերպուած. այստեղ համեստ չափերով, բայց նոյն ոգիով պէտք է գործել:

Մարմնակրթանքի գաղափարը եւ պահանջը պէտք է արծարծել ու արթնցնել խօսքով ու գործքով: Պէտք է լայնցնել Հ.Մ.Ը.Մ.ի հիմերը, շատերն հրաւիրելով մասնակցելու: Ազգային մեծարժէք հաստատութիւն, կռթնած երիտասարդութեան կորովին: Ան պէտք է ձգտի ազգովին վերափոխել հայ ժողովուրդը՝ նկուն վիճակէն հանելով եւ առոյգ բարձունքին տանելով: Ան ունի երկու գործ, իսկ մենք՝ մէկ. ան պէտք է ամէն պատանի դարձնէ արի եւ ամէն երիտասարդ՝ մարզիկ. իսկ մեր պարտքն է նպաստել նիւթապէս եւ քաջալեր հանդիսանալ բարոյապէս: Ան պէտք է մարզէ երկու սեռ անխտիր, եւ երկսեռ հայութիւնը պէտք է դառնայ յենարան անոր:

Մեր գանգուածը պէտք է խորապէս գիտակցի թէ առյաւէտ թողած է իր գաւառն ու գաւառական կենցաղը եւ կ'ապրի Եւրոպայի դռներուն մօտ: Փոխելով իր հագուստը պէտք է փոխել եւ իր գաւառական կենցաղն ու գաղափարները: Նկատի ունենալու է նաեւ որ կ'ապրի քսաներորդ դարի մէջ: Նոր ժամանակն ու միջավայրը նոր պահանջներ ունին եւ անոնցմէ մէկն է մարզական կեանքը, որ գրաւական է վերածնունդի: Ստրկութեան դարերու հետեւանքով հիւանդ է հայ հոգին. պէտք է մարմինն առողջանայ, որ հոգին բուժուի եւ վերապրի առոյգ ու կայտառ: Ասիական եւ գաւառական թմբիրը վերջ գտնելու է:

Հ.Մ.Ը.Մ. յաջող մրցումներ կը կազմակերպէ եւ յաղթանակներ կը շահի՝ մրցելով մերոնց եւ օտարի հետ. օգտակար եւ պատուաւոր գործ է ասիկա. բայց պէտք է ինքզինքը նկատել հայութեան մարմնակրթութեան վարչաբաժին, տէր ու ղեկավար. պէտք է ամէն տուն մտնել եւ ամէն առիթ օգտագործել յորդորելու, համոզելու որ պատանի եւ երիտասարդ մարզանքի հետեւին: Պէտք է հրատարակել գրքոյկներ որ փաստեն մարզանքին կարեւորութիւնը անհատական եւ հանրային տեսակէտով. ծնողները պէտք է դրդել որ իրենց զաւակները արհմերու խումբերը դրկեն:

Այս բոլորը կը պահանջեն անդուլ եւ անձնուէր աշխատանք եւ յամառ հետապնդում: Որքան շատերը մարզանքի հետեւին, այնքան շատ մարզիկներ կ'ունենանք եւ այնքան լաւ մարզական խումբեր, յաղթանակներ շահելու: Մրցական խումբերը կը ցուցադրեն միասնական կորով եւ կարգապահ աշխատանք, եւ երբ օտարի հետ է մրցումը՝ կը նպաստեն ինքնագիտակցութեան: Մարմնական ուժը չէ որ յաղթանակ կը շահի, այլ բարոյական կորովը, որ նոյն է թէ նկարագիրը եւ խմբակցական կեանքը մեծապէս կ'ազդէ անհատական եւ հանրային նկարագրի կազմութեան վրայ. խաղի մէջ խարդախը՝ խարդախ է նաեւ իր տունը եւ դուրսը ընկերներուն հետ. ընդհակառակն՝ խումբի ազնուական նկարագիրը իր անդրադարձումն ունի բարոյական կեանքի միւս մարզերուն վրայ: Որով

մարմնակրթանքը կը բերէ ոչ միայն մարմնական, այլև մանաւանդ բարոյական վերակազմութիւն եւ նկարագրի բարելաւում: Մեծ է դերը Հ.Մ.Ը.Մ.ի: Այդ դերը լաւ ըմբռնելու համար, անհրաժեշտ է ազգային բարձր գիտակցութիւն, այսինքն մեր ուժերու, մեր արժէքի, մեր ընթացքի եւ նպատակի պայծառ ըմբռնում: Յարգանք, պատկառանք եւ տեղ այս աշխարհի մէջ՝ ուժով կը ստացուի, կը պարտադրուի եւ կը ներշնչուի: Իսկ ուժեղ են առոյգը, առողջն ու կորովին:

Կը հետեւի, թէ Հ.Մ.Ը.Մ. ազգային հիմնարկութիւն է, եւ այս կցորդ գաղափարներէն ազգայինն է հիմնականը. հանրութեան համակրութիւնը ատով է պայմանաւոր եւ ատոր մէջ է հանրային արժէքը: Արդ, ազգը քաղաքական եւ մշակութային գաղափար է, եւ վերջինն է հիմնական: Բոլորդ անկախ Լիբանանի ազատ քաղաքացիներ էք եւ արիներու նման «պատրաստ» քաղաքացիներ, այսինքն օրինապահ եւ պաշտպան. բայց պաշտպան ո՛չ միայն քաղաքական նոր հայրենիքի, այլև ազգային հին մշակոյթի: Այս երկու պարագան պէտք է լաւապէս գիտակցիլ եւ գիտակցիլ տալ: Քաղաքացին ունի պարտականութիւն, բայց եւ իրաւունք. իր առաջին իրաւունքն է իր լեզուն եւ կրօնը տեսնել ապահով: Տալ պէտք է կայսերը կայսեր, որ նոր հայրենիքն է, եւ Աստուծունն Աստուծուն, որ մեր հին մշակոյթն է, այսինքն մեր ազգային կերպարանքը: Հայերը, Լիբանան թէ Սուրիա, քաղաքացիներ են, բայց հա՛յ քաղաքացիներ: Այս գաղափարները պէտք է յստակ ու որոշ ըմբռնեն հայերը, բայց մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ը, որ հայ կորովին կազմակերպութիւնն է: Այսպէս միայն կարելի է գոհացում տալ եւ պետութեան իրաւացի պահանջին եւ ազգութեան իրաւունքին:

Թելադրութիւններս վերջացան: Քաջալերանքս գործով ցուցադրեցի եւ կը յորդորեմ ներկաները անվերապահ աջակցիլ Հ.Մ.Ը.Մ.ի ձեռնարկներուն: Հանրութիւնն արդէն իր գիտակցութեան չափով միշտ գնահատած է Հ.Մ.Ը.Մ.ը. ատոր ապացոյց են այս բազմութիւնը, այն խանդավառութիւնը, զոր կը ցուցադրուի մրցադաշտերու մէջ. այն համակրանքը, զոր

կ'արտայայտէ մամուլը: Քսանհինգ տարուան ընթացքին մեծ գործ կատարած է, պատրաստած է ուժ եւ հող, ատելի մեծ գործերու համար: Կը մաղթեմ որ, թէւ նոր հայրենիքի մէջ, Հ.Մ.-Ը.Մ.ի գործունէութիւնը ընթանայ հին հայրենիքի գործին զուգահեռ, որովհետեւ թէւ հեռաւոր, բայց որդին ենք նոյն հայրենիքի. թէւ տարագիր, բայց եղբայրն ենք նոյն ժողովորդին. կը ճգնիք պահել նոյն լեզուն, նոյն մշակոյթն ու ոգին, ինչ որ մեր հին հայրենիքի մէջ, թէւ դարձած ենք նոր եւ ազատ աշխարհի նոր քաղաքացի:

**Ն. ԱՂԲԱԼԵԱՆ**

1944

# Հ.Մ.Ը.Մ.

Գաւառէն նոր Պոլիս հասած ու որբանոց դրուած էի, երբ օր մը, ինչ որ գրութեան մէջ հանդիպեցայ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան սկզբնատառերուն (Հ.Մ.Ը.Մ.): Ինծի համար նորութիւն էին անոնք, ու անոնց իմաստը ինծի բացատրելու համար՝ դիմեցի դասարանին մէջ քովս նստող ընկերոջս.

- Աս «Հ.Մ.Ը.Մ.»ը ի՞նչ կը նշանակէ,- հարցուցի:

- Ատ ալ հարցնելու բա՞ն է... «Հօրդ, մօրդ ըսածը մի՛ ըներ» կը նշանակէ,- պատասխանեց:

- Է՞...

- Է, մէ չկայ... Հ.Մ.Ը.Մ.՝ հօրդ, մօրդ, ըսածը մի՛ ըներ կը նշանակէ... Կրճատ ձեւն է: Հ(հօրդ), Մ(մօրդ), Ը(ըսածը), Մ(մի ըներ)...

Չհաւատացի, որովհետեւ տրամաբանութեան հակառակ էր: Մենք նոր էր որ կորսնցուցեր էինք մեր ծնողքը, ու անոնք մեր յիշողութեան ու սրտին մէջ նուիրականացած էին, սրբացած. անոնց խորհուրդին չհետեւիլը սրբապղծութիւն էր մեզի համար: Յետոյ, նման կազմակերպութիւն ո՞ր յիմարը կրնար յղացած ըլլալ... Դարձայ միւս կողմս նստող ընկերոջս ու անոր հարցուցի:

- Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն կը նշանակէ,- ըսաւ,- այդ չորս բառերուն առաջին տառերով կազմուած է: Կարճ ու կոկիկ է, չէ՞... Ասկէ վերջ, երբ մէկու մը լամբակին վրայ այդ նշանները տեսնես, գիտցի՛ր որ այդ անձը անդամ է այդ միութեան:

Շատ չանցած, մեր որբանոցն ալ կազմակերպելու համար Հ.Մ.Ը.Մ.ը ներկայացուցիչ մը դրկեց: Ժիրայր անունով երիտասարդ մըն էր այդ ներկայացուցիչը: Կու գար պոյ սկաւտի տարագով, թեւին վրայ իր աստիճանը խորհրդանշող երկու ժապաւէնով ու վիզէն կախ սուլիչով մը: Կը հաւաքէր մեզ

բակին մեջտեղը գտնուող մայրիի ծառին տակ ու կազմակերպութեան ծրագրին եւ առաջադրանքներուն մասին տեղեկութիւններ կու տար: Յետոյ, սկսաւ նաեւ մարզանքի եւ ուղիղ քալելու դասեր ալ տալ, քայլ փոխել, հրամանի վրայ աջ ու ձախ դառնալ ու նման բաներ ալ սորվեցնել:

Օր մըն ալ, մեր չափերը առին ու համազգեստ ապսպրեցին: Մինչեւ անոնց գալը երկու շաբաթ անցաւ ու այդ երկու շաբաթը երկու դարու չափ երկար թուեցաւ մեզի: Նոր մարդ եղանք այդ համազգեստներուն մէջ. շապիկ, կարճ տաբատ, իբրեւ փողկապ գործածուելու համար՝ կապոյտ թաշկինակ մը, ու նաեւ գօտի՝ որուն ճարմանողը, Արարատներն ու միութեան նշանաբանը. «Բարձրացիր-բարձրացուր»ը կը կրէր իր վրայ:

Ուրախացանք: Ու եթէ մեր ձեռքէն գար, գիշերն ալ պիտի չհանէինք զանոնք մեր կռնակէն: Նոր հաղորդութիւն առնողի երկիրդածութիւն մը իջաւ մեր վրայ. ա՛յ սուտ խօսելէ, նախանձելէ ու նման մանր մունր մեղքեր գործելէ առաջ կը վարանէինք, այդ ու նման զգացումներ սկառուտին անվայել կը գտնէինք... Իսկ մեր պաշտօնական երդումէն վերջ, որ տեղի ունեցաւ բակին մէջ, քահանայ հօր մը, խնամակալներու, ուսուցիչներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչներու ներկայութեան, ու մետաքսեայ Եռագոյն դրօշակի մը հովանիին տակ տեղի ունեցած հանդիսութեան մը ընթացքին, յանկարծ մեծցանք՝ ու «Ծառայել Հայրենիքին»ը դարձաւ մեր կեանքի ուղեգիծն ու նշանաբանը:

Ըսեմ նաեւ, թէ մեզմէ շատեր հաւատարիմ մնացին իրենց երդումին՝ մինչեւ հիմա, ու մեռնողները՝ մինչեւ իրենց մահը:

Առոյգ խումբ մը եղաւ մերինը: Հաւաքաբար, տասնեակով մը կամ առանձինն կը մասնակցէինք ամէն հանդէսի, ամէն ձեռնարկի, ուր հսկողութեան պէտք կար, եւ ուր հրաւիրուած կ'ըլլայինք առհասարակ: Ազգային թէ միջազգային մրցումներու մէջ մէկէ աւելի անգամներ յիշատակութեան էինք արժանացած: Երբ քաղաքէն դուրս արշաւներու երթայինք, երթի կամ դարձի մեր ճամբուն վրայ մարդիկ մեր տողանցքը դիտե-

լու համար կանգ կ'առնէին: Դաշնակիցները այդ թուականին ներկայ էին Պոլսոյ մէջ ու մեզ դիտող թուրքերը հաւանաբար նախանձող կը մտածէին. «Աստուք ե՞րբ վերակենդանացան... Ուրեմն մեր գործը լաւ չէ՛նք տեսած, գլուխնին լաւ չէ՛նք ճզմած...»:

Իսկ բարեկամ ու համակիր՝ կ'ենթադրեմ, հաճոյքով կը տեսնէին մեր ծաղկիլը:

Անգամ մը, մեր տողանցքը դիտող հայ կնոջ մը մէկ դիտողութիւնը լսեցի ու դեռ չեմ մոռցած.

- Պոյերնո՛ւն դուրպան ըլլամ,- ըսաւ,- աստուք երբ մեծման, ալ մարզանքի պէտք չեն ունենար:

Կը հաւատամ, թէ հայ կիներ մեզի համազգեստ, զինուորական համազգեստ հագցուցած՝ Հայաստանի սահմաններուն պահակ կը դնէր մտքով, կամ խրամ կ'իջեցնէր՝ թշնամիին դէմ անոր սրբազան հողը պաշտպանելու համար... Ու վստահութիւն ունէր մեր վրայ... Քանի մենք կայինք՝ Հայրենիքի ապահովութիւնը իր մտքին մէջ երաշխաւորուած էր...

Բախտը չկամեցաւ, որ մենք, բոլորս, Հայաստանի սահմաններուն պահակ կանգնինք: Մեզմէ երեքը միայն իրենց կեանքը տուին անոր համար, մնացեալներս ցրուեցանք չորս հովերուն ու մեր օրերը կ'անցընենք օտարութեան մէջ:

Չենք մոռցած մեր ուխտը. «Ծառայել Հայրենիքին»...

Համեմատաբար կարճ ժամանակամիջոցի մը մէջ, անօրինակ յաջողութիւն ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ը: Ոչ միայն սերունդ դաստիարակեց ու հայրենիքի սէր ներշնչեց անոնց, ո՛չ միայն «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ»ը տիրական դարձուց, այլև՝ ազգին անդամներուն մէջ եղբայրական կապ հաստատեց. կը բաւէ, որ մէկը ըսէ թէ ժամանակին Հ.Մ.Ը.Մ.ական եղած է, անոր հանդէպ սէր ու վստահութիւն կը տածեն իր հեռաւոր ու մօտաւոր ընկերները:

**ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ**



# ՄԵՐ ԱՆՆՄԱՆ ՏՂԱՔԸ

(ՆԱՏՈՒԱԾ ՆԱՄԱՆՈՒՆ ԳՐՔՈՅԿԷՆ)

Հ.Մ.Ը.Մ.ը մարզական մեծագոյեցիկ միութիւն մըն է, որուն մասնաճիւղերը փռուած են Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի մէջ: Շուրջ 6.000 երիտասարդներ խմբուած են իր դրօշին շուրջ:

Մեծ գրկանքներով, տարիներու յամառ ճիգով ու տքնաջան աշխատանքով այս միութիւնը կարողացած է տիրական դիրք մը ստեղծել իրեն համար՝ սէր վաստակելով ո՛չ միայն իր ազգակիցներուն մէջ, այլեւ լայն ու խոր համակրանք՝ արաբ եւ օտար ժողովուրդներուն մէջ:

\*\*\*

Եթէ մարմնամարզը կը ծառայէ միայն մարմնի առողջացումին, առանց նոյն ճիգը սպառելու հոգիին առողջացումին վրայ, այդ՝ առողջ ու հոգեզուրկ մարմինները ո՛չ թէ բարիք, այլ ճշմարիտ չարիք մը կը դառնան որեւէ ժողովուրդի համար:

Իսկ հոգին ողջ կը մնայ մարմիններու մէջ, եթէ կա՛յ ու կը մնայ, եթէ բոլորին մէջ կ'ապրի՝ ու կը ստեղծագործէ այն «անտեսանելի»ն, մեր գոյութեան ու յարատեւումի այն հօր կռուանը, ցեղային այն անյաղթ Ոգին, որ կու գայ հեռաւոր հազարամեակներու խորերէն եւ նոյնքան խորարմատօրէն կը տարածուի՝ ու կը միաճուլուի երկու մեծ առեղծուածներու՝ Հայրենիքի եւ Ազգութեան գաղափարներուն հետ:

Եթէ մեր մարզիկները ամէն տեղ իրենց հետ մեր Հայրենիքի ու մեր Ազգի բոյրը պիտի չտանին:

Եթէ մեր մարզիկներուն մէջ հազարաւոր հանդիսատեսներ Հայաստանի ու Հայութեան խորհրդաւոր պատկերը պիտի չտեսնեն՝ լուրջ ու կորովի, արդարամիտ ու արի, յամառ ու տո-

կուն, լաւատես ու հաւատաւոր, մի՛շտ լոյսի, գեղեցիկի ու բարիի հետ, այդ մարզիկները ոչի՛նչ կը բերեն իրենց ժողովուրդին ո՛չ իբր փառք եւ ոչ իբր յաղթանակ:

Երջանիկ ենք ու հպարտ բարձրաձայն վկայելու համար, որ մեր տղաներուն մէջ մենք ճիշդ այդ Ոգին տեսանք:

Տեսանք պատկերը այն Երկրին ու Ազգին, որուն զաւակներն են իրենք:

Տեսանք ո՛չ միայն մենք, այլ տեսան նաեւ օտարները:

Ու նաեւ օտարները մեր մարզիկներն ու իրենց ազնուական խաղն ու կեցուածքը տեսնելով՝ աւելի խոր յարգանքով լեցուեցան դէպի Հայաստանն ու Հայութիւնը:

Ապրի՛ք, տղաք:

Ձերմ համբոյր մը բոլորիդ քա՛ջ, պայծա՛ռ, ու մաքու՛ր ճակտին:

**ՎԱՀԱՆ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ**

## ԱՅՍ ԱԼ ՄԵՐ ԶԱՏԻԿԸ

Քրիստոնեական Չատիկ եւ հեթանոսական մարգահանդէս,- այս երկու տօները այլեւս անբաժանելի ամբողջութիւն մը կը կազմեն Սուրիա-Լիբանանի գաղութին համար, շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ի կուռ կազմակերպութեան եւ յարաճուն գործունէութեան:

Մէկը առանց միւսին պիտի նշանակէր Ծաղկազարդ առանց դալարիքի եւ ծաղիկի:

Աւագ Հինգշաբթի.- Արդէն Հալէպ եւ հասած առաջին ծիծեռնակները, Պէյրութէն եւ ուրիշ քաղաքներէ:

Աւագ Ուրբաթ.- Առտուն կանուխէն անհամբեր բազմութիւն մը խոնուած քաղաքին բանուկ ճամբաներուն վրայ, սպասելով գալիք խումբերուն: Մէկ ժամէն միւսը անցուդարձը կը դժուարանայ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին եւ «Արեւելք» խմբագրատան առջեւ: Հանրակառքն անգամ դադար կ'առնէ:

Եկան, եկան: Կու գան: Եւ իրարու ետեւէ կը պարպուին ամերիկեան լայնանիստ կառքերը, զարդարուած գոյնզգոյն դրօշներով եւ ծաղիկներով:

Հասիչէ, Գամիշլի, Թէլ Պրաք, Ճարապլուս, Թէլ Ապիատ, Ռաս իւլ Այն, Այն Արուս, Արապ Փունար, Տերպէսիէ, Տեր Չօր:

Ապա Պէյրութ, Պուրճ Համուտ, Չահլէ, Հատէթ, Թրիփոլի, Հոնս, Լաթաքիա:

Վերջին օրը՝ Կիպրոս, Պէյրութի մնացեալ մասը, Դամասկոս, Ամման (Յորդանան), Բեսապ: Բացակայ՝ միայն Պաղեստինը, հասկնալի պատճառներով:

Եւ բուն Հալէպը՝ իր շրջաններով.- Նոր Գիւղ, Ազէզ:

Քաղաքներ, աւաններ, գիւղախումբեր, որոնց վերեւ արեան մղձաւանջը կը սաւառներ երէկ, իսկ այսօր,- արե՛ւ, արե՛ւ:

Ամբողջ երիտասարդութիւն մըն է որ կը հոսի հայաշատ ուտանը, Հալէպ: Մարմնացեալ խանդավառութիւն եւ կարգա-

պահուփին: Ինչո՞ւ չըսել՝ վերածնություն, միշտ յիշելով երեկը:

Հայկական յետին համրանքը իր բաժինն ունի երիտասարդական այս աննման կազմակերպության մեջ:

Հեռաւոր դաշտի մը վրայ նետուած ըլլան թէ լերան մը ստորոտը, անխորտակելի հաւատք կը կաթի այս երիտասարդութեան աչքերէն: Աշխատանքի, չարքաշուփեան յարատեւութեան աւիշն է որ կը յորդի իրենց երակներէն:

Եւ բարի նախանձ՝ քաղաքէ քաղաք: Մեծէն մինչեւ ամէնէն համեստը, որպէսզի բան մը պակաս չունենան: Որպէսզի կարենան քայլ մը աւելի յառաջ երթալ: Գետին մը աւելի շահիլ:

Տղայ թէ աղջիկ, արի թէ արեւոյշ, տոգորուած են նոյն ոգեւորութեամբ եւ գիտակցութեամբ:

Պճլտուն տղեկներ,- կակուղ թաթիկներ, որ վաղը պիտի կոչուին գայիկներ, եւ սա մրջիւնները, որոնք իրենց կարգին պիտի դառնան արծուիկներ թրվառն ու հրաշուի:

Դեռ բուն մարզիկները, աշխոյժ եւ մարտական, որոնց շահած բաժակները համրանք չունին ազգային թէ միջազգային գետնի վրայ:

Իսկ այս բոլորին իբրեւ պերճախօս վկայութիւն՝ այսօրուան մարզահանդէսը եւ վաղուան թափօրը՝ մասնակցութեամբ աւելի քան 2500 մարզիկներու, մանչ թէ աղջիկ:

Ահա այս ալ մեր Զատիկը, Նաւասարդեան յիշատակներով: Փառատօն մը, որ տարագիր բազմութեանց հոգին կը լեցրնէ արդար գոհունակութեամբ եւ հպարտութեամբ:

Ուրիշներ, աւելի բախտատուներ դժուար թէ յաջողէին գլուխ հանել այսքան կուռ եւ ծաւալուն կազմակերպութիւն մը, առանց պետական միջոցներու:

Անոնք որ նուիրուած են Հ.Մ.Ը.Մ.ի զարգացման աշխատանքին, Միջին Արեւելքի մեջ, անոնք միայն գիտեն թէ ինչ կը նշանակէ հինգ հազար անդամներու ցանց մը կազմակերպել ու պահել տարիներով: Հակառակ անհնարին դժուարութեանց, որոնց առջեւ շատոնց յուսահատած պիտի ըլլային վեհերոտ եւ նեղմիտ մարդիկ:

Այս հրաշքը կարելի եղած է գործել անոր համար, որ Հ.Մ.-  
Ը.Մ.ի վարիչներուն եւ անդամներուն հոգին միշտ կը խայտայ  
գարնանային շունչով մը:

Չատիկը միայն տօն մը չէ անոնց համար, այլեւ խորհուրդ  
մը, որ թեւ կու տայ իրենց գործունէութեան:

Չատիկ եւ Նաւասարդ: Մշտանորոգ ուժ եւ երիտասարդա-  
ցում: Երկու հոսուն աղբիւրներ, որոնց գաղտնիքը միայն այս  
ժողովուրդը գիտէ:

Վա՛յ անոնց որ կը փորձեն պղտորել այդ աղբիւրները:

**ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԲԵԱՆ**

*Հալէպ, 1948*

## ՇՔԵՐԹԸ

Ֆրանսահայ գրագետ Նշան Պեշկեթաշլեան, 1944-ին, Հալէպ գտնուած ժամանակաշրջանին, Հ.Մ.Ը.Մ.-ի միջ-մասնաճիւղային 34-րդ հանդիպումներուն վերջին օրուան աւանդական ընդհանուր տողանցքին ներկայ ըլլալէ ետք, գրած է հետեւեալը.-

Մայր մարգադաշտ Հալէպի,  
Տարեկան Շքերթ Հ.Մ.Ը.Մ.ի:  
Շքերթ, որուն համբարը լսուած է ամէն հայու կողմէ:  
Շքերթը շողարձակ, դասական, անուանի:  
Երեսուն հազար հանդիսականներ ամփիթատրոնին կիսաբոլորակին վրայ:

Կեդրոնը սեղան բաժակակիր. օրուան օրիորդներ ու թագուհի...

Վերը՝ օթեակ պատուոյ...

Ամէնուրեք խտուրթին, խանդավառութիւն եւ սպասում...

Աւարտ մրցումներու:

Պահն է Շքերթին:

Սպասումները ալեկոծ են:

Նուագախումբ, դրօշ ու լոյս...

Կը կարկառուին տեսողութիւններն ու լսողութիւնները.

Տողանցքին տեսիլը կը յայտնուի:

Խմբակ առ խմբակ կ'անցնին սկաուտներ, մարզիկներ, արեւոյշներ, արծուիկներ, գայլիկներ, մրջնիկներ, հեծելանորդներ, առաջնորդութեամբ խմբապետներու:

Կը յայտնուին տեսիլէ ու կը մտնեն մեր հոգիներուն մէջ:

Կը յայտնուին երկինքէ ու կը մտնեն երկնակամարի մը մէջ:

Եկած են Դամասկոսէն, Հոմսէն, Լաթաքիայէն, Հասիչէէն, Գամիշլիէն, Ռաքքայէն, Թէլ Պրաքէն, Թէլ Ապիատէն, Այն

Արապէն, Տերիքէն, Տերպէսիէն, Ռաս Իւլ Այնէն, Տէր Ջօրէն ու բոլոր թաղերէն Հալէայի: Գումար՝ երկու հազար հինգ հարիւր մարզիկ:

Միացեալ կը քալեն քաջառողջութիւնն ու գեղեցկութիւնը: Նաեւ հրեղէն հպարտութիւնը:

Կ'անցնին իրենց նայուածքին նետերը արձակած յառաջ, իրենց հոգեկան ջահը բարձրացուցած: Կ'անցնին իբրեւ վահաններ, իբրեւ կումբեր, կանգուն կերոններ: Կ'անցնին կարգապահ:

Երկնային զօրքն է որ կ'անցնի, խումբեր.- Սերովբէ, Քերովբէ եւ հոյլեր հրեշտակաց եւ զուարթնոց: Տակաւին աղջնակներ, մանչուկներ ու մանուկներ, դեռ քալելու անվարժ, մոլորած մարգաղաշտին ուղիին մէջ, սակայն հասնելու, հասուննալու եւ շքերթին մասնակից ըլլալու տեսական տենդով:

Կ'անցնի՛ն, կ'անցնի՛ն, լեցնելով մեր աչքերը արցունքով, ողորելով մեր հոգին ժպիտներով, մեր կուրծքերը լայնցնելով հպարտութեամբ, հեղեղելով մեր մէջ յուզումներ խոհերու, խնդութեան եւ խանդավառութեան:

Կու գան խումբ առ խումբ, շարք ի շարք, նման ուժական տեսիլի, նման զինուորեալներու, որոնք անգէն են ու անգրահ, սակայն ատրուշանէ մը արձակեալ հուրերու պէս են, հոգեզինեալ են հաւատքով, յոյսով ու սիրով:

Խմբապետները երկու մատով կ'ողջունեն հիւրերը պատույ...

Եւ ամէն բարեւի՛ սարսուռ մը կը շրջի հոգիէ հոգի:

Կ'անցնին ու կ'անցնին, հարստացնելով մեր հոգին, տամկացնելով մեր տեսողութիւնը, բռնկեցնելով մեր մտքին մէջ հրեղէն խոհեր...:

Կ'անցնին նման արծուիներու, արծիւներու եւ արծուիկներու: Կ'անցնին քալելով, սակայն յայտնի է որ զիտեն թռչիլ ու թեւածել: Կը թուի թէ պիտի թեւեն զագաթանիստ արծուերոյններ:

Անոնց անունները.- Վարդան, Վահան, Աշոտ, Արտաշես, Հրանդ, Հրաչեայ, Վրէժ, Վարուժան, Մերոբ, Գէորգ, Գուրգէն, Ատոմ, Անդրանիկ, Նուրհան, Նուպար ու Յարութիւն: Նաեւ Սոնիկ ու Սօսէ, Անահիտ ու Արշալոյս, Շուշան ու Շաքէ...

Անոնց մականունները.- Հայկունի, Բագրատունի, Սիւնի, Արծրունի ու Մամիկոնեան, Մեսրոպեան, Արարատեան, Ռուբինեան, Լեւոնեան...

Անոնց դրօշները.- Ծածանողը սուրիական, հոգիներու մէջ ծալուածը հայկական, երկուքն ալ եղբայր, երկուքն ալ եռագոյն. երկուքն ալ երգեցիկ, նոյն սէրերով եւ նոյն ատելութիւններով...

Անոնց ընթացքը.- Մարմնով քալել, մտքով վերելակել, հոգիով թեւածել:

Կ'անցնին...: Սակայն, չեն հեռանար: Կ'անցնին ու կը մերձենան...

Ահա ակմբուած են լայնարձակ դաշտին կեդրոնը, խտացած են իբրեւ բանակ երկսեռ, իբրեւ արեւշատութիւն, երիտասարդութիւն, իբրեւ ներկայ ու ապառնի:

Իբրեւ եղբայրական համանուագ եւ քրոջական համերգ: Իբրեւ նկար ներդաշնակութեան:

Քայլերգ ու հրեղէն հրամաններ:

Մարտուններ կայծակէ:

Կը շարժի ծիածանեալ բանակը, կու գայ առ մեզ, մնալու մեր մէջ, յանուն արթնութեան, յանուն յափշտակութեան, յանուն հպարտութեան, յանուն հրաշափառ Յարութեան:

**ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ**



# ՈՏՔԻ՛, Ն.Մ.Ը.Մ.Ը Կ՛ԱՆՑՆԻ

Ոտքի՛ ելէք:

Հ.Մ.Ը.Մ.ը կ՛անցնի:

Կ՛անցնի բանակը նայիրեան արիներու: Ոգիացած Տրդատներու ոյժը կ՛անցնի հսկայաթեւ սլացքներով: Երագներու սերմնացան Շաւարշներու հունձքը կ՛անցնի ավելառով:

Հ.Մ.Ը.Մ.: Բանակն անոնց՝

Որոնց՝ հոգին ազատութեան փոթորիկով կ՛ալեկոծի:

Որոնց՝ կուրծքը տրոփն ունի հայրենական վառ կարօտի:

Ու աչքի լոյսը ունին արեւներուն շքեղնափայլ երագներու:

Ու սրտերը արշալոյսներ պիտի դարբնեն Արարատեան անդաստանին:

Մտի՛կ ըրէք:

Յեղն է որ կը խլրտի, կը մրրկի վառած ջահեր յաղթանակի:

Ու դարերու խորխորատէն կը սլանան լոյսեր փառքի ու ցնծութեան, կը շեփորուի հոգիներէն Արմէնական խանդը կարմիր: Երիվարներ կը խոյանան դէպի բոցեղ երկինքները Հայաստանի:

Յեղն է որ կը փոթորկի:

Ու պատմութեան ընդերքներէն կու գայ Ոգին Արտաւազդեան:

Հ.Մ.Ը.Մ.ը կ՛անցնի:

Դրօշակներով՝ արիական պայքարներու կիրքով հիսուած:

Հոգիներով՝ արիւնավառ հայրենիքի կարմիր խունկով պարուրուած:

Ճակատներով՝ աստեղահոյլ երկինքներու կապոյտ տենչով լուսաւորուած:

Ու քայլերով՝ նարնջագոյն ցորեններու սարսուռներով մտրակուած:

Ոտքի՛ կեցեք: Այսօր տօն է Արտաշէսեան Նաւասարդի:  
Ու սերունդներ ուխտի կու գան Ազատութեան բազմինին:  
Կու գան անոնք արեւահար Պարսկաստանէն:  
Անյուշ բերդի կալանատը թագաւորին կարօտակէզ խռովք-  
ներով:

Ազատատենչ Եգիպտոսի ասիւնքներէն կու գան անոնք:  
Ոյժի, փառքի ու զօրութեան խորհրդանիշ Սփինքսներու  
շուքով հպարտ:

Վեհափառի ողջոյններուն ու աղօթքին հաղորդակից,  
Հնադարեան մայրիներուն Լիբանանէն կու գան անոնք:  
Ու Եփրատի արիւնաներկ ասիւնքներէն ծլարձակած հա-  
յորդիներ,

Նաւասարդի կու գան այսօր:

Ողջո՛յն ձեզի սկաւտներ, արեւոյշներ, թաթիկներ:

Ողջո՛յն բոլոր եկողներուն յաղթանակի այս շքերթին:

Ողջո՛յն կամքի արեւաշող ծնծղաներուն:

Գարնանային փառատօնի այս օրերուն:

Բերէ՛ք մեզի արգելափակ Սիւրներու ոյժը վսեմ: Շղթայա-  
կապ Արտաւազդի ատելութիւն: Արամներու փոթորկաշունչ  
գաղափարին տենդը բերէ՛ք:

Ու դոփիւնը նժոյգներուն Արարատեան արիւնահեղ կռիւ-  
ներուն:

Պիտի վառենք ջահը նորէն, ազատութեան ու հաւատքի  
խորաններուն:

Եկէ՛ք շարքով, եկէ՛ք խումբով, երգով, ծափով:

Պիտի տօնենք փառքը անհուն Արմենական հանճարնե-  
րուն:

Ու պիտի տանք ժամանակի սերունդներուն՝

հարիւրամեայ Ծառը կանգուն:

**ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ**

*Տէր Զօր*

## ՄԱՐՄՆԻՆ ԱՌՃՆԹԵՐ...

Այն տարին, երբ ցեղը իր դարաւոր ստրկութիւնը կը թօթափէր եւ նահատակներու ոսկորներուն վրայ անկախութիւն կը կերտէր Արարատեան աշխարհին մէջ, անդին, արեւմտահայ մշակոյթի վերակենդանացած ոստանէն նոր կոչ մը կ'ուղղուէր ճղակոտոր երիտասարդութեան, անոր նո՛ր ու առողջարար ոգի մը փոխանցելու խոստումով:

Կոչը լայն արձագանգ գտաւ ու կազմուեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, որ ահա յիսուն տարիէ ի վեր կը մնայ ու կը պահէ իր սկզբնական նկարագիրը աշխարհի չորս ծագերուն: Երիտասարդութիւնը կը սիրէ շարժումը, խանդավառութիւնը եւ կարենալ շնչելու համար՝ յաղթանակի մը յոյսը անհրաժեշտ է իրեն: Իր ներկայութեամբ ու հմայքով օր ըստ օրէ ծաւալելով՝ այս Միութիւնը տուաւ այդ հնարաւորութիւնները անոր, բազմաթիւ մարզերու մէջ, գործունէութեան նախատեսուած ծրագրին վրայ գումարելով նոր ժամանակներէն բխած նոր ճիւղեր, նոր ոճեր:

Մարզանք, մրցում, մրցանակ, իլլումաճ բաժակներ, բանակում՝ երկիրէ երկիր, ոգետորութիւն՝ հոգիէ հոգի, իր ներկայութեան, իր անցքէն ետք՝ միշտ երիտասարդութիւն: Այդ ամէնուն մշտանորոգ աղբիւրն է, այդ ամէնքն է այս Միութիւնը եւ հայ միութիւն մը ըլլալուն՝ աւելին է այդ ամէնքէն: Պարզ արձանագրութեամբ անդամ չեն ըլլար անոնք, ովստը պայման է եւ ուխտագիրին առաջին յօդուածը կազմուած է մեզի համար վիճական ամբողջութիւն ունեցող «Ազգիս ու հայրենիքիս» վրայ:

Մարմին մարզելու սոսկական նպատակ մը չհետապնդեց այս Միութիւնը, եթէ այդպէս ըլլար՝ հաւանաբար կարճ ժամանակի մէջ խամբէր, վերջանար. ըրաւ աւելին, իւրաքանչիւր անդամի մէջ նոյն ատեն մշակեց հաւաքական եսի մը պատ-

կանելու հպարտութիւնը, «Ազգիս ու հայրենիքիս» հաւատարի՛մ սնալու զօրաւոր կիրք մը:

Այդ ոգին յաճախ դուրս կը բերէ ուխտադիր երիտասարդները ակունքներու զուարթ շրջանակէն կամ խաղավայրերու աղմկայոյզ մթնոլորտէն ու կը մղէ ուրիշ ծառայութիւններու: Խռովիչ է անոնց երեւոյթը, երբ վաստակաւոր սիրելիի մը դազադին առջեւ տեսնէ զիրենք, երբ դիմաւորեն արժանաւոր մը կամ ազգային երգի մը կշռութաւոր թնդիւնին տակ՝ երբ գետիւնը թնդացնելով անցնին լայն պողոտաներէ, իրենց վրայ յառած հիասքանչ ակնարկներուն հիացումը բազմապատկելով:

Ժողովուրդը ինչպե՛ս գիտէ գիրկ բանալ, հիանալ, փայփայել՝ իր հոգիէն բան մը անձնաւորած մարդերը, շարժումները:

Անցնող տասնամեակին՝ իր անունով բեմ եկած քանի՛ արարած բնաջնջեց մեր ժողովուրդը, իր սաղմին մէջ խեղդեց քանի անշահ շարժում, բայց ահա կը տօնէ յիսնամեակը մէկուն, որ իր սուգին ու խնդութեան մէջ ներկայ եղաւ միշտ, ցեղին լաւագոյն աւանդներով թրծուեցաւ եւ շարունակ բարձրանալով՝ բարձրացուց իր պատիւը:

Ճամբայ ելած ենք ազգովին եւ մեր ճամբան վախճան չունի:

Եւ այդ անվախճան ճանապարհին վրայ որքա՛ն պէտք են մեզի իրենց մշակած մարմնին առընթեր հաւատարմութեան գիր ստորագրած այս կայտառ տղաքը, որքա՛ն...

**ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ**

# Հ.Մ.Ը.Մ.Ը ՅԱՂԹԵԼ ՍՈՐՎԵՑՈՒՑ ՄԵԶԻ

Հ.Մ.Ը.Մ.ի ակո՛ւմբը... ամբողջ պատանութիւնս անցած է անոր եւ Հայկազեան վարժարանին միջեւ: Մէկը լոյս ջամբեց ինձի, միւսը՝ կամք: Հայ ապրելու կամքն ու հպարտութիւնը:

Մեզ, խեղճ հայ տղաքս, մեծամասնութեամբ որբ, մե՛զ, արտոր ու ջարդ տեսած յուսահատ տղաքս մարդ դարձուց: Հ.Մ.Ը.Մ.ն է որ մեզ իրարու միացուց, անհատներէ խումբ կազմեց: Սորվեցուց թէ մենք ոչինչով պակաս էինք ուրիշներէ, ֆրանսական բանակի կամ արաբական որեւէ ուրիշ խումբէ:

Հ.Մ.Ը.Մ.ը մեզի սորվեցուց ա՛յն ինչ որ ամէնէն աւելի կը պակսէր մեզի. անհատականութիւնները վերածել հաւաքականութեան: Հ.Մ.Ը.Մ.ը յաղթել սորվեցուց մեզի: Օ՛, ֆութպոլի մեր հրաշալի խումբերը: Հրաշալի այդ խաղընկերներս. Ազատը, Շաւարշը, Գաբրիւնեան եղբայրները, Վաղինակը, չոլախ Յակոբը: Իրենց օրապահիկը շահելու համար օրական տասը ժամ կ'աշխատէին, կօշկակարի աշկերտ կամ դերձակի: Համեստ, ընկերասէր, հեզ հայ տղաք: Եւ որոնք սակայն առիւծներու կը վերածուէին դաշտին վրայ: Օ՛, այդ լաւ տղաքը, այդ լա՛ւ օրերը:

...Աշխարհը քառակուսի չէ, չի ճգմեր քեզ ամէն վայրկեան, այլ իսկապէս կ'որ է ան եւ անոր մէջ ամէն ինչ հաճոյք է:

Ֆութպոլի կ'որ գնդակին պէս:

Ու ես ի՛նչ լաւ կը խաղայի ֆութպոլ, հո՛ն, արեւելեան մեծ քաղաքին մէջ՝ Հալէպ, Հ.Մ.Ը.Մ.ի զինանշանը շապիկիս վրայ: Ի՛նչ գինովութիւն էր. զիշերները չէի քնանար եւ ցերեկները կ'ապրէի անոր համար: Ո՛չ մէկ նպատակ այնքան շողշողուն էր, ո՛չ մէկ յաղթանակ այնքան փափաքուած:

ԿԱՐՕ ՓՕԼԱՏԵԱՆ

# ԱՐԻ ՈՒ ԱՌԱՔԻՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

...Ուրիշ շատ մը միութիւններէ աւելի նուիրական է Հ.Մ.Ը.Մ.ին կոչումին եւ կարեւոր՝ անոր կատարելիք դերը: Անիկա նորահաս հայ սերունդին կազմակերպութիւնն է: Միակը իր տեսակին մէջ, որ կը ձգտի վաղուան Հայը պատրաստել այսօրուան Հայկակներէն: Որ կ'աշխատի անոնց ջամբել՝ հայրենասիրականին միացած ֆիզիքական, բարոյական ու հոգեկան առողջ դաստիարակութիւն: Եւ որ կը հանդիսանայ անոնց ուղեցոյցը դպրոցէն դուրս, կեանքի մէջ, ուր այնքան առատ են խայծերն ու փորձութիւնները եւ այնքա՛ն այլասերող, այնպէ՛ս սպաննիչ:

...Որքան ալ ֆիզիքական կրթութիւն ջամբելու մասնայատկութեամբ բնորոշուի այս կազմակերպութիւնը առաւելապէս եւ առաջին ակնարկով, այնուամենայնիւ մենք անոր վրայ նայած ենք իբրեւ գերազանցապէս հայապաշտ կազմակերպութիւն մը, որ ամէն բանէ առաջ պիտի ձգտի վաղուան հայրենասէր Հայը կերտել իրեն յանձնուած պատանիներէն: Ֆիզիքական կամ մարմնական կրթութիւնը ա՛յս առաջադրութեան քով կը մնայ երկրորդական. շատ-շատ կը քալէ անոր հետ կողք-կողքի, բայց առաջ չի կրնար անցնիլ, պէտք չէ որ անցնի: Չի բաւեր փողոցէն ու փողոցի փորձութիւններէն փրկել նորահաս երիտասարդը: Հարկ է փրկութեան այդ գործին ընկերացնել նաեւ զայն հայութեան համար մեծցնելու եւ Հայ Հայրենիքին համար պատրաստելու աշխատանքը: Եւ այս ուղղութեամբ անոր սիրցնել այն բոլոր առաքինութիւնները, որոնք մեր ցեղինն են, այն բոլոր արժէքները, որոնք ցեղի գոյութեան պատուանդանն ու տեսականացման ազդակները կը հանդիսանան եւ այն բոլոր սրբութիւնները, որոնք հայ ժողովուրդի երէկուան ոգորում-

ները, տառապանքներն ու յաջողութիւնները կը խորհրդանշեն եւ վաղուան նոր ու աւելի շքեղ յաղթանակներու հաւատքովը կը գօտեպնդեն մեզ:

Հ.Մ.Ը.Մ.ին, հայ ժողովուրդի արի ու առաքինի այս կազմակերպութեան կը նայինք մենք ա՛յս աչքով ու ա՛յս ականկալութիւններով:

**ԿԱՐՕ ԳԷՈՐԳԵԱՆ**

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՎԱՏԱՆԸ

«Հ.Մ.Ը.Մ.ականությունը» տիտղոս մըն է. պատուաբեր տիտղոս մը, համալսարանական տիտղոսի մը չափ արժեքատուր: Ինչ որ հայ պատանին կը սորվի Հ.Մ.Ը.Մ.ի մէջ, չի՛ կրնար սորվիլ ուրիշ որեւէ տեղ: Վեհանձնություն, ընկերասիրություն, հայու նախանձախնդրություն եւ մարդկային ու ընկերային այլ արժեքներ: Այս արժեքները կը դառնան հայ երիտասարդին վահանը կեանքի յոռի ազդեցություններուն դէմ, եւ երբ ան չափահաս կը դառնայ, պատրաստ կ'ըլլայ կեանքը դիմագրաւելու եւ զայն վարելու ամենայն պարկեշտութեամբ եւ ձեռնհասութեամբ: Քանի՛-քանի անգամներ ըսած ենք, երբ լսած ենք անհատի մը ժխտական մէկ արարքին մասին. «Չի՛ կրնար նոյն անձը ըլլալ. ան Հ.Մ.Ը.Մ.ական է»: Խոր համոզումով եւ հաւատքով ըսած ենք այդ:

Տիտղոսէն անդին, Հ.Մ.Ը.Մ.ը ապահովագրություն մըն է, զոր ծնողներ կը դնեն իրենց զաւակներուն ապագան ապահովելու համար: Դարձեալ, քանիցս ըսած ենք, երբ լսած ենք մոլորեալ երիտասարդի մը մասին, մեր խօսքը ուղղելով ծնողքին. «Եթէ զաւակդ Հ.Մ.Ը.Մ.ական արձանագրած ըլլայիր, այսպէս չէր ըլլար»:

Ասոնք վերացական գաղափարներ չեն, այլ՝ շօշափելի իրողություններ:

Մարզիկ թէ սկաուտ, աղջիկ թէ մանչ, Հ.Մ.Ը.Մ.ի լայն գիրկին մէջ մեր պատանիներն ու երիտասարդները կը սորվին իրենցմէ մեծերուն հնազանդելու արժեքը:

**ՌԻԹԱ ՈՐԲԵՐԵԱՆ**



# ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԷՆ ԾՆԱԾ, ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՆԱՄԱՐ

Այն սակաւաթիւ կազմակերպութիւններէն մէկն է Հ.Մ.Ը.Մ.ը, որ չի ճանչնար տարիք ու ժամանակ: Կը պահէ՛ մշտանորոգ իր Ուժը եւ համատարած իր Հմայքը:

Ո՞ր փնտռել այն գաղտնիքը, որ Հ.Մ.Ը.Մ.ական շարժումը կը վերածէ ազգային հպարտութեան, եւ անոր յաղթանակներուն կու տայ համահայկական տարողութիւն:

Սկաւումները - պիտի բացագանչեն ոմանք, արի՛ եւ արեւնո՛յշ, որոնք իրենց վեհապանծ դրօշին եւ փողերախումբին առաջնորդութեամբ երբ կը տողանցեն կանոնապահ ու խրոխտ շարքերով, ոչ միայն հայ ժողովուրդը՝ ուրախութեան արցունքը աչքին կը ծափողջունէ «Հայաստանի այդ զինուորները», այլեւ բարեւի կը կենան օտար զօրավարներ, բարձրաստիճան սկաւտապետներ՝ տեսիլքէն խանդավար:

Մարզիկները, մարզախումբերը - պիտի աւելցնեն ուրիշներ - որոնց տարած յաղթանակը դաշտին վրայ, խլած բաժակը մրցակիցէն ցնծութեան այնպիսի յո՛րդ ալիքով կ'ողողեն հայոց սրտերն ու երդիքները, որ կարծես ճակատամարտ մը շահած ըլլայ արմէնագարմ մեր ժողովուրդը:

Ակումբները, մարզադաշտները հապա, Սփիւռքի տարածքին, որոնք պատահ մը հայրենի հող կը դառնան Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական ու գաղափարական դրօշին տակ... Առա՛նց մոռնալու, ծնունդի օրէն իսկ, Սասունցի Դաւիթին պէս, մէկ տարիէն մէկ դարով մեծցող արեւաշուի այս Մանուկին, երիտասարդական հրեղէ՛ն այս կազմակերպութեան՝ Անկախ Հայրենիքի պահպանման նուիրաբերած քրտինքի եւ՝ արինի՛ բաժինը, որ դրամագլուխ է անմաշ եւ անսպառ - պիտի մատուցեն այլ ճշմարտախօսներ:

Ո՞վ կ'ուրանայ այս հաստատումները: Ո՞վ պիտի առարկէ Հ.Մ.Ը.Մ.ի այս նուաճումներուն դէմ:

... Այս բոլորը կը փաստեն որ՝

Հ.Մ.Ը.Մ.-ի ուխտն ու Երդումը հանդիսաւոր օրերու պատշաճ արտայայտութիւններ չեն լոկ, այլ անհատական եւ հաւաքական կեանքի մնայուն ուղեգիծ:

Հ.Մ.Ը.Մ. ծնած է ի՛ր ժողովուրդէն, ի՛ր ժողովուրդին համար: Կ'ապրի այդ նոյն ժողովուրդին հետ ու կը պայքարի անոր կողքին՝ ցկատարած աշխարհի:

Հաւատարիմ՝ Աստուծոյ եւ իր նշանաբանին, ծառայ՝ Ազգին եւ Հայրենիքին՝

Չի՛ մեռնիր, չի՛ տկարանար, ինչ ալ ըլլան ստեղծուած կացութիւնները, որքան ալ բիրտ ըլլան փոթորիկները:

Ամո՛ւր են արմատները, եւ կ'աճի՛, կ'ուռճանա՛յ անընդհա՛տ, աշխարհի չորս ծագերուն:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՐԴ**

# ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՄԲ

Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարականը միայն մարզական չէ, սկաուտական չէ, այլ ԱՄԷՆ ԻՆՉ է, հայութեան ամբողջութիւնը, հայութեան իտէալները, հայութեան ազատութեան հետ կապւած ամբողջ յոյսեր, հայութեան պայքարի ամբողջ իմաստը: Արտասահմանի մէջ այն բոլոր պատանիներն ու երիտասարդները, որոնք հետագային քաղաքական յանձնառութիւններու տակ կը մտնեն, Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ է որ կը ըստանան իրենց ազգային հիմնական դաստիարակութիւնը: Իրենց կը փոխանցուի ազգային տեսլականի ամբողջ էութիւնը եւ այս յոյսով է որ կու գան յանձնառու հայեր դառնալու քաղաքական մեր կազմակերպութիւններուն մէջ: Եւ Հայաստանի մէջ ալ այս մէկը կա՛յ: Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստանի մէջ այդ հիմնական առաքելութիւնը պիտի ունենայ իր մարզական, սկաուտական աշխատանքներուն զուգահեռ՝ Հայաստանի մեր երիտասարդ սերունդներուն փոխանցելով հայ ժողովուրդի հիմնական գաղափարները, հայ ժողովուրդի իրաւունքներու պահանջատիրութեան հասկացողութիւնը՝ ՄԷԿ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ, ՄԷԿ ԱԶԳԻ, ՄԷԿ ՀԱՅՐԵՆԻՔԻ հիմնական հասկացողութիւնը, եւ այս մէկը եթէ յաջողի, եւ պէ՛տք է յաջողի, այս պարագային Հ.Մ.Ը.Մ.ը կրնայ ըսել, որ մենք մեր պատմական առաքելութիւնը կատարելու ճամբուն մէջ ենք, մենք մեր պատմական առաքելութիւնը ստանձնած ենք եւ Հայրենիքի նկատմամբ մեր հիմնական տուրքը կը վճարենք ահաւասիկ:

**ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԽԵԱՆ**

## ՆՊԱՐՏԱՌ-ԻՌ ՅԻՄՆԱՄԵԱԿ ՄԸ

1968-ին կը զուգադիպին նշանակալից երկու յիսնամեակներ: Առաջինը, անշուշտ, յիսնամեակն է Հայաստանի Մայիսեան Անկախութեան եւ Հայաստանի Հանրապետութեան հաստատման. թուական մը որ՝ շքեղօրէն կը թեւածէ հայոց բովանդակ պատմութեան վրայ, զայն լեցնելով ու հարստացնելով, նոր իմաստ եւ բովանդակութիւն տալով անոր: Հայ ժողովուրդի անսակարկ կերպով թափած սեփական արիւնով ձեռք բերուած Արդար Վրէժի, Յաղթանակի, Ազգային Անկախութեան եւ Վերածննդեան թուականն է ան,- 1918 Մայիսի 28-ը:

Բայց 1968-ը յիսնամեակն է նաեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հիմնադրութեան: Ու պարագայական չէ կարծես զուգադիպութիւնը այս երկու գեղեցիկ թուականներուն: Մինչ անդին, Արարատեան դաշտի ամբողջ տարածքին, Հայաստանի ժողովուրդը իր զաւակներէն լաւագոյնները կը գոհաբերէր ազգային գոյատեւման եւ ազատ ու անկաշկանդ ապրելու ի խնդիր, հոն, Պոլսոյ մէջ, որ գլխաւոր կեդրոնը կը հանդիսանար արեւմտահայութեան վարչական թէ հոգեմտաւոր կեանքին, հայ ժողովուրդի ոչ նուազ արժանաւոր զաւակները՝ Շաւարշ Քրիսեանները, Գրիգոր Յակոբեաններն ու Ատրումիները, ազգային գոյատեւման ու վերածննդեան միեւնոյն ապրումներով առաջնորդուած, Մեծ Եղեռնէն ճողոպրած բեկորները ի մի կը հաւաքէին՝ պատանեկան ու երիտասարդական կազմակերպուած բանակի մը վերածելու համար գանոնք: Նորաստեղծ Հայաստանին համար խանդավառ նրվիրեալներու բանակ էր պէտք, երիտասարդական խանդով ու ազգային գիտակցութեամբ լեցուած նոր սերունդ մըն էր անհրաժեշտ՝ անցնող տարիներու մահագուշակ իրադարձութիւններէն ետք հայ ժողովուրդի վերապրումին ու վերածնունդին

լաւագոյնս սատարելու համար. սերունդ մը մարզիկներու եւ արհմերու, որոնք գիտնային նախ՝ ԲԱՐՉՐԱՆԱԼ հոգեպէս ու մարմնապէս, ապա նաեւ ԲԱՐՉՐԱՅՆԵԼՈՒ համար իրենց ազգակիցները՝ իրենց կարգին:

Ու հպարտառիթ այս կրկնակ յիսնամեակի օրերուն, Հ.Մ.-Ը.Մ.ի սկաուտական այս բանակավայրին մէջ, հաճոյք է եւ պատիւ միանգամայն՝ հաստատել, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը հաւատարիմ մնաց երջանկայիշատակ թուաբանագէտի յղացած վսեմ նշանաբանին «ԲԱՐՉՐԱՅԻՐ-ԲԱՐՉՐԱՅՈՒՐ»ին: Նշանաբան մը, որուն ի լուր միջազգային սկաուտական շարժման հիմնադիր եւ ղեկավար Պէյտըն Փաուըլ հետագային պիտի ափսոսար իր «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՄՏ» տարազը արդէն իսկ նուիրականացած ըլլալուն համար: Մարզական եւ սկաուտական նորաստեղծ կազմակերպութիւնը այնքան հարազատ էր մեր ժողովուրդի ֆիզիքական թէ հոգեկան ապրումներուն, մարզուելու, կազմակերպուելու, բառերուն ամբողջական իմաստով՝ ԲԱՐՉՐԱՆԱԼՈՒ եւ ԲԱՐՉՐԱՅՆԵԼՈՒ ձգտումը այնքան խորապէս կը համապատասխանէր հայութեան եւ հոգեբնախօսական ենթագիտակցութեան, եւ մեր ժողովուրդի քաղաքական դժուարին պայմաններուն մէջ՝ տեսելու եւ տոկալու ինքնամուղ տենչին, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը արագօրէն ուռճացաւ, խոր արմատ ձգեց հայկական բոլոր օճախներուն մէջ, դառնալու համար այնպիսի մէկ կազմակերպութիւն, ազգապահպանման, ազգային հպարտանքի եւ ազգային դաստիարակութեան այնպիսի մէկ ազդակ, որ շատ դժուար պիտի ըլլար այսօր մտաբերել հայկական գաղթաշխարհը՝ զուրկ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայութենէն.- դժուար եւ տխուր միանգամայն: Մասնաւորաբար Միջին Արեւելքի մեր գաղութներուն մէջ, տասնամեակներէ ի վեր, ան ազգային արդար հպարտանքի բազմավաստակ հաստատութիւն է, ամբողջ սերունդներ դաստիարակած ու տակաւին դաստիարակող՝ մարմնակրթանքի եւ սկաուտական շարժման շինիչ եւ ամրացնող

իրականութեամբ, եւ աւելին՝ ազգային առողջ ոգիով եւ հայեցի հարազատ գաղափարաբանութեամբ: Մարմնի եւ ոգիի հայա-կերտ դարբնոց դարձած է ան, ու պիտի շարունակէ մնալ:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական այս բանակում-հանդէսին մէջ, տեղը չէ սակայն ամբողջական ուսումնասիրութեան եւ գնահատանքի ենթարկելու բովանդակ դերն ու բազմապիսի յաջողութիւնները, զորս արձանագրած է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, իր յիսուն տարիներուն ընթացքին: Տեղը չէ վերջիշելու եւ վերահաստատելու այն անօրինակ խանդավառութիւնը, ազգային հպարտանքի եւ ցնծութեան այն բազմաթիւ պահերն ու առիթները, զորս հանդիսացած են Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային հանդիպումներն ու սկաուտական բանակումները, մարզական կեանքին մէջ արձանագրած յաջողութիւններն ու յաղթանակները, մայր հայրենիքի ֆիզիքական ներկայութենէն զրկուած ամբողջ սերունդներու մօտ ստորակայութեան հասկնալի բարդոյթը ինքնագիտակցութեան եւ արդար հպարտութեան ալիքի մը վերածելով:

Տեղն է սակայն, անկասկած, որ այստեղ հաւաքուած Հ.Մ.Ը.Մ.ականներն ու մանաւանդ հայ սկաուտները պահ մը ինքնամփոփուին, ու յիսնամեակի հանդիսատր առիթով անգամ մը եւս անձնապէս ու հաւաքաբար մտածեն իրենց պարտականութիւններուն ու պարտաւորութիւններուն, մէկ խօսքով՝ իրենց կոչումին մասին:

Կրկնակ դեր մըն է որ վիճակուած է Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտին: Կոչումին եւ ժառանգութեանց երկուութիւն մը, որ անխուսափելիօրէն հայ սկաուտը կը տարբերէ ազատ ու ինքնիշխան հայրենիքի մը բարիքները վայելող այլացեղ սկաուտներէն: Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտը մէկ մասնիկն է, անկասկած, սկաուտական միջազգային մեծ ընտանիքին, բայց նաեւ, իր ծնունդով եւ պապենական ապրումներով իսկ, հարազատ մէկ անդամն է նաեւ իր քաղաքական իրաւունքներուն եւ պահանջներուն գիտակից եւ անոնց իրականացման ձգտող հայ ժողովուրդին:

Նախկին Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտ մը՝ ինքս ալ, միշտ հրպարտ եմ եղած այդ հանգամանքով, լիովին գիտակցելով որ մաքուր, շինիչ եւ վեհացնող շարժում մըն է Պէյտրն Փաուըլի հիմնած կազմակերպութիւնը: Շարժում մը, որ համամարդկային է ու մարդկային էապէս, որ չի ճանչնար սահման, որ կ'անտեսէ ցեղային, պետական թէ դաւանական ամէն տարբերութիւն: Անիկա կը խօսի Մարդ էակին միայն, կը քաջալերէ ամէնէն ազնուագոյնները անոր զգացումներուն ու կարելութիւններուն, կը ձգտի անոր ֆիզիքական ու բարոյական մաքրութեան եւ վերացման: Միեւնոյն ժամանակ, կը դրուատէ ու կը հաստատէ կազմակերպական կեանքի եւ յաջողութեան համար այնքան անհրաժեշտ՝ կարգապահութիւնն ու, օտար բայց թերեւս անելի ամբողջական կերպով արտայայտիչ բառով՝ տիսիփիւնը, յարգանքն ու հնազանդութիւնը պետին, ու այս վերջինին անսահման նուիրումութիւնը իր ենթականերուն: Ազնուացնող, մարդկայնացնող բան մը կայ սկաուտական իրականութեան մէջ, որուն ամբողջական բացատրութիւնը եւ վերլուծումը ներկայիս տալու յուսկնութիւնը չեմ կրնար ունենալ: Մեր սկաուտները լաւապէս ծանօթ են այս բոլորին՝ իրենց ստացած դաստիարակութեամբ, իրենց իսկ ապրած հաւաքական կեանքով: Միշտ լաւին ու բարիին ձգտիլը, եւ ամէն օգնութեան ու զոհաբերութեան «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ» ըլլալը առիւնքնող գեղեցկութիւններ են, որոնց գիտակցիլն ու իրականացնելու ամէնօրեայ ճիգը հպարտութեան առիթ միայն կրնան ըլլալ բոլոր սկաուտներուն համար:

Բայց նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտը ամէն բանէ առաջ ՀԱՅ է, եւ հայութեան ամենահարազատ բազկերակին ականջալուր: Իբրեւ հայ, ան առանձին պարտականութիւններ ու պարտաւորութիւններ ունի մանաւանդ ի՛ր ժողովուրդին նկատմամբ, իր տառապած բայց միշտ տոկացած, յաճախ կոտորակուած բայց միշտ վերածնած, անիրաւուած բայց հինէն եկող իր ազնուութիւնն ու ազնուականութիւնը իր հոգիէն միշտ անբաժան պահած հա՛յ ժողովուրդին նկատմամբ: Անոր

անսակարկ կերպով ծառայելը, անոր համար անդուլ կերպով աշխատիլն ու տքնիլը, ի պահանջել հարկին նաեւ անոր համար գոհաբերուիլը շքեղագոյն ձգտումներն ու ապրումները պէտք է կազմեն, ու կը կազմեն, Հ.Մ.Ը.Մ.ական իրաքանչիւր սկաուտի: Սկաուտական շարքերուն մէջ թէ հետագային՝ կեանքի ամէնօրեայ թաւալումին ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ականն ու հայ սկաուտը իրենցը պէտք է ընեն ապրումները հայութեան, գործեն անոր բարօրութեան եւ ազգային-քաղաքական արդար իրաւունքներու իրականացման համար, սկաուտական իրականութեան ազնուացնող ապրումները կիրարկեն անոր ծառայութեան գծով, ու միշտ հաւատարիմ իրենց նշանաբանին, ջանան տեսարար ԲԱՐՉՐԱՆԱԼ, բայց ԲԱՐՉՐԱՅՆԵԼ մանաւանդ:

Ծանր է այս կրկնակ կոչումը թերեւ, բայց հպարտառիթ: Ծանր է հայութեան եւ անոր ծառայելու՝ կոչումը ինքնին, բայց շքեղօրէն գեղեցիկ: Ես կը մաղթեմ, որ մեր սկաուտները, հաւատարիմ միջազգային իրենց շարժման նշանաբանին՝ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ ըլլան նուիրուելու ու ծառայելու, բայց հայ տղու եւ հայ մարդու իրենց առհասկան կոչումին գիտակից՝ ամէն բանէ առաջ հայ ժողովուրդին, տեսարար ԲԱՐՉՐԱՅՆԵԼՈՒ համար զայն, իրենց իսկ անձնական ԲԱՐՉՐԱՅՄԱՆ ընդմէջէն:

**ՀՐԱԶ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ**



## «ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶԻՆՈՒՐԱԳՐՈՒԹԻՒՆ»

Եթէ բան մը պէտք է փոխանցել Հ.Մ.Ը.Մ.ականներուն, ուր ալ գտնուին անոնք, անցեալի գործունէութիւններէն ծնունդ առնող հպարտութիւնը չէ, անոնք որ անցեալի յաղթանակներուն վրայ կը նային հրճուանքով ու կը գոհանան այդքանով, իրենք զիրենք եւ իրենց կազմակերպութիւնը քուն կը մտցնեն, որ կրնայ նաեւ, ժամանակի թաւալումին հետ, մահաքունի վերածուիլ:

Անհրաժեշտ է բաց աչքերով նայիլ ներկային եւ նախատեսել ապագան, կարենալ առաջնորդելու համար հայ ժողովուրդի զանգուածները Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան առաջին օրէն ի վեր իր նշանաբանը եղող ուղիին՝ «ԲԱՐՉՐԱՅԻՐ- ԲԱՐՉ-ՐԱՅՈՒՐ»ին:

Թող ո՛չ ոք նոյնիսկ բոլոր մը մոռնայ իրականութիւնները, դրական ու բացասական իրականութիւնները, որոնք կը շրջապատեն մեզ, եւ դեռ երկար ատեն պիտի շարունակեն դերակատար ըլլալ մեր կեանքէն ներս: Պայմաններուն աննպաստ ըլլալուն մատնանշումը եւ այդ մատնանշումին հետեւանքով յառաջացած կրատրական կեցուածքները, «այսպէս ալ կ'ըլլայ, այնպէս ալ կ'ըլլայ»ի հոգեբանութեամբ մօտեցումները, մեր նկարագիրին խորթ համակերպութիւններն են, որոնք մեզ կրնան մահուան առաջնորդել եւ ոչ թէ շրջապատող պայմաններուն դժուարութիւնները կամ աննպաստ ըլլալը: Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդի օրուան պայմանները նպաստաւոր չէին իր զարգացումին, այլ՝ զինք հիմնադրողներուն վճռականութիւնը եւ սեփական ժողովուրդին տեսլականը, որ Չաւէն Պատրիարքի խօսքերուն մէջ կը ձեւաւորուէր յստակութեամբ: «Բարոյական

զինուորագրութիւն» մը պէտք է ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ ծառայողներուն հիմնական նպատակը, մտասուեռո՛ւմը:

Եւ թող ո՛չ որ մտածէ, թէ Սփիւռքը յաիտենական երեւոյթ կամ իրողութիւն մը պիտի ըլլայ: Սփիւռքը կամ պիտի լուծուի՝ հայ ժողովուրդի կամքին քայքայումովն ու իր զաւակներուն ձուլումովը օտարներուն մէջ, եւ կամ ալ Սփիւռք ու Հայաստան պիտի գտնեն զիրար, պիտի տեսնեն, եւ ցոյց պիտի տան աշխարհին, թէ մէկ մարմին են իրենք, մէկ հոգի են իրենք, մէկ մտածողութիւն են իրենք, հակառակ բոլոր երեւոյթներուն: Եւ թող ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ական չմոռնայ, թէ անհրաժեշտ է, որ ինք «Կազմակերպուի, ազնուանայ, որքան որ կրնայ լեցնել իր սիրտն ու միտքը, որովհետեւ ինք պիտի ըլլայ վաղուան սրբազան հայրենիքին հրաշակերտ տաճարին սիւներէն մէկը»:

**ԲԱԲԳԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ**

## ՄԷԿ ԸՆԴՏԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿ

Հ.Մ.Ը.Մ.ը հայկական մեր իրականութեան մէջ համահայկական ամենամեծ կառոյցն է, եւ Հ.Մ.Ը.Մ.ը այս առումով մեծ անելիք ունի եւ այն ինչ որ կարող է լինել մեր բոլորիս, ամբողջ հայ ժողովրդի, բոլոր հատուածների, բոլոր խմբակցութիւնների, բոլոր կազմակերպութիւնների միասնական նպատակը պէտք է լինի հայկական պետականութեան միջոցով իրականացնել նրա վերջին երազանքները, իրականացնել մեր ազգային նպատակները, ջանք ճիգ թափել ազգային միասնականութեանը, ամէն ինչ հիմնուած մեր ազգային պետականութեան վրայ եւ միայն այսպէս է որ մենք կարող ենք գործել միասին, եթէ հետապնդում ենք ա՛յս նպատակը: Համահայկական կազմակերպութեան համար մասնատրաբար, բայց նաեւ ընդհանրապէս ամբողջ հայ ժողովուրդի համար միացնող շաղախը կարող է լինել երկու բան՝ Հայ Դատը եւ Հայկական Պետականութիւնը: Սա այն սրբութիւններն են, որ ուղղակի կամ անուղղակի, գիտակցաբար կամ անգիտակցաբար, պէտք չէ շեղուել այդ հիմնական նպատակից, պէտք է լինի միշտ նպատակասլաց, որ մենք ունինք երկու թիրախ՝ Հայ Դատ եւ Հայաստան, Հայաստանի Հանրապետութիւն եւ Հայկական Պետականութիւն: Այս երկուսով է, որ պէտք է մենք կարողանանք վերածուել ազգի եւ այդ ազգը տանենք բարձունքների: Բարձրացէ՛ք եւ բարձրացուցէ՛ք մեր ազգը:

**ՀՐԱՆԴ ՍԱՐԳԱՐԵԱՆ**

# ՆԱՅԿԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ՎԱՌ ՓԱՐՈՍԸ

Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր իրագործումներուն բարոյական ու նիւթական կռուանը մնաց միշտ մեր ժողովուրդին սիրտն ու հոգին, քրտինքն ու քսակը, առանց պետական որեւէ օժանդակութեան: Եւ հոս պէտք է փնտռել նաեւ Հ.Մ.Ը.Մ.- Հայութիւն կապւածութեան գերագոյն գաղտնիքը: Ժողովուրդը գուրգուրաց Հ.Մ.Ը.Մ.ին վրայ եւ պահանջեց միշտ հայարտութիւն ներշնչող արարքներ՝ Հ.Մ.Ը.Մ.էն:

...Հ.Մ.Ը.Մ.ը ներկայ ժամանակներու հայ իրականութեան մէջ կը շարունակէ մնալ իբրեւ մեր գաղութները իրարու զօղող զօրաւորագոյն կազմակերպութիւն, իր ամէն տեսակի գործունէութիւններով ու խոյանքներով, նուիրեալներու փաղանգներով:

Հ.Մ.Ը.Մ.ը փարոս մըն էր, որուն կը ձգտէին նաւաբեկման վտանգին ենթակայ մեր գաղութները՝ ժամանակին: Այսօր եւս, ան կը շարունակէ հայ ինքնութեան, հայկական լինելութեան տագնապը ապրող ամէն հայու հոգեկան աչքերուն դիմաց վառ փարոս մնալ, այլոց կարգին: Գուրգուրանք այս փարոսին վրայ, եւ մաղթենք որ իր հարիւրամեակը տօնուի ազգային շատ ատելի դրական եւ գօտեպնդիչ պայմաններու մէջ:

**ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒՐՖԱԼԵԱՆ**

## ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԲԱՌ

Ինչքան յատկանշական է երկու բառով այս նշանաբանը: Մէկը՝ բարձրանալ-ցեղին տարերային անցեալը: Միւրը՝ տենչը, անգո՛ւսպ ձգտումը, ապագային ի խնդիր:

«Բարձրացի՛ր» ի հարկէ: Բարձրացէ՛ք եւ դո՛ւք, տղաք: Բարձրացէ՛ք, որովհետեւ դուք ամէնէն բեղմնատու ժառանգորդներն էք ժողովուրդի մը, որ ելլել ու նետուիլ միայն գիտցաւ: Բարձրացէ՛ք, որովհետեւ դուք անտրտունջ, բայց անվնաս գաւաակներն էք այն դարաւոր սերունդներուն, որոնց բովանդակ կեանքը բարձրացումը միայն եղաւ: Բարձրացէ՛ք, որովհետեւ ձեր ցեղը,- հայ ցեղը- երբեք իջնել չփորձեց, բայց խոյանալ երազեց:

...Ու բարձրացուցէ՛ք, տղաք: Բարձրացուցէ՛ք, մեր այս զգեստնումի օրերուն, սերո՛ւնդը, որ պիտի գայ յեղակարծ ամայութիւն մը լրացնել: Բարձրացուցէ՛ք հոգին, ձեր հոգին, որ հարազատ արտայայտութիւնն է ըլլալու մեզմէ առաջ նետուող կամ ինկողներուն, եւ բարձրացուցէ՛ք մեր արիւնտ, բզքտուն, բայց նաշխուն դրօշը, որուն անունով որպիսի՛ զոհաբերութիւններ արձանագրուեցան...

Այսպէ՛ս՝ բարձրանալով ու բարձրացնելով: Այսպէս՝ եւ կեանքին մէջ- հպա՛րտ՝ ինչպէս հայ ժողովուրդը տառապանքի իր անագորոյն ապրումի օրերուն, բարձր ճակտով՝ ինչպէս վայել է ձեր ցեղին թռչող մտածումին. հատո՛ւ եւ առոյգ, անխորտակելի՛ հաւատքով՝ յանուն նոր ստեղծագործութիւններու ու նոր բռնկումներու, եւ ուռած կուրծքով, որովհետեւ - մի՛ սոռնաք - որ անոնց տակ ձեր եւ մեր հայրենիքն է որ դեռ կը խլրտայ...

Եւ ամէն անգամ որ ձեր կոչումին երդումը ընէք, յիշեցէ՛ք, որ այդ երկու բառերուն մէջ Հայրենիքին համար ձեր ապագայ ստեղծագործութիւններու խոստումը կոչուած էք դնելու:

**ԿԱՐՕ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ**

## «ՏՂՈՑՄԷ ՊԷՏՔ Է ՄԱՐԴԵՐ ԿԵՐՏԵԼ»

Հ.Մ.Ը.Մ.ը ծնունդ առած է ի մի գալովը բազմաթիւ մարգական միութիւններու:

Ան այժմ, առաւել քան քառորդ դարու յարատեւ նուիրումով՝ ուճռացած, բազմացած եւ իր ոգեկան արմատները խորացուցած գաղթահայ աշխարհի ամէն կողմը, գոհունակ եւ հպարտ, երբեմն ետ կը նայի, ակնարկ մը նետելու իր ցարդ կատարած օգտաշատ գործին վրայ: Բայց որովհետեւ Ան դեռ հսկայ աշխատանք մը առաջադրած է իրեն, իբրեւ բարի հայր կը հրճուի, երբ ընտանիքէն ներս նոր անդամներ ալ կը մտնեն, երաշխիք մը եւս բերելու կատարելի աշխատանքին արդիւնաբերութեան վերաբերմամբ:

Հ.Մ.Ը.Մ.ը ծնունդ առած է պահանջքի մը իբրեւ հետեւանք, եւ ոչ թէ իբրեւ պերճանք մը: Առաջին Համաշխարհային Պատերազմի վերջաւորութեան, հայ ազգը կ'ապրէր իր ամենադժնդակ եւ ճակատագրական օրերը: Որբերու, այրիներու, հիւանդներու եւ յուսալքուածներու բանակ մը, նիւթական եւ բարոյական լայն օժանդակութեան կարօտ, կը սպասէր օգնութեան: Պահանջքը մեծ էր, իսկ օգնելու սահմանուած ուժերը աննշան էին՝ համեմատաբար կարիքին: Ահա, այդ օրերուն է, որ ծնունդ առաւ Հ.Մ.Ը.Մ.ը, որ կոչուած էր նախախնամական դեր կատարելու այդ ընդհանուր դժբախտութեան մէջ: Կը տեսնուի ուրեմն, որ Հ.Մ.Ը.Մ.ը լոկ մարգական միութիւն մը չէ, իր անդամներուն բացօթեայ հաճելի պահեր ընծայելու սահմանուած, մարգական միութիւն մը ըլլալով հանդերձ: Հ.Մ.Ը.Մ.ը, առաջին մէկ օրէն, իր գործունէութեան իբր գլխաւոր նպատակակէտ նշանակեց երկսեռ հայութեան ֆիզիքական ու բարոյական կարիքներուն ընդառաջ երթալ եւ հայ երիտա-

սարդութեան գործին մէջ՝ առաջնակարգ դեր մը վերապահեց իրեն: Ան այդ նպատակը ցարդ կը հետապնդէ զովելի նախա-  
ձեռնութեամբ եւ արդիւնքով: Այժմ, Հ.Մ.Ը.Մ.ը իրեն նպատակ  
ընտրած է Սփիւռքի հայութեան պատանիներն ու երիտա-  
սարդները պատրաստել Հայրենիքին համար, պատրաստել  
այնպէս մը, որ վաղը զինք ընդունող հայրենիքը հպարտ զգայ,  
ազնիւ նկարագրի տէր, միտքով եւ հոգիով առողջ երիտա-  
սարդներով՝ իր քաղաքացիներուն թիւը ճոխացած տեսնելով:  
Ահա այսօր, եկած ենք մեր ուժին ամբողջ կշիռը տրամադրե-  
լու Մայր Միութեան, զլուխ հանելու համար այս նուիրական  
գործը:

Մենք, դաստիարակներս զիտենք սակայն, որ մեր ցանած  
հունտերը լաւագոյն ծիլեր կ'արձակեն այն ատեն միայն, երբ  
ի բնէ ազնիւ հողի մէջ դրուին: Ուրիշ խօսքով, Հ.Մ.Ը.Մ.ը իր  
առաջադրած նպատակը լաւագոյնս կրնայ իրագործել այն  
ատեն միայն, երբ իրեն անդամ մարզիկները, մեծ ու պզտիկ,  
իրենց ալ օժանդակութիւնը բերեն, ըլլալով գիտակից եւ լաւ  
մարզիկներ: Այդ վերջին պայմանը անհրաժեշտ է ու սակար-  
կութիւն չի վերցներ, եթէ ազնիւ ու նուիրական գործ մը զլուխ  
պիտի հանուի:

Մարզիկ բացատրութիւնը ինքնին իր մէջ ենթադրել կու տայ  
բարոյական, ֆիզքական եւ նոյնիսկ իմացական յատկութիւն-  
ներ: Թէ ինչպէս կ'ըմբռնեն լաւ մարզիկը, բացատրեն խտա-  
ցած ձեւով:

Մարզիկը ուղիղ է եւ անկեղծ՝ իր բոլոր գործերուն եւ  
արարքներուն մէջ:

Մարզիկը՝ իր առաջադրած նպատակին ճամբուն վրայ չի  
հանգչիր երբեք:

Մարզիկը ուժով եւ անխոցելի, զուարթ եւ լաւատես է:

Մարզիկը ազատութեան սերովը տոգորուած է:

Մարզիկը հնազանդ է՝ բառին լայն իմաստով, ազատու-  
թեան սերը ունենալով հանդերձ, որովհետեւ ան գիտէ, որ  
հնազանդութիւնը հիմը կը կազմէ կարգապահութեան, առանց

որուն որեւէ լուրջ եւ արդիւնաբեր գործունէութիւն անկարելի կը դառնայ: Ան գիտէ նաեւ, որ անհնազանդութիւն եւ անկարգապահութիւն ծնունդն են անազնիւ եւ հիւանդագին հոգիներու:

Մարզիկը հայ է իր ամբողջ էութեամբ. ան իր բոլոր կարելիութիւնները ի սպաս կը դնէ իր ընտանիքին եւ հայրենիքին:

Մարզիկը պայքար յայտարարած է չարին եւ անազնիւին դէմ:

Մարզիկը պատիւը ամէն բանէ վեր կը դասէ, իրական առնականութեան ըմբռնումը պաշտամունքի աստիճանին բարձրացուցած է:

Մարզիկը պայքարիլ եւ գործել գիտէ եւ օգտակար աշխատանքին մէջ կը գտնէ իր մեծագոյն հաճոյքը, որովհետեւ ան կը գիտակցի, որ մարդը ստեղծուած է աշխատելու եւ արտադրելու համար, ըստ իր կարելիութիւններուն, իր ազգին, իր հայրենիքին եւ համայն մարդկութեան: Դիշդ այս գիտակցութեամբ, իժի մը դիմաց գտնուողի մը պէս՝ կը խորշի եւ խոյս կու տայ անոնցմէ, որ միշտ ծոյլ, տկար, անազնիւ, կեղծ, նենգ եւ անպարկեշտ են:

Բոլոր անոնք, ըլլան անձեր թէ կազմակերպութիւններորոնց կարգին՝ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ը- բոլոր անոնք՝ որոնք ցեղը դաստիարակելու կոչուած են, եթէ պատեհութիւնն ունենան այսպիսի մարզիկներուն հետ ձեռք տուած աշխատելու, այն ատեն կ'ունենանք երիտասարդութիւն մը, որուն ի տես՝ ինչպէս ատենօք պետական մեծ դէմք մը, ակնարկելով իր ազգին երիտասարդներուն, յայտարարած է, մենք ալ կրնանք գոչել «Որքան որ գոյութիւն ունենայ այսպիսի երիտասարդութիւն մը, որեւէ վախ չունինք հայրենիքի ապագային մասին»:

**ԱՐԱՐԱՏ ԲՐԻՍԵԱՆ**



## ՆԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ

Հայ սկառ'տ, ահա՛ նշանաբանդ, որ քեզ պետք է առաջնորդէ ամբողջ կեանքիդ ընթացքին. ահա՛ երկու բառեր, որոնք քու բարոյական կրթութեանդ հիմը պետք է կազմեն:

Ուշադրութեամբ դիտէ ճակատդ գարդարող մետալը եւ լաւ մը խորհէ, թէ ի՛նչ կը խորհրդանշէ ան:

Ահա՛ բարձրաբերձ ու հսկայ Արարատը, հայրենիքի վեհափառ ու փառահեղ յուշարձանը, որ անդրդուելիօրէն դիմադրած է դարերու կործանիչ ու աւերիչ հեղեղին, որ միշտ կանգնած է բարձր, միշտ բա՛րձր: Ան կը խորհրդանշէ Հայը, կորովի ու հուժկու, անդրդուելի ու անայլայլ իր գոյութեան պայքարին մէջ. Հայը՝ որ կանգուն մնացած է միշտ, հակառակ քշնամիներու տեսկան հալածանքին ու ջարդին:

Տե՛ս, անոր զագաթէն ծագեր է արեւը, մեր ազատութեան ու անկախութեան նոր արեւը, ու լոյսերու մէջ ողողեր է ամբողջ Հայաստանը:

Արարատը, հսկայ յուշարձանն է բոլոր անմահ հայ հերոսներուն, որոնք ինկան ազատութեան ճամբուն վրայ. եւ անոր արեւը աւելի լուսատր ու փառահեղ է, որովհետեւ հոն խտացած են մեր բոլոր անմահ հերոսներուն հոգիներէն ժայթքած խինդն ու հրճուանքը:

Հայ Սկառ'տ, ահա այս սուրբ եւ նուիրական յուշարձանն է որ կը կրես ճակտիդ վրայ: Վայրկեան մը լուռ ու ինքնամփոփ, մտիկ ըրէ՛ անոր, երկու բառեր միայն պիտի լսես. երկու բառեր՝ որոնք պատգամի մը պէս կը գոռան անոր կատարէն ու յետոյ, լուսատր պսակի մը պէս, կը քանդակուին անոր վերերը.

Բարձրացի՛ր-բարձրացո՛ւր:

Յարգանքով ու երկիւղածութեամբ կանգնէ՛. այս մեծ յուշարձանին առջեւ եւ միտքդ դիր կատարել անոր արձակած պատգամը:



Նպատակդ թող ըլլայ միշտ բարձրանալ անոր լուսաշող գագաթը: Սէզ ապառաժները, խոր անդունդները թող չըխրտչեցնեն քեզ. անոնց բոլորին պիտի յաղթես. Դուն կամքի ուժ ունիս: Քու վերելքիդ մէջ չըլլայ որ դժուարութիւններ խուսափելու համար փորձուիս դէպի ետ կամ դէպի վար նայելու, վստահ եղիր թէ՛ հոն պիտի ըլլայ անկումդ:

Կեանքիդ մէջ, նայուածքդ թող ըլլայ միշտ դէպի բարձրը, արեւի բարձրը, եւ ճամբադ միշտ վերը, արեւի վերը, ջախջախելով ամէն արգելք ու դժուարութիւն: Վստահ եղիր թէ կեանքը շատ անարժէք եւ տափակ պիտի ըլլար, եթէ անոր ճամբուն վրայ խոչընդոտներ ու դժուարութիւններ չգտնուէին: Մի՛ վախճար այդ խոչընդոտներէն, վարժուէ՛ անոնց դէմ պայքարիլ, որպէսզի կարենաս անոնց յաղթել:

Հայ Մկառնոտ, ճակատդ զարդարող մետալը քեզի կը պարտադրէ, որ բարձր ըլլաս բարոյականովդ, վարքովդ, բարձր ըլլաս հոգիովդ, մտածումներովդ, փափաքներովդ: Կեանքիդ մէջ նպատակդ թող ըլլայ բարձրանալ հոգիով, միտքով ու մարմնով:

Հայ Մկառնոտ, կեանքը ո՛չ մէկ հրապոյր ունի, եթէ չունենաս իտեալ մը, գործունէութեան նպատակ մը: Քու իտեալդ պէտք

Է ըլլայ ո՛չ միայն բարձրանալ, այլ նաեւ բարձրացնել: Միայն ինքզինքդ մի՛ մտածեր, աշխարհի մէջ մինակ չես. տե՛ս, չորս կողմդ հազարատրներ, քեզմէ աւելի տկար, որոնք բուռն կերպով կը բաղձան Արարատի լուսաշող գագաթը բարձրանալ, բայց չեն կրնար: Առանց վարանելու, այդպիսիներուն օգնէ՛, բռնէ անոնց ձեռքէն եւ բարձրացուր զանոնք լոյսի ու կատարելութեան կատարը: Վերելքիդ ատեն, ճամբան դժուարութիւններէ խրտչող եւ վերադարձողները խրախուսէ՛ եւ մի՛ ձգեր որ իյնան անոնք. բռնէ անոնց ալ ձեռքէն եւ բարձրացո՛ւր:

Կեանքիդ մէջ, ի՛նչ դիրքի եւ ի՛նչ հարստութեան որ տիրանաս, ի՛նչ բարձրութեան որ հասնիս. քու շուրջիներդ մի՛ մոռնար. աշխատէ՛ անոնց ալ սորվեցնել այն միջոցները, որոնցմով կարողացար այդ բարձրութեանը հասնիլ: Կեանքի փշալից վերելքէն յուսահատողները քաջալերէ՛, ինկածներուն ու թշուառներուն օգնէ՛, ու ջանա՛ զանոնք ալ բարձրացնել:

Ահա՛ Արարատի վեհափառ կատարէն բարձրացած պատգամին նշանակութիւնը, որ, Հայ Սկստ՛ւտ, քու իտեալդ պէտք է ըլլայ:

**ՅԱԿՈՒ ԲՐԻՍԵԱՆ**

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԸ

Միջակութեանց այս գռեհիկ միջավայրին մէջ, որքա՛ն փառահեղ երեւոյթ է Հ.Մ.Ը.Մ.Ի իրականութիւնը:

Շահամոլութեանց, աղտոտ մրցակցութեանց, իրարու դաւելու եւ վնասելու տխուր պատկերին քով, իրերօգնութեան, համագործակցութեան «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի վեհ սկզբունքներու մարմնացումը եղող Հ.Մ.Ը.Մ.Ի շուրջ համախմբուած տասնեակ հազար երկսեռ երիտասարդութեան այս փառանգը հաւատք ու յոյս կը ներշնչէ բոլոր անոնց, որոնք կը ձգտին մեր ցեղի գոյատեւման:

Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի անդամներ ենք:

Համախմբուած ենք այս մեծ Միութեան շուրջ, իր առողջ սկզբունքներու եւ վեհ նպատակի իրագործման համար:

Անդամակցելով այս Միութեան կը ստանձնենք պարտականութիւններ եւ պարտաւորութիւններ, որոնց գործադրութեամբ կ'աջակցինք անոր զարգացման եւ տարածման:

Միութիւններ, կազմակերպութիւններ եւ անհատներ իրենց գործերով կը գնահատուին, ոչ թէ իրենց դիտաւորութեամբ: Անոնց արժէքը կը գնահատուի իրենց մատուցած ծառայութեան, օգտակարութեան եւ զոհողութեան գնով, ոչ թէ տարիներու համրանքով:

Հ.Մ.Ը.Մ.ականը կ'ապրի գործով, զիտակցութեամբ եւ ծառայութեան խոր զգացումներով:

Հ.Մ.Ը.Մ.ականը կ'ապրի իր սիրտի տրոփիւնով:

Հ.Մ.Ը.Մ.ականը միութենական, հասարակական եւ անհատական կեանքի մէջ կը գործէ միմիայն ծառայելու եւ օգտակար ըլլալու խոր զիտակցութեամբ:

Ի՞նչ պիտի ըլլար Հ.Մ.Ը.Մ.ի վիճակը եթէ անոր անդամները մտածէին միմիայն անկէ օգտուելու մասին:



Հ.Մ.Ը.Մ.ականը միշտ վեր կը մնայ շահամուլական զգացումներէ, անձնասիրական մղումներէ: Ան միշտ բարձր կը մնայ կեանքի վեհ ոլորտներու մէջ:

Շահամուլ, մարդկային թէ ազգային առաքինութիւններէն պարպուած մարդիկ կը ծաղրեն Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հ.Մ.Ը.Մ.ականը:

Մական ի՛նչ փոյթ թէ մարդիկ կը ծաղրեն մեզ եւ երբեմն ալ կը խղճան մեր վրայ «խեղճ», «փրենց գործը չգիտցող» որակելով մեզ:

Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հ.Մ.Ը.Մ.ականը աղամանդի պէս կը ցոլայ մեր ազգային թէ հասարակական կեանքին մէջ՝ կամք, յարատեւութիւն եւ հաւատք ներշնչելով մեր ցեղին:

Յաւիտենապէս կ'ապրին անոնք, միութիւններ, կազմակերպութիւններ եւ անհատներ, որոնք վեհանձնօրէն կը ծառայեն, բարիք կը գործեն եւ լաւագոյնս կը նուիրուին:

Հ.Մ.Ը.Մ.ականը միշտ բարձր դիրքի վրայ կը կանգնի, գորատոր ու անխորտակելի: Ան միշտ յաղթական է կեանքի պայքարին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի քառասնամեայ կեանքն ու գործը մեծագոյն փաստն է այս իրողութեան:

Մենք անդամները այս մեծ ընտանիքին պէտք է գիտակ-

ցինք, որ ծանր պարտականություններ յանձն առած ենք, իրագործելու համար զանոնք միութենական, ազգային թե անհատական կեանքի մէջ: Մեր գործունէութեան ընթացքին մեզ առաջնորդող ոյժը պիտի ըլլայ զոհողութեան եւ նուիրման ոգին, բարձրանալու եւ բարձրացնելու վեհ սկզբունքը: Օգտըւելով հանդերձ Միութեան մեզի ընծայած բարոյական, մտային եւ ֆիզիքական կարելիութիւններէն, պէտք է մտածենք նաեւ օգտակար դառնալու միջոցներու մասին: Այս փոխադարձ հասկացողութեամբ է, որ Հ.Մ.Ը.Մ.ը կարողացած է յարատեւել եւ ուռճանալ:

Օգնել եւ օգտուիլ, բարձրանալ գիտնալ ու բարձրացնել, ծառայել սորվիլ ու ծառայել. այս է եղած Հ.Մ.Ը.Մ.ի սկզբունքը: Մեզ առաջնորդող, մեզի թռիչք տուող եւ զոհողութեանց մղող, կենսունակութիւն եւ կեանք պարգետող միակ ոյժը հայ ժողովուրդն է:

Մեր կենցաղով եւ գործնական կեանքով աշխատինք տիպար օրինակը ըլլալ մաքուր ու անշահախնդիր Հ.Մ.Ը.Մ.ականի:

Ամէն տեղ ու ամէն պարագայի մէջ ըլլանք օրինապահ, կարգապահ եւ հնազանդ:

Նուիրումն ու զոհողութիւնը մեզի հոգեկան բաւարարութիւն եւ հաճոյք պատճառող մոլութիւն պէտք է դառնան, որպէսզի անշահախնդրօրէն գործադրենք շատերուն զարմանք եւ հիացում պատճառող գործեր, որոնք յաճախ մեզմէ պիտի պահանջեն նիւթական, ֆիզիքական եւ հոգեկան հատուցում:

Հ.Մ.Ը.Մ.ը լաւագոյն դպրոցն է այս առաքինութեանց ուսուցման եւ դաստիարակութեան:

Ուշի ուշով հետեւէ այս դպրոցին:

**ԼՈՒՏԵՐ ՄԱՍՊԱՆԱՃԵԱՆ**

# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ

Իրաքանչիւր ազգ ունի իր ուրոյն նկարագիրը եւ ազգերու ընկերութեան մէջ իրաքանչիւրը անոնցմէ իր այդ գիծերուն համար բնորոշումի ենթակայ է:

Անգլիացի<sup>օ</sup>ն - պաղարիւն է, ֆրանսացի<sup>օ</sup>ն, ռո<sup>օ</sup>սը, միւսնե<sup>օ</sup>րը:

Իրաքանչիւր ազգի իրաքանչիւր նահանգ անգամ իրարմէ տարբեր հասարակաց գիծերով կը ճանչցուի: Այս անգամ օրինակները բերենք մեզմէ. այնթապցիւն այսպէս, մարաշցիւն այդպէս, տիգրանակերտցիւն ու միւսները:

Իրաքանչիւր միութիւն այս կարգով ունի իր գիծը, նկարագիրը, կնիքը: Եւ իրաքանչիւր միութենական ունի իր միութեան որոշ յատկանիշները:

Հ.Մ.Ը.Մ.ականը տիպար մըն է եւ երեւակայութիւններու մէջ ստեղծած է պատկեր մը իր հաշուոյն, որ եթէ չերեւի՝ զինք կը վերածէ ինչ որ ի լինելութեան վստահուած յոյսի:

Հ.Մ.Ը.Մ.ականը նախ ժպտերես է, հաճոյակատար, ծառայասէր:

Հ.Մ.Ը.Մ.ականը խոստմնապահ է ու վստահելի:

Հ.Մ.Ը.Մ.ականը անաղմուկ հայրենասէր մըն է, անմեղ պատանի մը, որ պատրաստ է ձեզի օգնելու, ձեզի հետեւելու, ձեզի հաւատալու:

Մռայլ դէմքով Հ.Մ.Ը.Մ.ականի հանդիպա<sup>օ</sup>ծ էք: Եթէ այո, սխալ բան կայ հոն, կա՛ն ենթական անհանգիստ է, կա՛ն... Հ.Մ.Ը.Մ.ական չէ:

Հանդիպա<sup>օ</sup>ծ էք ծոյլ Հ.Մ.Ը.Մ.ականի: Եթէ այո, վստահ կրնաք ըլլալ, որ անդամատետր չունի, իսկ եթէ ունի՝ զայն իրեն չեն պահեր պատասխանատուները: Ծոյլը Հ.Մ.Ը.Մ.ական չի կրնար մնալ:

Հանդիպա<sup>օ</sup>ծ էք հայրենիքով ու ազգով չհետաքրքրուող

Հ.Մ.Ը.Մ.ականի: Անկասկած որ ոչ: Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալ ար-  
դէն կը նշանակէ հաւատալ դրօշի մը, քայլերգի մը, նուիրա-  
կան հողի մը, Դատի մը:

Հ.Մ.Ը.Մ.ականը չի կրնար խառնակիչ ըլլալ եւ ոչ ալ եսա-  
կեղորոն արարած մը: Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալ կը նշանակէ ըլլալ  
անանձնական մարդ. բաժնուելու պատրաստ հաց:

Այլապէս, եսասէր ու եսակեղորոն մարդուն տեղը հոս չէ:

Հ.Մ.Ը.Մ.ը բոլորին կը պատկանի. հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.ա-  
կանը պէտք է բոլորին ըլլալու գիծը ունենայ:

Հ.Մ.Ը.Մ.ը կը նմանի ծովուն: Կա՛ն ինք իր մէջ կը լուծէ իրեն  
եկողը, կա՛ն գայն ասի կը նետէ, որպէս խորթ:

Հ.Մ.Ը.Մ.ականը երդումի տակ գործող մարդ է: Ան ոչ թէ իր  
միութենական գործունէութեան շրջագիծին մէջ միայն կը գոր-  
ծէ այդ գիտակցութեամբ, այլեւ իր կեանքի բոլոր երեսներուն  
վրայ կը տարածէ երդումի ճառագայթումը՝ հաւատարմութիւն  
Աստուծոյ, ծառայութիւն հայրենիքի եւ մարդկութեան:

Հ.Մ.Ը.Մ.ականը ծերութիւն չի ճանչնար: Անոր քալուածքին  
մէջ ազնուականութիւն մը ինքզինք տեսանելի կը դարձնէ ու  
անոր խօսելածները պատշաճ ու զուարթ է:

Երանի անոր, որ Հ.Մ.Ը.Մ.ական բարեկամ ունի:

Երանի մանաւանդ անոր, որ Հ.Մ.Ը.Մ.ական է:

Յիշեալ բարենիշները վարժութեամբ եւ հետեւողականու-  
թեամբ միայն ձեռք կը բերուին: Անդամատետր ունենալով կա-  
րելի չէ այդ արժանիքները ժառանգել, ինչպէս օդաչուին  
տարազը ունենալ չի բաւեր... կարենալ օդանաւ քշելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ը ինք տուն է, ընտանիք է, դպրոց է, եկեղեցի  
առաջնորդող միջոց է, մաքրամաքուր ու անսահման դաշտ է:  
Կը բաւէ, որ հոն ինկող հունտը փուճ չըլլայ: Ու Հ.Մ.Ը.Մ.ակա-  
նը կը ծլի ու կ'աճի, ինչպէս բարտին, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի  
արեւուն տակ ազգի ներկան կը խմորուի եւ ապագան աւիշ կը  
ծծէ հողէն, պատմութենէն:

**ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆ**



# Ն.Մ.Ը.Մ. ՈՒՆԻ ՏԵՍԱԿԿԱՆՆԵՐ

Միրելի՛ տղաք, ֆութպոլն ալ մեզի համար ազգային դպրոց մըն է, ուր հայ տղան կու գայ ուսանելու, սորվելու մարդկային հոգին ազնուացնող, ազգային միտքը զարգացնող գիտելիքներ: Ուստի, կարգապահութեան օգտակարութիւնը, պարտականութեան գիտակցութիւնը, ձեր պատկանած ազգին հանդէպ զոհողութեան ըմբռնումը թող զօրաւոր ըլլան ձեր մէջ: Ունեցէք մաքուր մտածում, ունեցէք ազնիւ հոգի ու եղէք միակամ ձեր աշխատանքներուն ընթացքին: Այլապէս, եթէ Ն.Մ.Ը.Մ.ի ոգիին մաս կազմող այս օրինակելի յատկութիւնները տեղ չունենան ձեր մտքին, ձեր առօրեայի գործունէութեան մէջ, այդ պարագային ձեր լաւ ֆութպոլ խաղալը այնքան ալ արժէք պիտի չունենայ հայութեան համար, որովհետեւ դուք պարզ ֆութպոլի խումբի անդամ չէք: Ն.Մ.Ը.Մ.ը միայն ֆութպոլի գործունէութեամբ, յաղթանակներով առաջնորդուող խումբ չէ: Ան ֆութպոլէն առաջ ունի տեսլականներ, ունի ազգային պարտականութիւն, ու անոր խաղացողները այդ համոզումով պէտք է մօտենան ֆութպոլին:

...Աշխատանքի ճամբուն վրայ կրնաք դժուարութիւններու հանդիպիլ, բայց երբեք մի՛ յուսահատիք, մի՛ տկարանաք: Ընկրկումը ձեր բաժինը պէտք չէ ըլլայ, որովհետեւ հայ ժողովորդը ձեր լաւ կեցուածքին, ձեր յաջողութիւններուն պէտքը ունի, որովհետեւ դուք միայն Ն.Մ.Ը.Մ.ի խումբ չէք: Դուք հայութեան խումբն էք: Թէեւ դժուար եւ քրտինք ու զոհողութիւն պահանջող պատասխանատուութիւն է, բայց վճռական ու ազնիւ իմացականութեամբ հետապնդեցէք ձեզի յանձնուած պարտականութիւնը, որպէսզի մեր Միութեան, մեր ժողովորդին արժանի խումբը ըլլաք: Եւ հաւատացէք թէ կը յաջողիք...

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀԻՆԵԱՆ**

# ՀԱՅԱՊԱՏՊԱՆՈՒՄԻ ԱՆԽՈՐՏԱԿ ԲԵՐԴԸ

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական տարազին եւ մարզական շապիկին ներքեւ կայ Հ.Մ.Ը.Մ.ի ոգին, որ կը հոգեփոխէ սկաուտն ու մարզիկը, կը բարձրացնէ՝ որպէսզի անոնք եւս բարձրացնեն իրենց շրջապատը: Կայ երդումը՝ ծառայելու ազգին եւ Հայրենիքին, կայ յանձնառութիւնը՝ իր ամբողջական իմաստով, անսակարկ նուիրումով:

Ինքնանպատակ, զուտ սկաուտական եւ մարզական միութիւն մը չէ Հ.Մ.Ը.Մ., չէ եղած երբեք:

Երանի այդպէս ըլլար...

Որովհետեւ այդպէս կրնան ըլլալ միայն անոնք, որ հարց չունին, Գատ չունին:

... Երէկ, Հ.Մ.Ը.Մ. օգնութեան ձեռք կ'երկարէր որբերուն, վերապրողներուն՝ հաւատք եւ յոյս ներշնչելով անոնց, կը կազմակերպէր Հայրենիքի մարզական եւ սկաուտական կեանքը:

Այսօր, աւերիչ Արտասահմանի մէջ հայապահպանումի անխորտակ բերդ է, ազգապահպանումի ամրոց է, հայը հայ պահող կազմակերպութիւն է Հ.Մ.Ը.Մ.: Առոյգ, կենսունակ, հաւատաւոր, գաղափարապաշտ եւ զոհաբերող երիտասարդութիւն պատրաստող միութիւն է Հ.Մ.Ը.Մ.:

Աւելին է այսօր Հ.Մ.Ը.Մ.:

Հ.Մ.Ը.Մ. հայ ժողովուրդի պահանջատիրական կամքը արտայայտող կազմակերպութիւն է:

Հայ ժողովուրդի անկորնչելի իրաւունքները հետապնդող ուղիին վրայ անխոնջ ջահակիր է Հ.Մ.Ը.Մ.:

**ՎԱՐԴԳԷՍ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ**

# ԿԱՌ-ՉԱԾ ՄՆԱԿ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան օրերու մարմնամարզը, որ կը միտէր անհատի ֆիզիքական դաստիարակութեան, հետզհետէ տեղի տուաւ ի նպաստ մարզախաղերու, որոնք ողիմպիականներու թէ ալ մրցաշարքերու ծանուցողական-առետրական այլեայլ հաշիւներով, անտեսեցին անհատի ֆիզիքական զարգացումին կարիքը: Մարզախաղերը մարզիկ աստղերու, ախտյեաններու եւ մրցանիշներ հաստատողներու առանձնայատուկ կալուածի վերածուեցան: Առաւել, նիւթական հսկայական գումարներով պայմանագրութիւններ հաստատուեցան, մարզիկներ ակումբէ ակումբ փոխանցուելով՝ առետուրի նիւթի վերածուեցան, իսկ մարզախաղեր վերածուեցան ճարտարարուեստի: Ժողովրդային լայն խաւերը սիրողական իրենց պայմաններուն մէջ սահմանափակուեցան եւ այսօր մարզախաղերու աստղերուն սխարանքները ծափահարողները հարիւր հազար անգամ աւելի շատ են՝ քան այդ մարզախաղերը կիրարկողները: Մարզախաղերու ճարտարարուեստի զարգացումին նպաստեցին մամուլը եւ տեսալսողական ցանցերը՝ հասկնալի շահագրգռութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.-ը եւ Հ.Մ.Ը.Մ.-ականը չէին կրնար անտարբեր մնալ այս անյաղթահարելի եղափոխութեան դիմաց, ու գտնուեցան մարզիկներ, որոնք արդարանալի կամ անարդարանալի պատճառներով արհեստավարժութեան ոլորտին մէջ կորսուեցան՝ երազելով օր մը դառնալ միջազգային ախտյեան մարզիկներ:

Երկրորդ՝ համակարգիչը ու համացանցի կայքերը, որոնք փոքր պաստառին դիմաց յամեցող զանգուածներու վերածե-

ցին պատանի Հ.Մ.Ը.Մ.ականները: Փոխանակ բացօթեայ կեանքի, մարզանքի, մարզախաղի կամ սկաուտութեան տրամադրելու իրենց ժամանակը, այսօր համացանցի խաղերու ու ծրագիրներուն ստրկութեան ենթարկուած են զանգուածները: Որքանո՞վ կարելի է վստահիլ զանազան նպատակներու անունին տակ թաքնուած, բարոյականը խաթարող ու պատանին դաստիարակչական ճիշդ ուղիէն շեղող այդ ծրագիրներուն եւ կասկածելի կայքերուն:

Վերոյիշեալ կացութիւնները կը փորձեն Հ.Մ.Ը.Մ.ականը շեղել միութեան հիմնական ուղիէն՝ ազգային ու քաղաքացիական դաստիարակութենէն: Այսօր ղեկավարութիւն թէ պարզ անդամներ, բոլորը կոչուած են վերատեսութեան ենթարկելու իրենց գործելակերպը եւ սրբագրութիւններ կատարելու հո՛ն, ուր սրբագրութեան կարիքը կը զգացուի:

Տարեդարձներու նշումները իմաստ կը ստանան, երբ կազմակերպութեան մը ղեկավարութիւնն ու անդամները կը վերանային անցեալի իրենց գործելակերպը եւ այդ գործելակերպով ձեռք բերուած արդիւնքները:

Չի բաւեր հանգչիլ դափնեպսակներու վրայ՝ յուսալով, որ ապագան նոյն յաջողութիւններու տիրացման ապահովութեամբ պիտի արդիւնատրուի: Պէտք է համադրել, քայլ պահել օրուան պահանջներուն եւ ժամանակի հոլովոյթին հետ, միշտ կառչած մնալով միութեան անփոխարինելի նպատակներուն, որոնք կը մղեն պատրաստելու ապագայի հրամայականները դիմագրատող առողջ ու լուսամիտ քաղաքացին, աւանդապահ ու հայրենասէր մարդը եւ ազգային մեր գերագոյն նպատակներուն յանձնառութեան նուիրուած հայրը:

**ԲԻԻԶԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆ**

# ՈՒԺԻ ԱՂԲԻԻՐ` Ն.Մ.Ը.Մ.

Կանգ մի ամներ սրաթռիչ երիվար  
նպատակս տկարութիւն չի ճանչնար:  
ՄԻԱՍԱՆԹՕ

Հ.Մ.Ը.Մ.:

Մանուկ հոգիներէն ներս հոսեցար իբրեւ ջրվիժող աղբիւր  
եւ քաղցրահունչ կարկաչովդ թովեցիր հայ մատղաշ սերունդ-  
ներուն սրտերը: Թոթովախօս կակուղ թաթիկին սորվեցուցիր  
պատուի կանգնիլ եւ հպարտ կուրծքով քալել, կռուի գացող  
մարտիկին եռանդով:

Փառագոյ է պանծալի շարքերուդ շքերթներով ցնծութեան  
եւ հաւատքի ցայտաղբիւրներ ժայթքեցուցիր հայկեան երկր-  
պագումերուդ սրտերուն խորերէն:

Շնորհալից յաղթանակներդ, գորս կերտեցիր արինաթաթա  
եւ քրտնաթոր ջանքերովդ, պարծանքի ողջոյններ պոռթկա-  
ցուցին խելագար ամբոխներուդ մօտ:

Ծնունդէդ սկսեալ, օրէ օր, ժամէ ժամ ծաւալեցար, ծաւալե-  
ցար, դարձար անյաղթ հսկայ, դարձար աշխարհակալ:

Պանծալի գործերդ եւ պատուական նշանախօսքերդ քեզ  
դարձուցին ամէն հայու սրտին համար ուրախութիւն` Հ.Մ.Ը.Մ.:

Վայելչագեղ եւ յաղթահասակ Մայիսեան եւ Նաւասարդ-  
եան փառատօններդ քեզ վերածեցին ուխտի քուրայի:

Բազմահազար ուխտաւորներուդ արիաշունչ գործերը գե-  
րեցին սրտերը Վեհափառ Հայրապետներու, որոնք քու  
փառքդ ներբողեցին ամէն առիթով: Վեհապանծ հոյակապ  
վկայութիւններ արձանագրեցին հասցէիդ:

Սփիռքի ծնունդ եղար, սակայն մայր հողի սիրով տոչորուն  
սլացար փարելու հայրենի հողիդ կուրծքին ու անոր երկնա-  
յին ոլորտները առինքնեցիր մեղեդիաշունչ երգերովդ: «Յա-

ռաջ նահատակ»իդ բոմբիւնները հայորդիներու կարօտակէզ սրտերուն մէջ երգահանդէսներ սարքեցին:

Արիացեղ զաւակներդ ովսանաններ պիտի ձօնեն քու վահագնեան ուժիդ եւ յաւերժօրէն պիտի փառաբանեն չորս ոսկետառ անունդ:

Դո՛ւն անհիմանալի խորհուրդով լի հզօրութիւն մըն ես, ինչպէս երկինքն ու աստղերը, ինչպէս արեգակն ու ովկիանոսները:

Բնութեան ընդերքներէն ժայթքող հրաբխային զօրութեամբ սիրոյ եւ նուիրումի խորհուրդն է որ կը ճառագայթէ քու ծոցեդ, կենարար աղբիւրովդ սնուցանելով երկրպագուներուդ իղձերը:

Քեզմէ բխող ուժին արձագանգները ալիք առ ալիք ծաւալեցան Արեւելքէն մինչ Արեւմուտք, խանդավառ տօնախմբութիւններ կերտելով հայկական գաղթօճախներու ծոցին մէջ:

Յաղթահասակ ախոյեաններ ծնող սերմնացանը եղար, մարգական անդաստաններու ակօսներուն խորերը:

Ոգեշունչ եւ խորիմաստ նշանախօսքերովդ լոյս սփռեցիր մտքերու մէջ, իսկ հուր ցանեցիր հոգիներու մէջ:

Ուժի աղբիւր, ուժ սերմանող, հաւատք զօրացնող ո՛վ Հ.Մ.Ը.Մ.:

Հրեղէն ձի, որ քառասմբակ կը սլանայ եւ որուն նպատակը տկարութիւն չի ճանչնար իր արշաւին մէջ:

Քու անուանդ ձօնուած այս քանի մը խօսքերը շքեղ օրհներգ թող ըլլան, փառաբանանքի ծնրադիր աղօթք, ոսկեզօծ պսակ:

Ողջո՛ւն քեզի հզօր Արքայ, ողջոյն երէկիդ, ողջոյն ներկայիդ, ողջոյն գալիքիդ:

Մենք՝ նուիրեալներուդ փաղանգը, յարգանքով կը խոնարհինք քու անսպառ վաստակիդ մեծութեանը առջեւ:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

# ԳԱՂԱՓԱՐԻ ՄԻՈՒԹԻԲՆԸ

Հ.Մ.Ը.Մ.:

Մարգականին առընթեր՝ նաեւ յստակօրէն բանաձեւուած  
Գաղափարի Միութիւն:

Միշտ պատրաստ, կամաւոր բանակ:

Հ.Մ.Ը.Մ.:

Մեր ժողովուրդի ապագային հանդէպ անսահման հաւատ-  
քով նոյն զգացումով բարախող սրտերու ջերմ մէկտեղում:

Սրտեր, որոնց պարտականութիւնն ու պարտաւորութիւնը  
եղած է գիտակցութեամբ, հրամայական յանձնառութեամբ  
մեր անժամանցելի արդար դատը հետապնդել, մեր ազգային  
իրաւունքներուն տէր կանգնելու պատրաստական ու գիտա-  
կից հայրորդիներ պատրաստել:

Տակաւի՛ն, դրական մասնակցութիւն բերել պահանջատի-  
րական մեր ճիգերուն, Հայ Դատի հետապնդման նոր, ազդու  
ու գործնական միջոցառումներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի այս հանգրուանին՝

Նոր կարելիութիւններով, նոր պայմաններով ու նոր ծաւա-  
լով Հ.Մ.Ը.Մ.ը հզօրացնելու առաջադրանքով՝

Բոլորուի՛լ Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ:

Ըլլա՛լ Հ.Մ.Ը.Մ.ի ծառայութեան մէջ:

ՀՐԱԶԴԱՆ

# ԸՆԴՆԱՆՐԱԿԱՆ ՆԱՅՈՒԹԻՒՆ

Ոմանք թերեւս հարց տան, թէ ո՞ր է Հ.Մ.Ը.Մ.ը հայ կեանքէն ներս: Պատասխանը աւելի ճիշդ պիտի ըլլար տալ հարցունով մը. ո՞ր չէ Հ.Մ.Ը.Մ.ը հայ կեանքէն ներս:

Շատեր Հ.Մ.Ը.Մ.ին կը նային իբրեւ նոր սերունդի հայապահպանման անխորտակելի ամրոց: Ասիկա ճիշդ է յատկապէս Արեւմտեան աշխարհի եւ այլասերումի վտանգին ենթակայ երկիրներուն մէջ: Անոնք Հ.Մ.Ը.Մ.ի կապուտակ երկինքին տակ կը ներծծեն կենսատու եւ հայաշունչ թթուածին:

Սակայն Հ.Մ.Ը.Մ.ը աւելին է:

Ոմանք Հ.Մ.Ը.Մ.ին կը նային ու հոն կը տեսնեն «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ» նշանաբանին գործադրութիւնը: Վկայ իր բազմահազար մարզիկները եւ բիւր պատասխանատուները ի սփիւռս աշխարհի:

Ո՞վ կրնայ անտեսել Հ.Մ.Ը.Մ.ի մարդակերտումի հրաշագործութիւնը: Որբանոցներու եւ թիթեղաշէն տնակներու շուքին տակ նստած այդ ուղեկորոյս հայ բեկորներու հոգիներուն մէջ ո՞վ կրնար ցանել կեանքի ու վերապրելու վճռակամութիւնը: Ո՞վ կրնար շտկել անոնց կորաքամակ մարմինները, թափ ու սլացք տալ կեանքին եւ մարդոց աչքերուն մէջ շեշտակի՝ նայելու յանդգնութիւնը պարզելու անոնց:

Այս առաքելութեամբ էր որ ճամբայ կ'ելլէին Մինաս Չերազ եւ իր ընկերները, որբերով եւ թշուառութեամբ լեցուն նորածին Հայաստանի Հանրապետութեան մէջ, 1918-ին:

Նոյն առաքելութեամբ էր որ Սփիւռքի դժնդակ պայմաններուն մէջ կը գործէին Հ.Մ.Ը.Մ.ի հաւատաւորները անցնող տարիներուն:



Այլապէս ի՞նչպէս բացատրել այս երեւոյթը: Հրաշագործ ի՞նչ դեղ էր Հ.Մ.Ը.Մ.ը:

Տարիներ շարունակ սերունդներ ազատ, անկախ Հայաստանի երազը պահեցին իրենց կուրծքին տակ ու հրաժեշտ տուին այս աշխարհին: Բիւր էին այդ երազով ապրող Հ.Մ.Ը.Մ.ականները: Սակայն այդ բիւրատրոները ունէին սփոփանքը Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան ընդմէջէն տեսնելու ապագայ ազատ ու անկախ Հայաստանի առանց գէնքի զինուորները:

Եկան օրեր, երբ այդ առանց գէնքի զինուոր սկաուտները «Մի՛շտ պատրաստ» վիճակի մէջ եղան լիբանանահայութեան թաղերու պաշտպանութեան եւ Հայ Դատի նուիրական պատնէշներուն վրայ: Ֆետայի սկաուտներու փաղանգներ յաղթական իրենց երթը շարունակեցին մինչեւ Արցախ, որուն զոհասեղանին ընծայաբերեցին եղբ. Վարդան Բաշխեանի, եղբ. Վիգէն Չաքարեանի եւ եղբ. Յակոբ Առուստամեանի նման սկաուտ ֆետայիներ:

Այս բոլորն է Հ.Մ.Ը.Մ.ը, բայց ոչ միայն այս բոլորը: Այլ ընդհանրական եւ յաւերժական հայութիւնը:

**ՊԵՏՐՈՍ ՇԵՍՏԵՄԵԱՆ**

**Հ.Ա.Բ.Ա.Ի 100-ԱՄԵԱՅ ԵՐԹԻՆ  
ՆՈՒԻՐԵԱԼ 100 ԴԷՄՔ**



## ԱԶՆԱԽՈՐԵԱՆ ՍԱՐԳԻՍ

Պարտաճանաչութեան, խստապահանջութեան եւ ամբողջական նուիրումի օրինակն է եղբ. Սարգիս Ազնաուրեան, Հ.Մ.Ը.Մ.ի լիբանանեան ֆութպոլի 1940-ական տարիներու աննման աստղը:

Եղբ. Սարգիս ծնած է 1924-ին, Պուրճ Համուտ: Փոքր տարիքէն ան աչքի կը զարնէ ֆութպոլի դաշտերուն վրայ իր ունեցած տպաւորիչ ելոյթներով: 1945-ին, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբին, խաղընկեր ունենալով իր կարգ մը դասընկերները, որոնց հետ ան կը կապուի եղբայրական անխզելի կապով, մինչեւ իր նահատակութիւնը՝ 23 Ապրիլ 1985, երբ զոհ կ'երթայ հայութեան թշնամիներու անարգ ոճիրին:

1940-ական տարիներու երկրորդ կիսուն, Լիբանանի ախոյեանութիւնը նուաճած անգուգական կազմին հետ, եղբ. Սարգիս Ազնաուրեան կը հանդիսանայ ամբողջական ընկերասիրութիւն, ինքնավստահութիւն, կորով եւ քաջութիւն ներշնչող մնալուն ներկայութիւն մը: Ծայր աստիճան մաքրամաքուր եւ ֆութպոլը արուեստի վերածած այս մարզիկը կ'արժանանայ տեղացի մարզական պատասխանատուներու եւ մարզիկներու ամբողջական յարգանքին: Լիբանանի ֆութպոլի ազգային խումբին շապիկը արժանաւոր կերպով կրող «երկաթ գլուխով ֆութպոլիստ»ը կանաչ դաշտերուն վրայ յատկանըշւած է իր հեզ ու բարեացական, բայց նաեւ՝ խիստ ու վճռական ներկայութեամբ:

1952-ին, եղբ. Սարգիս կը հեռանայ դաշտերէն, սակայն անցեալի իր շահագրգռութեամբ կը շարունակէ հետեւիլ իր պաշտած միութեան եւ անոր ֆութպոլի խումբին լուրերուն:

Օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական մը ըլլալու կողքին, պարտակա-

նութեան ճամբուն վրայ ոչ մէկ գոհողութեան դիմաց ընկրկող կուսակցականն էր եղբ. Սարգիս: Երիտասարդ տարիքին ան մաս կազմած է Հ.Յ.Դաշնակցութեան շարքերուն եւ գաղափարապաշտ մարդու ոգին արժեցուցած է իր կեանքի կենդանի օրինակով: Երկար տարիներ եղած է Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամ եւ խոնարհ հերոսի օրինակով անշահախնդրօրէն ծառայած է ի խնդիր Լիբանանի հայահոծ քաղամասերու պաշտպանութեան եւ ի սպաս հայ ժողովուրդի գերագոյն շահերուն, արժանանալով բոլորին յարգանքին ու սիրոյն:

## ԱԼԱՃԱՅՏՈՅԵԱՆ ՎԱՐԴԳԷՍ



Եղբ. Վարդգէս Ալահայտոյեան ծնած է 1929-ին, Ղազիր, Լիբանան: Պէյրութի Հայ Աւետ. Քոլէճէն վկայուելէ ետք, ան մուտք կը գործէ դրամատնային գործունէութեան ասպարէզ: Պասքեթպոլ կը խաղայ կանուխէն: 1950-1955 ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիղի պասքեթպոլի տղոց խումբին:

1955-ին, Ֆլորա Պալեանի հետ ան կը կազմէ ընտանեկան իր բոյնը եւ կը տեղափոխուի Վըրճինիա, Մ. Նահանգներ:

Մ. Նահանգներու մէջ, եղբ. Վարդգէս կը շարունակէ դրամատնային իր գործունէութիւնը եւ 1966-ին կը սկսի գործել Ուաշինկթընի Միջազգային Դրամատան մէջ, որուն իբրեւ ներկայացուցիչ ան կ'ուղարկուի Լիբանան, իբրեւ նորաստեղծ Transorient դրամատան Պէյրութի տնօրէն:

Լիբանան վերադարձին, եղբ. Վարդգէս կը շարունակէ միութեանկան իր գործունէութիւնը: 1968-1969 ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիղի վարչութեան, իսկ 1971-1974՝ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձատր Արեւելքի Շրջանային Վարչութեան:

1974-ին, միութեան համագաղութային առաջին Պատգամատրական Ժողովին, եղբ. Վարդգէս կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ՝ 1974-1979: Ան կը վերընտրուի նաեւ երկրորդ շրջանի մը համար՝ 1979-1983:

1991-ին, եղբ. Վարդգէս եւ Ֆլորա Ալահայտոյեաններ կը ստանձնեն Արեւմտեան Մ. Նահանգներու Նաւասարդեան 16-րդ մարզախաղերուն նախագահութիւնը:

Եղբ. Վարդգէս Ալահայտոյեան կը մահանայ Հոկտեմբեր 2016-ին:



### ԱՆԴՐԷԱՍԵԱՆ ՎԱԶԳԷՆ

Վազգէն Անդրէասեան եղած է Բերայի Եսայեան վարժարանի սկաուտ խմբապետներէն: Ան ծնած է 10 Ապրիլ 1903-ին, Չմշկածաք: 1923-ին կ'անցնի Ֆրանսա եւ կը հիմնէ Հ.Մ.Ը.Մ.ի Մարսէյի մասնաճիւղը: 1927-ին կը հաստատուի Փարիզ: 1934-ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսայի Շրջանային Վարչութեան անդամ: 1936-ին կը դառնայ սկաուտապետ: Գրած է սկաուտական գիրք մը, նաեւ՝ «Վահան Չերազ եւ իր երգն Հայաստանի»:

Անդրէասեան կը մահանայ 1 Դեկտեմբեր 1995-ին:



### ԱՆՍԱՀՈՒՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Եղբ. Յարութիւն Անմահունի ծնած է 1927-ին, Նիկոսիա: Փոքր տարիքէն ան մեծ սէր ունեցած է սկաուտութեան հանդէպ: Յաճախած է Ազգ. Մելիքեան-Ուզունեան վարժարան եւ 1943-1944 տարիներուն՝ Մելգոնեան Կրթական Հաստատութիւն:

1935-ին ան մաս կազմած է Մելիքեան-Ուզունեան վարժարանի գալիկական, ապա նաև՝ սկաուտական շրրորդ խումբին: 1943-ին ան եղած է Մելզոնեանի անուանի եօթներորդ խումբին Վարիչ Առաջնորդը:

1959-ին, եղբ. Անմահունի կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի Կիպրոսի 77-րդ խումբին հիմնադիրներէն մէկը: Կիպրոսի ընդհանուր արիապետ եղբ. Յ. Փալամուտեանի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի ատենապետ եղբ. Ա. Մահտեսեանի քաջալերանքով ան եղած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի անուանի խումբին ընդհանուր արիապետը: Նոյն տարին ան մասնակցած է համակիպրական խաղաղութեան ճամպորիին:

1962-ին, եղբ. Անմահունի Լոնտոնէն ստացած է «Փայտէ տախտակ» (Wood Badge): 1963-ին ան մասնակցած է Մարաթոնի համաշխարհային 11-րդ ճամպորիին:

1968-ին ան մաս կազմած է Կիպրոսի սկաուտական վերին մարմնին:

1965-էն ան եղած է Կիպրոսի հայկական սկաուտական բոլոր խումբերու՝ AYMA-ի, Նարեկ Ազգային Վարժարանի եւ Մելզոնեան Կրթական Հաստատութեան շրջանային գործավար, վերակազմակերպելով անոնց գործունէութիւնը: 1978-ին եւ 1986-ին, եղբ. Անմահունի մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին եւ երրորդ բանակումներուն, Քալանուս եւ Լոնտոն:

Եղբ. Անմահունի շրջան մը մաս կազմած է նաև AYMA-ի ֆութպոլի խումբին:

Արհեստով ան լուսանկարիչ էր: Երկար տարիներ գործած է Կիպրոսի երկրագործութեան նախարարութեան մէջ: Սիրած է բանաստեղծութիւնը եւ գրականութիւնը: Ունեցած է գեղանկարչական նախասիրութիւններ եւ կեանքի վերջին տարիներուն գեղանկարած է 80-է ատիւի պաստառներ: Աշխատակցած է հայ մամուլին եւ հրատարակած է երկու գրքոյկ եւ մէկ հատոր. «Բերթուածներ մօր սիրոյ մասին» (1998), «Հայ լեզուի հատընտիր հաւաքածոյ» (1999) եւ «Անցեալս ինծի հետ» (2009):

Միութենական եւ ազգային երկարամեայ ծառայութեան առ ի գնահատանք, եղբ. Անմահունի պարգևատրուած է Հ.Մ.-Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան միութեան 50-ամեակի շքանշանով (1968), Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով (2003), Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2001), ինչպէս նաեւ՝ Կիպրոսի յաջորդական նախագահներու (Մակարիոս Արք., Կիպրիանու, Քլերիտես) եւ սկաուտական շարժումի տասնեակ մը շքանշաններով:

Եղբ. Յարութիւն Անմահունի Հայաստանի վերանկախացումէն քաջալերուած՝ նիւթական իր մասնակցութիւնը բերած է հայկական բանակի օժանդակութեան գործին: Առ այդ, ան արժանացած է «Անդրանիկ Օգանեան» գերատեսչական շքանշանին (2009):

Հաւատարմոր Հ.Մ.Ը.Մ.ական մը ըլլալու կողքին, Յարութիւն Անմահունի երդուեալ դաշնակցական մըն էր:

Եղբ. Յարութիւն Անմահունի կը մահանայ 91 տարեկանին, 22 Հոկտեմբեր 2018-ին:



## ԱՌԱՔԵԼԵԱՆ ՔԵՐՈՔ

Եղբ. Քերոք Առաքելեան ծնած է 1909-ին, Այնթապ: 1914-ին, ընտանիքին հետ հաստատուած է Հալէպ, Սուրիա: 1918-ին, վերադարձած է Ատանա: Նոյն տարին եղած է Հայ Արիներու սկաուտական խումբի առաջին անդամներէն: Քեմալական շարժումին ընթացքին ան կը փոխադրուի Գոքիմիա, Յունաստան: Վեց ամիս առաւօտեան դպրոց յաճախելով եւ կօշիկ ներկելով ընտանիքին կ'օգնէ: Ապա, կը նետուի կեանքի ասպարէզ, մասնագիտանալով ատաղձագործութեան մէջ:

1922-ին, ծանօթ Հ.Մ.Ը.Մ.ական Մամուլեանի հետ, եղբ. Քերոբ կը հիմնէ Հ.Մ.Ը.Մ.ի Գոքիմիոյ մասնաճիւղը, որուն առաջին սկաուտներէն կ'ըլլայ 1924-ին: Սկաուտականի կողքին, ան կը միանայ մասնաճիւղին ֆութպոլի խումբին, դառնալով անոր խմբապետը:

1930-ին, եղբ. Քերոբ ընտանիքին հետ կը փոխադրուի Մեքսիքօ եւ կը միանայ երկրի ֆութպոլի խումբին եւ մինչեւ 1939 կը դառնայ անոր փայլուն աստղերէն մէկը:

1964-ին կը փոխադրուի Միացեալ Նահանգներ: 1968-ին մեծապէս կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադրութեան եւ բարգաւաճման աշխատանքներուն: Երկար տարիներ կ'ընտրուի վարչական եւ բազմիցս կը վարէ ատենապետի պաշտօնը: Ան մեծ ներդրում կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեպելլոյի մասնաճիւղի հիմնադրութեան:

1976-1981, եղբ. Քերոբ Առաքելեան յաջորդական երկու շրջան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ: 1979-ին ան մասնակցած է Կիպրոսի մէջ գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Բ. Ընդհանուր Ժողովին: 1981-ին ստանձնած է Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան Չ. մարզախաղերուն պատուոյ նախագահութիւնը: 1982-ին արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանին, 1988-ին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսին կողմէ՝ «Կիլիկեան Ասպետ» շքանշանին: 1993-ին ստանձնած է Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 18-րդ մարզախաղերուն պատուոյ նախագահութիւնը եւ այդ առիթով հիմնած է Հ.Մ.Ը.Մ.ի «Առաքելեան» հիմնադրամը:

Եղբ. Քերոբ Առաքելեան կը մահանայ 30 Նոյեմբեր 1999-ին:





## ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԹԱՆ ՆԵՐՍԷՍ

Ա. Աշխարհամարտէն առաջ, Սկիւտարի «Հայորդիք» մարզական միութեան անդամներէն: 1915-էն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Սկիւտարի մասնաճիւղի եռանդուն սկաւտ խմբապետը: 1923-ին անցած է Պուլկարիա: Շրջան մը եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ Շրջանային Վարչութեան անդամ: 1930-ին, Սոֆիայի մէջ խմբագրած է «Հ.Մ.Ը.Մ». ամսաթերթը, որ լոյս տեսած է 11 թիւ:

1935-ին, Ներսէս Աստուածատուրեանի ջանքերով հրատարակած է Մարթայեանի կիսատ ձգած երկասիրութիւնը՝ «Նաւասարդեան» անունով: Անոր մէջ կը տեսնենք վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու գրութիւններ:



## ԱՐՁՈՒՍԱԼԵԱՆ ՄԻՆԱՍ

Հ.Մ.Ը.Մ.ական պասքէպոլի երախտաշատ դէմքերէն է եղբ. Մինաս Արզումալեան, ծանօթ՝ եղբ. Մինօ անունով: 1970-ական եւ 1980-ական տարիներուն ո՞վ չէ տեսած զինք Պուրճ Համուտի Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Քոլէճի պասքէպոլի դաշտին վրայ՝ երկսեռ խումբերու մարզումի պահուն:

Եղբ. Մինօ ծնած է 1936-ին: Փոքր տարիքէն ան պասքէ կը խաղայ Պուրճ Համուտի Նոր Միս թաղամասի Հ.Յ.Գ. «Քրիստափոր» Պատանեկան Միութեան խումբէն: 1954-ին, իր մօտ փայլուն պասքէպոլիստի շնորհները տեսնելով՝ բարեկամ մը զինք կ'առաջնորդէ Հ.Մ.Ը.Մ.ի խումբին անդամակցութեան:

Այնուհետեւ, 1954-էն մինչեւ 1990-ականներու կեսերը, եղբ.

Մինօ պատուով կը կրէ Հ.Մ.Ը.Մ.ի շապիկը, նախ իբրեւ մարզիկ (1954-1964) ու ապա՝ իբրեւ մարզիչ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի պասքէթպոլի երկսեռ խումբերուն: Միաժամանակ, ան կը մարզէ լիբանանահայ ազգային վարժարաններու ԼԵՎԱՄ-ի պասքէթպոլի կազմերը:

Եղբ. Մինօ 1956-1960 մաս կը կազմէ Լիբանանի պասքէթպոլի ազգային խումբին, որուն հետ ան միջազգային մրցումներ կը կատարէ Լիբանանի, Իրլանտայի, Թուրքիոյ, Սուրիոյ եւ Ֆրանսայի մէջ:

1964-ին, իբրեւ մարզիկ պասքէթպոլը լքելէ ետք, եղբ. Մինօ կը նուիրուի Հ.Մ.Ը.Մ.ական ապագայ պասքէթպոլիստներ պատրաստելու կարեւոր գործին: Իր մարզած բազմահարիւր մարզիկներէն յատկապէս աչքի կը զարնեն եղբայրներ Խաժակ Պաղտատլեան, Յովսէփ Լոշխանեան եւ Ժագ Նալպանտեան:

Եղբ. Մինօ ծանօթ էր յոգնութիւն չճանչցողի իր բնատրուրեանը: Խստապահանջ էր մարզումներու ընթացքին, բայց նաեւ՝ ընկերային ու զուարթախոհ էր մարզումներէ դուրս: Բարեկամն էր մեծին ու փոքրին, փնտռուած մարզիչը մարզիկին, սկաւուտին եւ աշակերտին:

Հ.Մ.Ը.Մ.ական պասքէթպոլին կամաւոր ծառայութեան ատելի քան 40 տարուան վաստակ մը ձգած իր ետին, եղբ. Մինօ ուղեղային կաթուածով մը կը մահանայ 15 Փետրուար 1999-ին:

## ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ ՄԻՍԱԸ

Եղբ. տոքթ. Միսաք Արզումանեան մէկն է յետ-եղեռնեան սերունդի հաւատարոր այն դէմքերէն, որուն բովանդակ կեանքը Հ.Մ.Ը.Մ.ի եւ ազգային մեր կառոյցներու ճամբով անսակարկ նուիրաբերում եղած է հայակերտման եւ հայապահպանման նուիրական գործին:



Եղբ. տոքթ. Միսաք Արզումանեան ծնած է 1931-ին, Պէյրոս: 1958-ին, ան կը մեկնի Ամման, ուր մինչեւ 1961 կ'աշխատի իբրեւ բանակի բժիշկ, սպայի աստիճանով: Պէյրոս վերադառնալէ ետք, ան կը բոլորէ ազգային ծառայութեան աւելի քան 35 տարիներ:

Եղբ. տոքթ. Միսաք Արզումանեան 1962-1964 կ'ըլլայ Հ.Մ.-Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի ատենապետ, 1964-1974՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սերճատր Արեւելքի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ, 1974-1978 եւ 1980-1982 Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ, իսկ 1987-1999՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ:

1990-ին, եղբ. Արզումանեան կը գլխաւորէ Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը վերականգնելու առաքելութեամբ Կեդրոնական Վարչութեան հայրենիք առաքած եռանդամ պատուիրակութիւնը:

1965-1999, եղբ. տոքթ. Արզումանեան կը մասնակցի Հ.Մ.-Ը.Մ.ի Սերճատր Արեւելքի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամատրական բոլոր ժողովներուն: 1999-ին ան կը պարգեւատրուի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով: Նոյն տարին ան կը հաստատուի Մ. Նահանգներ, ուր կը մահանայ 27 Յունիս 2007-ին:



## ԲԱՆՇԵԱՆ ՎԱՐԴԱՆ

Նորանկախ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ական առաջին սերունդի հաւատաւոր ներկայացուցիչներէն մէկը կը հանդիսանայ եղբ. Վարդան Բախշեան, Հ.Մ.Ը.Մ.ի Երեւանի մասնաճիւղին առաջին ատենապետը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հայրենի առաջին անդամը:

Եղբ. Վարդան Բախշեան ծնած է 1 Յունիս 1965-ին, Արմա-

վր: Եղած է Արցախեան ժողովրդային շարժումի ՀՈՒԳ (Հայ Ուսանողութեան Դաշինք) միատրման հիմնադիրներէն: 2 Դեկտեմբեր 1989-ին, Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի վերընձիւղումէն ետք, եղբ. Վարդան կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Երեւանի մասնաճիւղի կազմութեան նախաձեռնողներէն մէկը եւ վարչութեան առաջին ատենապետը: Ապրիլ 1991-ին, ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Ե. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին եւ կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

16 Դեկտեմբեր 1991-ին, եղբ. Բախշեան կը նահատակուի Արցախի Հասանապատ գիւղի ազատագրման կռիւներուն:

## ԲԱՐՍԵՂԵԱՆ ՄԻՍԱԲ

Հ.Մ.Ը.Մ.ի սփիւռքեան առաջին սերունդի հաւատաւոր ներկայացուցիչներէն է եղբ. Միսաք Բարսեղեան: Ան ծնած է 1892-ին, Այնթապ: Չաօակն էր Յարութիւն եւ Եումմա Բարսեղեաններու:



Եղբ. Միսաք ծննդավայրի Ներսէսեան վարժարանը աւարտելէ ետք, առոյգ մարզիկ եւ ֆութպոլիստ, անդամագրուած է Այնթապի «Համազասպ» մարզական միութեան, միաժամանակ մաս կազմելով Հ.Յ.Դաշնակցութեան շարքերուն:

Բարսեղեան եղբայրները, քաջարի հայորդիներ, Այնթապի մէջ ահն ու սարսափը եղած են թուրք երիտասարդներուն:

1915-ին, գաղթականութենէն ետք, եղբ. Միսաք ընտանեկան բոյնը կազմած է Փոր Սայիտի մէջ: Ապա, Պաղեստին անցնելով, Նազարէթ քաղաքին մէջ ան նշանակուած է տեղոյն հայ գաղթականներու թաղապետ եւ մաս կազմած է գերմանացի սպաներու ֆութպոլի խումբին: Շնորհիւ իր ծանօթութիւններուն, ան մեծ օգտակարութիւն ունեցած է հայ չքաւոր ընտանիքներու:

1920-ին, եղբ. Միսաք եղբայրներուն հետ վերադարձած է

Այնթապ՝ վերատիրանալու համար իր հայրենի կալուածներուն: Ֆրանսական բանակի նահանջէն ետք, ան մասնակցած է Այնթապի հերոսամարտին: Այնուհետեւ, երկրորդ անգամ գաղթական դառնալով, ան հաստատուած է Հալէպ:

Հալէպի մէջ, 1925-ին, եղբ. Միսաք հիմնադիր անդամներէն մէկը եղած է Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին եւ ամբողջ 60 տարի ծառայած է իր պաշտելի միութեան, դառնալով անոր բազմավաստակ եւ երախտարժան ղեմքերէն մէկը:

Իր հանրանուէր գործունէութեամբ եղբ. Միսաք պատկառելի ներկայութիւն եղած է հալէպահայ կեանքին մէջ: Ան իր անսակարկ մասնակցութիւնը բերած է Ազգ. Չաւարեան վարժարանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Նոր Գիւղի դաշտի շինութեան:

1940-1966, մինչեւ Մ. Նահանգներ հաստատուիլը, եղբ. Միսաք եղած է Հալէպի Նոր Գիւղ թաղամասի սիրուած ու յարգուած թաղապետը: «Միշտ պատրաստ» նշանաբանին հաւատարիմ, ան հասած է հոն, ուր պարտականութիւնը կանչած է զինք:

Եղբ. Միսաք 15 Օգոստոս 1984-ին իր աչքերը փակած է առանց որեւէ ակնկալութեան, միութեան եւ ազգին լաւագոյնը տուած ըլլալու խոր գոհունակութեամբ:



## ԲԱՐՍԵՂԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Եղբ. Յարութիւն Բարսեղեան եղած է Հալէպի առաջին սկաուտներէն: Իր հետեւողական աշխատանքով ան հասած է խմբապետի աստիճանին եւ դարձած է հիմնադիր՝ մասնաճիւղի երէց փաղանգին:

1960-ական թուականներուն, Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջան փոխադրուելով, եղբ. Բարսեղեան լուրջ աշխատանք տարած է Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնելու Լոս Անճելըսի մէջ: Աշխատանքը իրականացուցած է հաւատարոք

խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ականներու գործօն մասնակցութեամբ: Այսպէս՝ եղբ. Բարսեղեան.-

- 1968-ին եղած է Լոս Անճելըսի մասնաճիւղին հիմնադիր ատենապետը:

- 1972-ին գլխաւորած է նորաստեղծ մասնաճիւղին մարզական եւ սկաուտական պատուիրակութիւնը, մասնակցելով Մերձաւոր Արեւելքի միջ-մասնաճիւղային 35-րդ խաղերուն:

- 1987-ին մասնակցած է Աթէնքի մէջ գումարուած Հ.Մ.-Ը.Մ.ի Պատգամաւորական Գ. Ընդհանուր Ժողովին:

- 1995-ին, Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կողմէ արժանացած է տարուան «Տիպար Հ.Մ.-Ը.Մ.ական»ի տիտղոսին: Միաժամանակ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ պարգեւատրուած է Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով:

- 15 անգամ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչութեան մաս կազմած է, գլխաւորաբար ստանձնելով ատենապետի դժուարին պարտականութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադրութենէն մինչեւ իր մահը, եղբ. Բարսեղեան աչալրջութեամբ հետեւած է մասնաճիւղին եւ ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն եւ նոյնիսկ յառաջացած տարիքին փորձած է գործօն մասնակցութիւն բերել անոնց յաջողութեան:

Եղբ. Յարութիւն Բարսեղեան կը մահանայ 24 Հոկտեմբեր 2009-ին:

## ԳԱԶԱՆՃԵԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

Եղբ. Վարուժան Գազանճեան ծնած է 1931-ին, Գահիրէ: Նախնական կրթութիւնը ստացած է Մխիթարեաններու տեղոյն վարժարանը, իսկ բարձրագոյն ուսումը՝ Գահիրէի Ամերիկեան Համալսարանը (Լինքըլն քոլէճ)՝ AUC:



Ջալալյան է Գահիրեի «Արարատ» մարզական ակումբի (հիմնը-  
ւած՝ 1914-ին, Հ.Մ.Ը.Մ.ին միացած՝ 1946-ին) հիմնադիր երկ-  
րորդ սերունդի անդամներին Վարդան Գազանճեանի:

Եղբ. Գազանճեան պատանեկութեան եղած է «Արարատ»ի  
սկաուտական միաւորի անդամ: Հետագային ան մաս կազ-  
մած է ակումբի պասքեթպոլի երեց տղոց խումբին: Շրջան մը  
եղած է խմբապետ:

Անդամ էր եգիպտահայ մարզական խաղերու կազմակերպիչ  
յանձնախումբին: 1978-էն սկսեալ եղած է Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի  
վարչական անդամ՝ գանձապահ, փոխ ատենապետ եւ ատենա-  
պետ: Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Պատգամատրական Ժողո-  
վին եւ դիւաններու Ա. խորհրդաժողովին (Աթէնք եւ Սիլանո):

1993-ին եղբ. Գազանճեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վար-  
չութեան կողմէ կը պարգեւատրուի «Արժանեաց» շքանշանով:  
2000-էն մինչեւ իր մահը ան պատուակալ նախագահն էր  
Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի:

Եղբ. Վարուժան Գազանճեան կը մահանայ 24 Յուլիս  
2008-ին:



## ԳԱՅԵԱՆ ԼԵՒՈՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի հիմնա-  
դիրներէն էր. Լեւոն Գայեան ծնած է  
Ատանա, 20-րդ դարու սկիզբը: Հազիւ 13  
տարեկան ան մաս կը կազմէ Հայ Արիւնե-  
րու Միութեան՝ Ատանայի մէջ:

1921-ին, Կիլիկիոյ պարպումին պատճառով, ծնողներուն  
հետ կ'անցնի Սուրիա, նախ՝ Հալէպ, Տէր Զօր, Գամասկոս,  
ապա վերադարձ կրկին հայրենի օճախ՝ Ատանա: 1922-ին  
փոխադրութիւն Իզմիր եւ Իզմիրի աղէտէն ետք, հազարաւոր  
գաղթականներու ճակատագիրին հետ վերջնական կայք Յու-  
նաստան, Աթէնք:

Հազի ուր դրած Յունաստանի օփր, երբ. Լեոնի առջե կը բացուի իր սիրած սկաուտական գործունեութեան լայն դաշտ մը: Ատանացի քանի մը սկաուտներու հետ 1923-ին ան կը կազմէ արիներու խումբ մը ու կը դառնայ շեփորահարներու վարիչ, երբ տակաւին Հ.Մ.Ը.Մ.ը չէր հիմնուած Յունաստանի մէջ: Յաջորդ տարին, երբ. Լեոն կը դառնայ Ֆիքսի հայ արիներու խմբապետ, իսկ 1925-ին՝ Հ.Մ.Ը.Մ.ի անդամ, շնորհիւ եղբայր Սկրտիչ Մալումեանի: Այսպէտով, ան կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆիքսի նորակազմ մասնաճիւղի վարչական մինչեւ 1929, երբ կը մեկնի Արժանքին, ուր մինչեւ 1935 կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական եւ վարչական գործունեութիւն: Այնուհետեւ ան կը վերադառնայ Աթէնք եւ դարձեալ կը ստանձնէ տեղւոյն սկաուտական խումբերուն պատասխանատուութիւնը:

Երկրորդ Աշխարհամարտը իր ատերը կը գործէ ամէն կողմ: Շատ մը բաներու հետ կանգ կ'առնէ նաեւ սկաուտական գործունեութիւնը, վերսկսելու համար 1945-ին, երբ եղբ. Լեոն դարձեալ սկաուտական խումբերու կազմակերպման աշխատանքներուն կը լծուի:

1969-ին, Աթէնքի մէջ, հանդիսութեամբ մը կը նշուի սկաուտական իր գործունեութեան յիսնամեայ յորելեանը:

1955-էն սկսեալ, քսան տարի, եղբ. Լեոն կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան անդամ եւ ատենապետ:

1980-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Ներկայացուցչական Ժողովը ի վարձատրութիւն տարիներու իր անձնուէր ծառայութեան, իրեն կը շնորհէ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատուակալ նախագահի տիտղոսը:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը նկատի ունենալով եղբ. Լեոնի անձը, գործն ու վաստակը, 1978-ին զինք կը պատուէ Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:


Եղբ. Լեոն շուրջ եօթը տասնամեակ հաւատարմօրէն ու անսակարկ նուիրումով կը ծառայէ իրեն այնքան պաշտելի



միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին ու անոր ճամբով հայ ժողովուրդին: Սկաուտիզմը կը հանդիսանայ իր ամենէն սիրած մարզը, որուն միջոցով ան սերունդներ կը դաստիարակէ: Ան իր ամբողջ կեանքը կ'ապրի հայութեամբ ու հայութեան տազնապնէրով՝ զանոնք խտացնելով Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեան ու անոր առաջադրանքներու դրսեւորման մէջ: Կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի ներկայացուցչական եւ համա-Հ.Մ.-Ը.Մ.ական Պատգամատրական գրեթէ բոլոր ժողովներուն:

Հակառակ իր յառաջացեալ տարիքին, ան քաջութիւնը կ'ունենայ 1994-ին մասնակցելու նաեւ Հայաստանի մէջ կայացած համա-Հ.Մ.Ը.Մ.-ական Ե. բանակումին: Երեսնի «Ազատութեան» հրապարակի սկաուտական տողանցքին մասնակցելով՝ ան կը հասնի իր կեանքի տարիներու մարզին:

Եղբ. Լեւոն Գայեան կը մահանայ Փետրուար 1995-ին:



## ԳԱՊԱԳԵԱՆ ԱՏՈՒՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղին գլխաւոր հիմնադիրը՝ Ատուր Գապագեան ծնած է 1895-ին, Այնթապ: Փոքր տարիքէն ան ճաշակած է որբութեան դառնութիւնը, որովհետեւ ծնած օրը մեռած է մայրը: Նախնական ուսումը ստացած է Կեսարիոյ Ս. Կարապետ վանքը, որմէ ետք մինչեւ 1912 յաճախած է ծննդավայրի Այնթապ Քոլէճը:

1915-ին, գաղթական եղած է Համայի շրջան: 1918-ին, Յեղասպանութենէն փրկուած՝ կը վերադառնայ Այնթապ: Տարի մը ետք, ուսումնատենչ երիտասարդը կը մեկնի Պէյրութ՝ հետեւելու Պէյրութի Ամերիկեան Համալսարանի ատամնաբուժական ճիւղին:

1924-ին, վկայուելէ ետք, Ատուր Գապագեան կը վերադառնայ Հալէպ եւ մինչեւ Պէյրութ տեղափոխութիւնը կը հանդի-

սանայ Սուրիոյ ազգային կեանքի ամենէն տիրական դէմքերէն մէկը: Այսպէս, 1925-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի նորակազմ մասնաճիւղը իրեն կը դիմէ՝ Հալէպի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնելու համար:


Դիմումին ընդառաջելով, Ատուր Գապագեան իր տան մէջ խորհրդակցութեան մը կը հրաւիրէ մինչ այդ Հալէպի մէջ գործող մարզական միութիւններն ու խումբերը («Համազասպ», «Ուսումնասիրաց», «Կայծակ», «Տալտրիկ» եւ «Արարատ»): Կը ներկայանան առաջին չորս միութիւններու ներկայացուցիչները եւ կ'որոշեն հանդիպիլ երկրորդ անգամ: Երկրորդ հանդիպումին, 1 Նոյեմբեր 1925-ին, կը ներկայանան «Համազասպ», «Կայծակ» եւ «Տալտրիկ» միութիւններու ներկայացուցիչները միայն եւ տեղւոյն վրայ իրենք զիրենք լուծուած յայտարարելով՝ առժամեայ մարմինի մը կը վստահին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը հիմնադրութեան պարտականութիւնը:

Հիմնադրութիւնը կը կատարուի 17 Նոյեմբեր 1925-ին եւ վերոյիշեալ երեք միութիւններու 48 անդամները կ'արձանագրուին Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի անդամ եւ կ'ընտրեն իրենց անդրանիկ վարչութիւնը՝ ատենապետութեամբ եղբ. Լուտեր Մասպանաճեանի:

1948-ին, Ատուր Գապագեան կը հաստատուի Պէյրութ եւ երկու շրջան՝ 1949-1954 կը վարէ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձատր Արեւելքի Շրջանային Վարչութեան ատենապետութիւնը:

Գապագեան 29 տարեկանէն սկսեալ եւ մինչեւ 1960-ական տարիներ մաս կը կազմէ Հ.Յ.Դ. Սուրիոյ եւ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէներուն: Կը մասնակցի Հ.Յ.Դ. 15-րդ, 16-րդ, 18-րդ եւ 19-րդ Ընդհանուր Ժողովներուն: 1963-ին կ'ընտրուի Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ եւ մինչեւ մահը կը մնայ պատասխանատու դիրքի վրայ:

Ազգային-կուսակցական երեք քառորդ դարու վաստակով բեռնատրուած՝ ան կը մահանայ 22 Ապրիլ 1972-ին եւ կը թաղուի Պուրճ Համուտի ազգային գերեզմանատան Հ.Յ.Դ. պանթեոնը:



## ԳԱՏԵԱՆ ՅԱԿՈԲ

Կարելի չէ Հ.Մ.Ը.Մ.ական պասքեթին մասին խօսիլ առանց եղբ. Յակոբ Գատեանին մասին խօսելու:

Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթը գրեթե Գատեանով կը սկսի, աելի ճիշդը՝ Գատեանով պասքեթը կ'արմատանայ Հ.Մ.Ը.Մ.ին մէջ, երբ 1942-1943 տարիներուն, Հայ Դեմարանի «Կամք» անունով պասքեթի խումբը ան միաձուլէ Հ.Մ.Ը.Մ.ի խումբին հետ եւ կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթի տիմամիք խումբը:

Եղբ. Յակոբ Գատեան կը ծնի 1914-ին:

Տարագրութեան անլուր տառապանքները ցմբուր ճաշակած եւ մազապուրծ ազատած, բոլոր վերապրողներու մման. հօրմէ կանուխէն որբացած, որբանոցային կեանքի դառնութիւնը ճաշակած: Մօրը տքնաջան աշխատանքով ան կը յաճախէ Պէյրութի Հայ Աւետարանական Վարժարան, ուրկէ շրջանաւարտ՝ երկու տարի կը հետեւի Պէյրութի Ամերիկեան Համալսարանի երկրաչափական բաժինի դասընթացներուն, ապա միթական պայմաններու պարտադրանքով ուսումը կը լքէ եւ կը նետուի կեանքի ասպարէզ:

1929-ին ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ին: Բայց նախքան ամբողջապէս իր սիրած միութեան նուիրուիլը եղբ. Գատեան կ'ունենայ մարզական բեղուն ասպարէզ: Համալսարանական կեանքին ընթացքին եւ աելի վերջ ան կ'ըլլայ աթլէթ եւ լուրդորդ:

Տարիներ Լիբանանի երկար վազքերու (1,500, 3,000, 5,000 եւ 10,000 մ.) ախոյեան: Քրոս Քաունթրիի Լիբանանի ախոյեան՝ երկու տարի: Լոդի մարզին մէջ սուզումի (փլոնժոն) ախոյեան՝ 1930-1937 տարիներուն: Հինգ տարի մարզիչ 1940-ական թուականներուն համբաւ ունեցող պասքեթի Պե.Տե.Տե. խումբին:

Եղբ. Գատեան իր յարատեւ եւ հետեւողական աշխատանքով կ'երաշխաւորէ նախաձեռնութեան մը յաջողութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի պասքէպօլը կը հասցնէ գագաթներու, փառքի երկար շրջան մը ապահովելով միութեան: Իր մարզիչութեան տարիներուն, Հ.Մ.Ը.Մ.ի տողոց խումբէն հանրածանօթ կը դառնան Լեւոնիկ, Վարդգէս, Ալէն, Պետրոս, Ժան, Գարլոս, Համբօ, Մինօ, Յակոբ, Կարօ, Վահէ, Վարդգէս, Կարօ, Արա, Հրայր, Ռաֆֆի, Հրայր, Շէմի, Ժագ եւ ուրիշներ: Ասոնք գրեթէ, առանց բառացութեան, մաս կը կազմեն Լիբանանի ազգային խումբերուն:

Աղջկանց խումբէն հանրածանօթ կը դառնան Մարի, Անահիտ, Շաքէ, Էլօ, Չարուկ, Էլօ, Աստղիկ, Սրբուկ, Սեվա, Ֆլորա, Յասմիկ, Հուրի, Արմինէ եւ շարք մը այլ անուններ:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ի պասքէթին վրայ «Բոչ» Գատեան անհատական իր անջնջելի դրոշմը կը դնէ. չմոռցուող եւ յաջորդող սերունդներուն ուղեցոյց եղող դրոշմ մը: Անոր մեծութիւնը կ'արտայայտուի մարդ-մարդիկ պատրաստելու գերազանցօրէն գնահատելի առաջադրանքին մէջ:

Եղբ. Գատեան կը մահանայ Մայիս 1992-ին:

## ԳԱՐԱՊՈՅԱՃԵԱՆ ԳԷՈՐԳ

Հ.Մ.Ը.Մ.ական ասլէթին իր կեանքը նր-վիրաբերած խոնարհ անուն մըն է եղբ. Գէորգ Գարապոյաճեան:

Եղբ. Գէորգ Գարապոյաճեան ծնած է Պէյրութ, 1939-ին, վեցերորդ գաւակը Մովսէս եւ Մարի Գարապոյաճեան ամուլին: Աշակերտած է Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանին, զոր արարտած է 1958-ին: Հայկազեան Համալսարանէն Պսակատր Արուեստից տիտղոսով վկայուած է 1963-ին, իսկ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Դեմարանէն՝ Պսա-



կառը Աստուածաբանութեան տիտղոսով, 1967-ին:

Իբրեւ ուսուցիչ, եղբ. Գէորգ տասը տարի ծառայած է զանազան վարժարաններու մէջ եւ 1989-էն մինչեւ իր մահը վարած է ՔԱՀԼ-ի Լիբանանի հայ ծերանոցին տնօրէնութիւնը: Անուանացած է Աստղիկ Քիւրքճեանի հետ, 1968-ին, եւ բախտաւորուած է երկու զուակով՝ Լիւսիլ եւ Հրայր: Պատանի հասակէն, 1950-ական թուականներէն, եղբ. Գէորգ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի մեծ ընտանիքին: 1962-ին ան փոխանցուած է Պուրճ Համուտի մասնաճիւղ: Իբրեւ արւելք ան մասնակցած է Լիբանանի ախոյեանութիւններուն: 1983-2001 մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան արւելքի յանձնախումբին, իբրեւ անդամ, իսկ վերջին 13 տարիներուն՝ իբրեւ ատենապետ:

Արւելքի յանձնախումբի իր պատասխանատուութեան բերումով, եղբ. Գէորգ երկար տարիներ մասնակցած է ԼԵՎԱՄ-ի կազմակերպման աշխատանքներուն: Մեծ է իր ներդրումը ԼԵՎԱՄ-ի յաջողութեան եւ զարգացման մէջ: 2001-ին, ան իր կարեւոր ներդրումը ունեցած է Պէյրութի մէջ կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական 6-րդ մարզախաղերուն:

Եղբ. Գէորգ Գարապոյաճեան կը մահանայ 20 Յունիս 2011-ին, իր ետին ձգելով պարկեշտ մարդու եւ առաքինի Հ.Մ.Ը.Մ.ականի յիշատակելի անուն:



## ԳԱՌՈՒՔՃԵԱՆ ՎԱՀԱՆ

Եղբ. Վահան Գաւուրճեան Աղեքսանդրիոյ հայութեան մարզական, մշակութային, կրթական, բարեսիրական եւ հանրային-հասարակական կեանքին մէջ երախտաշատ անուն մըն է:

Ան ծնած է Աղեքսանդրիա, 1917-ին, եւ իր ծնողքին ու հարազատներուն հայաշունչ մթնոլորտին մէջ հասակ նետած է

իր ժողովուրդին ու հայրենիքին ծառայելու անսակարկ պատրաստակամութեամբ:

1924-ին, եօթը տարեկան պատանի Վահանը իր ծնողքին առաջնորդութեամբ կը մտնէ «Կամք» մարզական ակումբի սեմէն ներս եւ ամենայն հետեւողականութեամբ կը մասնակցի «Կամք»ի սկաւտական, մարզական եւ աթլէթի միատորներուն գործունէութեան:

1940-ին ան կ'ընտրուի «Կամք»ի վարչական անդամ եւ ատելի քան 55 տարի իբրեւ վարչական եւ ապա 1964-էն իբրեւ ստենապետ՝ անխոնջ սպասարկուն կը հանդիսանայ «Կամք»ի սկաւտական եւ մարզական շարժումներու աշխատանքներուն:

Հատաւոր Վ.Մ.Լ.Մ.ականի իր ծառայութեան ճամբուն վրայ, եղբ. Վահան 1974-ին կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային հիմնադիր անդրանիկ ժողովին, եւ ապա՝ 1979-ին կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պարզեւատրումին, ստանալով Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանը: Եղբ. Վահան յաջորդաբար ներկայ կը գտնուի Հ.Մ.Ը.Մ.ի Բ. Գ. Ե. եւ Զ. Պատգամատրական ժողովներուն:

Եղբ. Վահան Գաւութեան կը մահանայ 21 Սեպտեմբեր 1996-ին:

## ԳԵՂԱՐՂ ՅԱՐՈՒԹԻՒՆ


Եղբ. Յարութին Գեղարդ, բուն անունով Յարութին Գազանճեան, ծնած է 1928-ին, Գոնիա: Փոքր տարիքին ընտանիքին հետ կը փոխադրուի Հալէպ, ուր կարճ շրջան մը մնալէ ետք՝ 1932-ին կը հաստատուի Պէյրութ:

Եղբ. Յարութին Գեղարդ Հ.Մ.Ը.Մ.ին կ'անդամակցի 1936-ին, մաս կազմելով Պէյրութի մասնաճիղի գայլիկական շար-



քերուն: Կ'ըլլայ բազմաշնորհ մարզիկ: Կը կիրարկէ պասքէթ, ֆութպոլ, գօտենմարտ, փինկ-փոնկ, թենիս, ձողի վրայ մարմնամարզ, հեծիկ եւ լող: Շրջան մը կը վարէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի ատենապետութիւնը: 1971-1974 ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան: Կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Պատգամաւորական 19-րդ եւ 20-րդ ժողովներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին 6 Պատգամաւորական ժողովներուն: Երեք շրջան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան (1979-1983, 1983-1987, 1991-1995): Կ'արժանանայ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին: Յարութիւն Գեղարդ կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարզիկ»ի հիմնադիր սերունդի ներկայացուցիչներէն: Ան կը հեղինակէ բազմաթիւ գիրքեր:

Յարութիւն Գեղարդ կը մահանայ 14 Մարտ 2006-ին:



## ԳԵՈՐԳԵԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ական արիւթի փայլուն դէմքերէն էրը. Վարուժան Գեղորգեան ծնած է 1939-ին, Պուրճ Համուտ: Կրթութիւնը ստացած է Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարանը: Ապա նետուած է գործի ասպարէզ:

Իբրեւ գայլիկ, էրը. Վարուժան Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին կ'անդամակցի 1948-ին: Սկաուտական շարքերէ անցնելէ ետք, ան իր հետաքրքրութիւնները կ'ուղղէ դէպի մարմնամարզ:

1961-ին մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի արիւթի ներկայացուցչական խումբին, որուն հետ ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային արիւթիզմի խաղերուն, Գահիրէ:

Եղը. Վարուժան Գեղորգեան Հ.Մ.Ը.Մ.ական արիւթի շապի-

կը պատուով կը կրէ 1961-1974: Իբրեւ վարպետ գունդ նետող, ան Լիբանանի ախոյեան կը հանդիսանայ 1964-ին, 1965-ին եւ 1966-ին:

Աթլէթ ըլլալու կողքին, 1968-էն սկսեալ, եղբ. Վարուժան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի աթլէթիզմի յանձնախումբին, որուն ատենապետութիւնը եւ մարզիկներուն մարզումը ձեռնհասօրէն կը կատարէ 1972-1993: Այնուհետեւ, մինչեւ մահ ան կը հանդիսանայ յաջորդական Շրջանային Վարչութիւններուն ներկայացուցիչը աթլէթի յանձնախումբին մօտ, իբրեւ Շրջանային Վարչութեան անդամ կամ լիազօր ներկայացուցիչ:

Եղբ. Վարուժան կը ստանձնէ նաեւ վարչական զանազան պաշտօններ: 1974-1983 ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան, 1980-1983 վարելով ատենապետութեան պաշտօն: 1988-1993, 1996-2000 եւ 2006-2008, հինգ շրջան ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ: 1991-ին եւ 1999-ին կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Ե. եւ Է. Պատգամաւորական ժողովներուն:

Երկարամեայ աթլէթի իր փորձառութեամբ, եղբ. Վարուժան 1982-էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.ի աթլէթիզմի խումբին ներկայացուցչութիւնը կը կատարէ Լիբանանի աթլէթիզմի ֆետերասիոնին մօտ: 1993-ին ան կ'ընտրուի ֆետերասիոնի անդամ: Այնուհետեւ ան կը վերընտրուի չորս անգամ (1997, 2001, 2005, 2009)՝ ֆետերասիոնի փոխ նախագահի պաշտօնով: Այդ հանգամանքով ան աթլէթիզմի Լիբանանի ազգային խումբը կը զլխաւորէ արաբական եւ միջազգային զանազան մրցաշարքերու:

Վաստակաշատ իր նուիրումին համար, Նոյեմբեր 2008-ին, եղբ. Վարուժան Հ.Մ.Ը.Մ.ի 90-ամեակին առիթով կը պարգեւատրուի «Ծառայութեան» շքանշանով:

Ան կը մահանայ 28 Փետրուար 2009-ին:





## ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ԿԱՐՊԻՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի երկար տարիներու պատուակալ նախագահ եղբ. Կարպիս Գույումճեան ծնած է 12 Նոյեմբեր 1927-ին, Ֆիքսի գաղթակայանին մէջ: Փոքր տարիքէն ան կը նուիրուի ազգային գործին, ի մասնաւորի՝ Հ.Մ.Ը.Մ.ին:

Եղբ. Կարպիս երկար տարիներ կը զբաղի յունահայ գաղութին եւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին պատմութիւնը արձանագրելով, աշխատանք՝ որուն իբրեւ արդիւնք ան կը հրատարակէ շարք մը գիրքեր:

1948-1978, երեսուն տարի անընդհատ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆիքսի մասնաճիղի վարչական, եղբ. Կարպիս իր մասնակցութիւնը կը բերէ դիւանական, թղթակցական եւ մարզական աշխատանքներու:

1978-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի 44-րդ Ներկայացուցչական ժողովին ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան անդամ: Իբրեւ ներկայացուցիչ թէ հրաւիրեալ, ան իր մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի յետպատերազմեան Ներկայացուցչական թէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Պատգամատրական բազմաթիւ ժողովներուն:

1980-էն մինչեւ իր մահը, Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթին կ'աշխատակցի իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի թղթակից, ստորագրելով 200-է աւելի յօդուածներ եւ թղթակցութիւններ:

1994-ին, եղբ. Կարպիս կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին: Երկու տարի ետք, 1996-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը եղբայր Կարպիսին կը շնորհէ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատուակալ նախագահի տիտղոսը:

Եղբ. Կարպիս կը մահանայ 26 Ապրիլ 2015-ին:

## ԴԱՆԻԷԼԵԱՆ ԴԱՆԻԷԼ



Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով իր բովանդակ կեանքը հայութեան եւ նորահաս սերունդներու դաստիարակութեան նուիրաբերած անձնագոհներէն մէկն է եղբ. Դանիէլ Դանիէլեան: Ան ծնած է փոքր Ասիոյ Մարգուան քաղաքը, 1909-ին: Հրաշքով կ'ազատի Եղեռնէն եւ ընտանեօք կը հաստատուի Պոլիս: Հոն կը յաճախէ տեղւոյն Հինդլեան Վարժարանը եւ կը մտնէ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը:

1922-ին, յոյն-թրքական պատերազմէն ետք կը փոխադրուի Սելանիկ: Տակաւին ուսանող, եղբ. Դանիէլ մարմնամարզի հանդէպ մեծ սեր ունենալով՝ կը դառնայ վարպետ ֆութպոլիստ եւ պասքէպոլիստ:

1928-ին, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Սելանիկի մասնաճիղի վարչական:

1930-1936, եղբայր Դանիէլ մնայուն կերպով կը մասնակցի Յունաստանի ֆութպոլի ազգային խումբին մրցումներուն, պատիւ բերելով ո՛չ միայն իր անձին, այլեւ՝ հայութեան:

1936-ին, Պերլինի 11-րդ ողիմպիականին, յունական մարզական ֆետերասիոնին որոշումով, եղբ. Դանիէլ կ'ըլլայ ողիմպիական ջահը պատմական Ռղիմպիայէն Պերլին փոխադրող ջահագնաց մարզիկներէն մէկը:

Նոյն տարին, Աթէնք հաստատուելով, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան անդամ, ստանձնելով ատենադպիրի պաշտօն:

1946-ին, եղբ. Դանիէլ, եղբ. Համօ Մեիրապեանի հետ գործակցաբար, Աթէնքի մէջ կը հրատարակէ Հ.Մ.Ը.Մ.ի «Մարմնամարզ» պարբերաթերթը:

1952-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ եւ եղբ. Դանիէլի պատասխանատու խմբապետութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի ֆութպոլի

խումբը կ'այցելէ Պէյրութ, Հալէպ եւ Դամասկոս ու տեղական Ա. դասակարգի խումբերու դէմ մրցելով՝ կ'արձանագրէ պատուաբեր արդիւնքներ:

1967-ին, երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան մաս կազմելէ ետք, եղբ. Դանիէլ ընտանեօք կը փոխադրուի Գանատա:

1974-ին, Պէյրութի մէջ գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի Առաջին Պատգամատրական Ժողովին, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ:

Ան կը մահանայ 9 Նոյեմբեր 1980-ին, Մոնթրէալ:



## ԴԱՆԻԷԼԵԱՆ ՎԱՀՐԱՄ

Եղբ. Վահրամ Դանիէլեան ծնած է 1945-ին: Իբրեւ գայիկ, ան Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին կը միանայ փոքր տարիքին, իր ծննդավայր Ֆիքսի մէջ, Յունաստան: Տարիներ շարունակ իր աշխոյժ մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղի աշխատանքներուն եւ իր հօրեղբօր՝ Դանիէլ Դանիէլեանի օրինակին հետեւելով կը դառնայ փայլուն մարզիկ:

1962-ին, եղբ. Վահրամ իր ծնողներուն հետ կը հաստատուի Մոնթրէալ, Գանատա, ուր ան կը շարունակէ միութենական իր աշխատանքը եւ մեծ ներդրում կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի «Արմենիա» ֆութպոլի խումբին կազմութեան մէջ: Տարիներ շարունակ ան կը հանդիսանայ այդ խումբին սիւներէն մէկը, միաժամանակ ստանձնելով միութենական զանազան պատասխանատուութիւններ:

1981-ին, եղբ. Վահրամ ընտանիքին հետ կը հաստատուի Միացեալ Նահանգներ, Ֆլորիտա եւ նոյն տարին իր ջանքերով ու ժրաջան աշխատանքով կը հիմնուին հարաւային Ֆլորիտայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը եւ ազգային այլ կառոյցներ:

Տարիներ շարունակ իր անվերապահ օժանդակութեամբ ան կը սատարէ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆլորիտայի մասնաճիղին եւ ազգային կառոյցներու յարատեւման ու բարգաւաճման:

2003-ին, Հ.Մ.Ը.Մ.ի 8-րդ Պատգամաւորական Ժողովին ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, որուն մաս կը կազմէ յաջորդական երկու շրջան՝ 2003-2007 եւ 2007-2011:

Եդր. Վահրամ իր համեստ խառնուածքով եւ նախանձելի նուիրումով կ'ըլլայ օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական եւ ղեկավար: Ան կը մահանայ 1 Յունուար 2014-ին:

Յետ-մահու, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, ան կը պարգեւատրուի միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

## ԵԱԶՄԱՃԵԱՆ ՕՆՆԻԿ



Օննիկ Եազմաճեան եղած է Ետի Գուլէի որբանոցի սկաւուտ խմբապետ: Վահան Չերազի եւ Տիգրան Խոյեանի հետ ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի եռանդամ այն մարմինին, որ Հայաստանի կառավարութեան հրաւերով 1920-ին հայրենիք կ'երթայ՝ կազմակերպելու համար սկաւուտական եւ մարզական շարժումներ:

Հայաստանի մէջ, Օննիկ Եազմաճեան աշխատանքի կեդրոն կ'ընտրէ Երեւանը, ուր ան կը զբաղի որբախնամի աշխատանքներով: Որբերէն կը պատրաստէ սկաւուտներ: 1924-ին կ'անցնի Ֆրանսա: Տարի մը ետք կը նշանակուի Կիպրոսի Մելգոնեան հաստատութեան մարզանքի ուսուցիչ: Անկէ կրկին կ'անցնի Ֆրանսա: Եղած է Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական սկաւուտական յանձնախումբի անդամ: 1934-ին մեկնած է Սթրքհոլմ՝ հետեւելով մարզանքի ուսուցչութեան վարժարանին եւ հոնկէ անցած է Իրան, իբրեւ մարզանքի ուսուցիչ:

Նկարը կը ներկայացնէ Օննիկ Եազմաճեանի գօտին:



## ՋԱՐԻՖԵԱՆ ՄԱՏԹԷՈՍ

Մատթեոս Ջարիֆեան՝ եղերաբախտ բանաստեղծ-մարզիկը ծնած է 17 Յունուար 1894-ին, Պոլսոյ Կետիկ Փաշա թաղը: Թափառած է դպրոցէ դպրոց.- Պերպլերեան, Պարտիզակի Ամերիկեան Բարձրագոյն Վարժարան, Ռոպերթ Զոլէն, յետոյ կրկին Պերպլերեան, զոր աւարտած է 1913-ին: Կը մեկնի Ատանա, իբրեւ մարզանքի ուսուցիչ: Հոնկէ Լիբանան կ'անցնի՝ դարմանելու վտանգըւած իր առողջութիւնը:

Պոլիս վերադարձին՝ ուսուցիչ է Պերպլերեանի մէջ: 1921-ին այլեւս չի կրնար շարունակել դպրոցը եւ Մեծ Կողի կ'առանձնանայ՝ դարմանելու իր հիւծած մարմինը: Մահը զինք հոն կը գտնէ 1924-ին:

Ջարիֆեան առաջին օրէն սիրահար էր մարմնամարզի: 1912-ի հայկական Բ. ողիմպիականին ան առաջին կը հանդիսանայ երեք քայլ ոստումի, երկրորդ՝ գունդ նետելու եւ երրորդ՝ սկաւառակ եւ նիզակ նետելու մրցումներուն:

28 Օգոստոս 1911-ին, ան ախոյեան կը հանդիսանայ «Բաֆֆի»ի տարեկան մրցաշարքին:



## ՉԱԶԱՐԵԱՆ ՎԻԳԷՆ

Շուշիի ազատագրման կռիւներուն զոհուած Հ.Մ.Ը.Մ.ական նահատակն է եղբ. Վիգէն Չաքարեան:

Ան ծնած է 1969-ին, Պուրճ Համուտ: Փոքր տարիքին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ին, նախ իբրեւ տարագաւոր գայիկ ու ապա՝ սկաւուտ,

երէց: Աւելի ուշ, ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի հեծելաբշտի խումբին: Միաժամանակ, ան անդամակցած է Հ.Յ.Դ. Լիբանանի Երիտասարդական Միութեան եւ իր մասնակցութիւնը բերած է Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն՝ հայահոծ թաղերու ինքնապաշտպանութեան աշխատանքին:

Արցախեան պայքարի կոչին անսալով, Ապրիլ 1992-ին, եղբ. Վիգէն կը մեկնի Հայաստան՝ անցնելու համար Արցախ: Կը մասնակցի Շուշիի ազատագրման հերոսական կռիւներուն եւ կը նահատակուի Լիսագորի բարձունքներուն դիմաց՝ 8 Մայիս 1992-ին: Կը թաղուի Եռաբլուրի նահատակաց պանթէոնը, Երեւան:

Յետ-մահու ան կը պարգեւատրուի Լ.Ղ.Հանրապետութեան «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով եւ «Արիութեան համար» մետալով:

## ԹԱՊԱԳԵԱՆ ՖԼՈՐԱ

Հ.Մ.Ը.Մ.ական պատերթպոյլի մասին կարելի չէ խօսիլ՝ առանց յիշելու քոյր Ֆլորա Թապագեանի անունը: Հ.Մ.Ը.Մ.ի ոսկեայ սերունդի փայլուն ներկայացուցիչներէն մէկը, որ լիբանանեան պատերազմի արինալի մէկ հանգրուանին, 17 Օգոստոս 1985-ին, 50 ուրիշներու հետ զոհ գնաց ոճրային խափանարարութեան մը:

Քոյր Ֆլորա Գուտուլեան-Թապագեան ծնած է 12 Դեկտեմբեր 1949-ին, ազգանուէր ընտանիքի մը յարկին տակ: Նախնական կրթութիւնը ստացած է Անարատ Յղութեան Քոյրերու Հոյիփսիմեանց Վարժարանին եւ Համազգայինի Նշան Փալանճեան Դեմարանին մէջ:

1960-1961, ան մարզական առաջին փորձերը կատարած է Դեմարանի մէջ, մարզանքի ուսուցիչ եղբ. Յովհաննէս Տէր Յա-



րութիւնեանի հսկողութեամբ: Դեմարանի պասքեթպոլի խումբին հետ ան կը մասնակցի միջ-վարժարանային մրցաշարքերու՝ խումբին ապահովելով փայլուն յաղթանակներ:

1964-ին, քոյր Ֆլորա կ'անդամակցի Հ.Ս.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիղի պասքեթպոլի աղջկանց խումբին եւ այնուհետեւ կը դառնայ լիբանանեան մակարդակի աստղ մը: Ան մնայուն ներկայութիւն կ'ըլլայ Հ.Ս.Ը.Մ.ի առաջին հնգեակին մէջ՝ խմբակիցներ ունենալով Մարի Սարեանը, Սելլա Գահվէճեան-Թնճուկեանը, Սրբուկ Օհանեան-Սարգիսեանը, Յասմիկ Սաաթեանը, Արմիկ Պատազեանը, Սոնա Պաղտասարեանը եւ Էլօ Տէմիրճեանը, որոնք մարզիչ եղբ. Ժագ Պոյաճեանի ղեկավարութեամբ կը դառնան անպարտելի՝ տիրանալով Լիբանանի ախոյեանութեան եւ բաժակի այդ տարիներու գրեթէ բոլոր տիտղոսներուն (1964-1975):

Քոյր Ֆլորա ներկայութիւն կ'ըլլայ նաեւ պասքեթպոլի Լիբանանի ազգային խումբին մէջ, որուն կորիզը կը կազմեն Հ.Ս.Ը.Մ.ի մարզիկուհիները: Իբրեւ Լիբանանի ազգային խումբին խմբապետուհի, 1973-ին, ան կը մասնակցի համա-արաբական խաղերու, Ալճերիոյ մէջ: Լիբանանի համալսարանականներու խումբին հետ, 1971-ին ան կը մասնակցի նախկին Չէխոսլովաքիոյ, 1973-ին՝ նախկին Եուկոսլաւիոյ, իսկ 1975-ին՝ Մոսկուայի մէջ տեղի ունեցած համալսարանականներու պասքեթպոլի խաղերուն:

1972-ին քոյր Ֆլորա կը պսակուի Հ.Ս.Ը.Մ.ի Պէյրութի պասքեթպոլի տղոց խումբի խմբապետ եղբ. Հրայր Թապազեանի հետ եւ կը բախտաւորուի երեք զաւակով:

Բազմաթիւ յատկութիւններով օժտուած մարզիկուհի մըն էր քոյր Ֆլորա Թապազեան: Ֆիզիքական սքանչելի պատրաստութեան տէր, ան կրնար խաղալ որեւէ դիրքի վրայ՝ ձեռք բերելով լաւագոյն արդիւնքներ: Միաժամանակ, ան կարծր էր եւ ճկուն: Մրցումներու ընթացքին իր կատարած տեղին միջամրտութիւններով ան կը յաջողէր խումբը դուրս բերել նեղ կացութիւններէ՝ բարեշրջելով խաղին ամբողջ ընթացքը:

Վերջին շրջանին, քոյր Ֆլորա ամուսնոյն՝ եղբ. Հրայրի հետ

կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի պասքէթպոլի խումբերուն մարզիչի պաշտօնը՝ երազ ունենալով զանոնք հասցնել մարզական բարձր մակարդակի: Ափսո՛ս, որ ճակատագիրը 36 տարեկանին կ'ընդհատէ անոր երազն ու կեանքը:

## ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ ԿԱՐՕ

Եղբ. Կարօ Թիւթիւնճեան ծնած է 1943-ին, Հալէպ: Ան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն կ'անդամակցի 1956-ին: Պէյ-րութ փոխադրուելէ ետք, 1966-1982, մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդին, իբրեւ քարտուղար, ապա՝ ատենապետ: 1983-ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ այնուհետեւ կը վերընտրուի երեք անգամ, մինչեւ 1999, 16 տարի ձեռնհասօրէն վարելով իր պաշտօնը: 2003-ին, միութեան 8-րդ Պատգամաւորական Ժողովին, չորս տարուան շրջանի մը համար ան դարձեալ կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ, սակայն անակնկալ մահը՝ 16 Յունուար 2006-ին, պատճառ կը դառնայ որ ան չկարենայ ամբողջացնել իր պաշտօնավարութեան շրջանը:

Եղբ. Կարօ Թիւթիւնճեան 1979-1980 եղած է գլխաւոր խմբագիրը Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդի «Հայ Սկաուտ» թերթին: Այնուհետեւ ան իր ներդրումը ունեցած է միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրական եւ վարչական աշխատանքներուն: Հրատարակած է երկու գիրք. «Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւնը» եւ «Հ.Մ.Ը.Մ. եւ ազգային դէմքեր»:

Լիբանանի սկաուտութեան վերելքին իր ունեցած նպաստին համար, 2003-ին ան կը պարգեւատրուի Լիբանանի սկաուտական ֆետերասիոնին կողմէ: Յետ-մահու, ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն «Արժանեաց» շքանշանին:







## ԹԻՒՄԻՒՉԵԱՆ ՆՇԱՆ

Եղբ. Նշան Թիւսիւզեան ծնած է 1911-ին, Տիգրանակերտ: Փոքր տարիքին, թրքական հալածանքէն փախուստ տալով, ընտանիքին հետ փոխադրուած է Հալէպ, ուր յաճախած է Ազգային Հայկազեան Վարժարանը՝ ստանալով ազգային առողջ դաստիարակութիւն:

Պատանի տարիքէն ան կ'անդամագրուի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն: Նշանաւոր դէմքերէն մէկը կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի սկաուտական շարժումի տարածման եւ կազմակերպման: Պարզ սկաուտ, ապա խմբապետ, Սկաուտ. Խորհուրդի անդամ եւ Հալէպի մասնաճիւղի վարչական՝ եղբ. Նշան Թիւսիւզեան կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր ձեռնարկներուն յաջողութեան նպաստող կարեւորագոյն աշխատողներէն մէկը:

Ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր Շրջանային Ժողովներուն, ինչպէս նաեւ՝ միութեան համագաղութային կառոյցին ստեղծումէն ետք՝ Ա. եւ Բ. Պատգամաւորական Ժողովներուն: 1974-1980 մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան՝ գանձապահի պատասխանատու պաշտօնով:

Հ.Մ.Ը.Մ.ի գործերուն առընթեր, եղբ. Նշան Թիւսիւզեան կը տանի նաեւ կուսակցական աշխատանք, ստանձնելով պատասխանատու պաշտօններ:

1961 Օգոստոսին, ան կը փոխադրուի Լիբանան, Պէյրութ, ուր կը շարունակէ ազգային եւ միութենական գործունէութիւնը: Կ'ըլլայ Ազգային իշխանութեան տնտեսական խորհուրդի անդամ եւ կը լծուի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարժումի վերաշխուժացման աշխատանքին:

1973-ին, հայ սկաուտութեան հիմնադրութեան վաթսունամ-

եակին, ան կը պարզեատրուի լիբանանեան պետութեան կողմէ՝ առ ի գնահատանք Սուրիոյ եւ Լիբանանի մարզական եւ սկաուտական կեանքին իր ունեցած ներդրումին:

Կը մահանայ 26 Մայիս 1980-ին:

## ԹՈՐԻԿԵԱՆ ԲԻԻԶԱՆԴ

Հ.Մ.Ը.Մ.ի 100 տարուան պատմութեան 90 տարիներուն պատմագիրն է բազմա-վաստակ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Բիւզանդ Թորիկեան: Ան կը նկատուի Հ.Մ.Ը.Մ.ի սփիւռքեան գործունէութեան երկրորդ սերունդի ամենէն կարկառուն ղեմքերէն մէկը, որուն վիճակուած էր, հաւատաւոր այլ Հ.Մ.Ը.Մ.ականներու հետ, Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութեան վերածելու պատասխանատու աշխատանքը: Ան ծնած է Հալէպ, 1931-ին եւ փոքր տարիքէն փոխադրուած է Լիբանան:

Եղբ. Թորիկեան Հ.Մ.Ը.Մ.ին մաս կը կազմէ 1943-ին, Պէյրութի Ս. Նշան Վարժարանի աշակերտութեան օրերուն, հանրածանօթ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Լեւոն Արգարեանի շնորհիւ: Այնուհետեւ, ընտանեօք ան կը փոխադրուի Գիւնի, ուր 1951-ին կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի Գիւնիի մասնաճիւղի հիմնադիրներէն: Մինչեւ 1957 մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Գիւնիի մասնաճիւղի յաջորդական վարչութիւններուն, ապա Պէյրութ հաստատուելով՝ վարչական գործունէութիւնը կը շարունակէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին մէջ, 1958-1968 ստանձնելով մասնաճիւղին վարչութեան ատենադպրութեան պաշտօնը:

Եղբ. Բիւզանդ Թորիկեանի նախասիրութիւնը եղած է արժեքիզմը: Ան տիրացած է արժեքիզմի միջազգային իրաւարարի տիտղոսին: Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ, 1965-ին եղած է լիբանանեան արժեքիզմի ֆետերասիոնի հիմնադիր



անդամներեն մեկը, մասնա՝ գլխավոր հիմնադիրներեն ԼԵՎԱՄ-ի մարզախաղերուն:

1969-ին, եղբ. Բիւզանդ Թորիկեան ընտրուած է անդամ Հ.Մ.-Ը.Մ.ի Սերճատր Արեւելքի Շրջանային Վարչութեան, որ օրին կը նկատուէր միութեան գերագոյն մարմինը, տրուած ըլլալով որ ան կը ղեկավարէր Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի մասնաճիւղերը: 1969-1974 Սերճատր Արեւելքի Շրջանային Վարչութեան մաս կազմելէ ետք, 1974-ին Հ.Մ.Ը.Մ.ի Պատգմատրական առաջին Ընդհանուր Ժողովին, եղբ. Բիւզանդ Թորիկեան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ: Հետագային, ան կը վերընտրուի 1979-ին եւ 1983-ին: Այսպէս, ան Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային բարձրագոյն մարմիններուն մաս կը կազմէ 1969-1987՝ 18 տարի անընդմիջաբար: 1999-ին, չորս տարուան համար, ան դարձեալ կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ կը վարէ միութեան ատենապետի պաշտօնը:

1990-ականներու սկիզբը, եղբ. Բիւզանդ Թորիկեան կը լծուի Հ.Մ.Ը.Մ.ի հայամուէր գործունէութեան պատմագրութեան աշխատանքին եւ չորս հատորով կը հրատարակէ միութեան պատմութիւնը՝ նախահիմնադրութեան հանգրուանէն մինչեւ 21-րդ դարու սկիզբը: «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Պատմութիւն» խորագրեալ իր ստուար աշխատասիրութիւնները լոյս կը տեսնեն 1995-ին, 1999-ին, 2003-ին եւ 2007-ին:

Ան ներկայ գտնուած է Հ.Մ.Ը.Մ.ի առաջին 10 Ընդհանուր Ժողովներուն: Յաճախ հանդէս եկած է բանախօսութիւններով եւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին աշխատակցութիւններով: Երկար տարիներ մաս կազմած է «Մարզիկ»ի խմբագրական եւ վարչական կազմերուն: 2004-ին, ան արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Եղբ. Բիւզանդ Թորիկեան կը մահանայ 6 Դեկտեմբեր 2016-ին:

## ԻՆՃԷԵԱՆ ՊԵՏԻԿ

Եղբ. Պետիկ Ինճեան Հայ Դատի բազմին գոհուած Հ.Մ.Ը.Մ.ականն է, որ 27 Մայիս 1976-ին նահատակուած է Փարիզի մէջ, իրեն վստահուած պատասխանատու գործը կատարելու ճամբուն վրայ:



Եղբ. Պետիկ ծնած է 1950-ին, Այնճար: Փոքր տարիքէն անմաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ին, իբրեւ գայիկ եւ սկաուտ: Եղած է գործօն անդամ եւ վարած է բազմաթիւ բանակումներ, արշաւներ եւ ձիւնագնացութիւններ:

Իբրեւ տիպար Հ.Մ.Ը.Մ.ական, Պետիկ Ինճեան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի միաւորի խմբապետ, Սկաուտ. Խորհուրդի անդամ եւ մասնաճիւղի վարչական: Ան մեծ սէր ունեցած է ֆութպոլի հանդէպ եւ կազմած ու մարզած է մասնաճիւղին սկաուտական ֆութպոլի խումբը: Շրջան մը եղած է մասնաճիւղին ֆութպոլի առաջին խումբին մարզիչն ու խմբապետը:

1973-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի ֆութպոլի խումբը Պէքայի առաջնութիւնը կը շահի շնորհիւ եղբ. Պետիկի ջանքերուն: Տարի մը ետք, ան կը հրաւիրուի մաս կազմելու Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ֆութպոլի ներկայացուցչական խումբին:

## ԽԱՆՃԵԱՆ ՍՏԵՓԱՆ

Պոլիսէն հեռու գտնուելով՝ Ստեփան Խանճեանի անունը ընդհանրացած չէ, իբրեւ մարզական առաջնորդ: Այսուհանդերձ, Խանճեան Հ.Մ.Ը.Մ.ի առաջին սերունդի պատրաստուած վարիչներէն մէկն էր, ունէր յարատելելու կամք, կանոնաւոր աշխատանքի ոճ, գործի բժախնդրութիւն եւ առողջ ոգի:



Խանճեան աւարտած է Լիոնի ակադեմիան ու անցած է Ադեքսանդրիա, իբրեւ մարզանքի ուսուցիչ Պօղոսեան Վարժարանի եւ Ֆրանսական Քոլէճի: Այնտեղ իր գործունէութիւնը մեծապէս գնահատուած է:

Խանճեան հիմնադիր-վարիչը եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Ադեքսանդրիոյ «Կամք» մարմնամարզական միութեան:



### ԽՈՅԵԱՆ ՏԻԳՐԱՆ Ա. ՔՆՆՅ.

Տիգրան Ա. Քինյ. Խոյեան ծնած է Տրապիզոն, 1895-ին: Մանկութիւնը կ'անցնէ Մարմարա ծովուն Գընալը կղզին: Ան «Փրոթի»ի անդամներէն էր ու անոնցմէ ամենէն ընդունակը: Գնալրի մէջ կը ծանօթանայ Վահան Չերազին: Մեծապէս կ'ազդուի անկէ եւ կը դառնայ օգնականը: Նախնական կրթութիւնը կղզիին ազգային վարժարանին մէջ ստանալէ ետք՝ Խոյեան կը փոխադրուի Պոլիս եւ կը յաճախէ Կեդրոնական Վարժարան: Երկրորդական ուսման աւարտին, 1913-ին կը մտնէ սպայից վարժարան, ուր կը յաճախէ մինչեւ 1915, երբ վրայ կը հասնի Ա. Աշխարհամարտը: Մինչեւ պատերազմի աւարտը ան թրքական բանակին կը ծառայէ իբրեւ սպայ:

1918-ին, Խոյեան «Փրոթի»ն կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր ժողովին: Կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան քարտուղարը: Միաժամանակ կը վարէ Որբախնամ Մարմնի Կեդրոնական Կայանի տնօրէնութիւնը: 26 Յուլիս 1920-ին, իբրեւ մարզանքի ուսուցիչ եւ սկաուտ խմբապետ, Վահան Չերազի եւ Օննիկ Եազմաճեանի հետ մաս կը կազմէ հայրենիք գործուղուած Հ.Մ.Ը.Մ.ի եռանդամ մարմինին: 1920-ին, Հայաստանի խորհրդայնաց-

ման նախօրէին, կը վերադառնայ Պոլիս, ուրկէ կը փոխադրուի Նիւ Եորք: Միացեալ Նահանգներու մէջ ան կ'ունենայ ազգային եւ միութենական բեղուն գործունէութիւն: Կը յաճախէ Սփրինկֆիլտի մարզական համալսարանը, որմէ կը վկայուի 1926-ին:

Խոյեան 1955-ին կը ձեռնադրուի քահանայ եւ կը ծառայէ Պոսթընի, Շիքակոյի, շրջան մըն ալ՝ Մոնթրէալի մէջ: Յառաջացած տարիքին կը հաստատուի Ֆիլատելֆիա, ուր կը վախճանի 1990-ին:

1978-ին ան արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանին: 1983-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մատենաշարով լոյս տեսած է իր յուշերը ներկայացնող «Նահատակ ցեղի անմահներ» գիրքը:

## ԾԱՏՈՒԲԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Լիբանանեան հեծելարշաւի պատմութեան մէջ իր անունը ոսկի տառերով արձանագրած Հ.Մ.Ը.Մ.ական Յովհաննէս Ծատուրեան, իր եղբօր՝ Վարդգէսի հետ, երեւոյթ մը կը հանդիսանայ միութեան պատմութեան մէջ:

Եղբ. Յովհաննէս Ծատուրեան Հ.Մ.Ը.Մ.ին մաս կը կազմէ փոքր տարիքին, իր առաջին քայլերը առնելով սկաուտական մարզին մէջ, մասնակցելով սկաուտական հաւաքներու եւ բանակումներու, ապա՝ կ'ըլլայ մարզիկ, մարզիչ, հեծելարշաւի յանձնախումբի անդամ, Պէյրութի մասնաճիղի վարչական, հուսկ՝ ատենապետ, հեծելարշաւի ֆետերասիոնի փոխ նախագահ, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ:

Հեծիկին հետ եղբ. Յովհաննէս Ծատուրեանի հեքիաթը կը



սկսի 1951-ին, երբ սիրողական մարզիկներու յատկացուած առաջին պաշտօնական մրցումին՝ Պէյրութ-Տամուր-Պէյրութ մայրուղիին վրայ ան կը նուաճէ առաջին դիրքը:

1952-ին ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարշաւի խումբին՝ արձանագրելով փայլուն արդիւնքներ ու բարձր պահելով միութեան դրօշը լիբանանեան եւ արաբական ախոյեանութիւններու մէջ:

Եղբ. Ծատուրեան 1956-ին Լիբանանը կը ներկայացնէ Եգիպտոսի մէջ տեղի ունեցած մրցաշարքի մը, իսկ 1957-ին, միջ-արաբական խաղերուն ան կը հանդիսանայ 5-րդ:

1960-ին եղբ. Յովհաննէս կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարշաւի խումբերու մարզիչի պաշտօնը՝ հոն եւս արձանագրելով նոր մրցանիշ մը, երբ Հ.Մ.Ը.Մ. յաջորդական հինգ տարի կը տիրանայ Լիբանանի հեծելարշաւի խմբային ախոյեանութեան՝ 1961, 1962, 1963, 1964 եւ 1965 տարիներուն:

Իր եւ եղբօր՝ Վարդգէսին ցուցմունքներով ու անոնց մարզումներով, Հ.Մ.Ը.Մ.ական Հրաչ եւ Վաչէ Ծատուրեան եղբայրները Լիբանանը կը ներկայացնեն ողիմպիական խաղերուն:

Իբրեւ մարզիկ եւ մարզիչ իր արձանագրած փայլուն արդիւնքներէն ետք, եղբ. Յովհաննէս Ծատուրեան կը նուիրուի վարչական գործունէութեան, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնին մէջ՝ դառնալով ֆետերասիոնի փոխ նախագահ, իսկ 2006-ին կը ստանայ Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի պատուոյ անդամի տիտղոսը:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը զինք կը պատուէ «Ծառայութեան» շքանշանով, իսկ 2008-ին ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Եղբ. Յովհաննէս կը մահանայ 18 Յունիս 2012-ին:

## ԾԱՏՈՒԹԱՆ ՎԱՐԴԳԷՍ



Լիբանանեան հեծելարշաւի անկրկնելի դէմքերէն Վարդգէս Ծատուրեան, իր եղբօր՝ Յովհաննէսի հետ, մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական աստղահոյլին: Ան Հ.Մ.Ը.Մ.ին կ'անդամակցի 1957-ին, իբրեւ հեծելանորդ: Կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Լիբանանի ազգային խումբի մարզիկ, մարզիչ, հեծիկի յանձնախումբի ատենապետ, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վարչական, ինչպէս նաեւ՝ Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի անդամ:

1960-ական թուականներուն, երբ. Վարդգէս մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարշաւի այն խումբին, որ կը հաստատէ մրցանիշ մը, երբ Հ.Մ.Ը.Մ. յաջորդական հինգ տարի կը շահի Լիբանանի հեծելարշաւի խմբային ախոյեանութիւնը՝ 1961-1965:

Եղբայր Վարդգէս բազմիցս հանդէս կու գայ Լիբանանի ազգային խումբին հետ, իր մասնակցութիւնը բերելով հեծելարշաւի միջազգային շարք մը մրցաշարքերու:

1959-ին ան կը մասնակցի Սիջերկրականեան խաղերուն, 1963-ին՝ Իտալիոյ Նափոլի քաղաքին մէջ տեղի ունեցած միջազգային մրցաշարքին, իսկ 1966-ին՝ Թայլէնտի միջազգային մրցաշարքին եւ ասիական խաղերուն:

Վերջին անգամ ան հեծելարշաւի մրցաշարք մը կը շահի 1972-ին:

Իբրեւ մարզիկ եւ մարզիչ իր արձանագրած փայլուն արդիւնքներէն ետք, եղբայր Վարդգէս կը նուիրուի վարչական գործունեութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնին մէջ:

1980-ական թուականներուն ան կը հետեւի մարզիչներու



պատրաստութեան դասընթացքներու՝ հռչակաւոր Կիսօ Բոսթայի հսկողութեամբ:

Եղբ. Վարդգէս կը հանդիսանայ ԼԵՎԱՄ-ի հիմնադիր անդամներէն մէկը՝ տարիներ շարունակ վարելով ԼԵՎԱՄ-ի յանձնախումբին ատենապետութեան պաշտօնը:

Եղբ. Վարդգէս կը մահանայ 24 Սեպտեմբեր 2012-ին:



### ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԳԷՈՐԳ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանի երախտաշատ դէմքերէն մէկն է եղբ. Գեորգ Կարապետեան: Ան ծնած է 1941-ին, Հալէպ: Փոքր տարիքին մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտական շարքերուն եւ կը հասնի մինչեւ Վարիչ Առաջնորդի աստիճանին: Միաժամանակ, ան կը մասնակցի մարզական խաղերու, յատկապէս՝ աթլէթի եւ ֆութպոլի: Կը կրէ սկաւտական պատուոյ առաջին խումբին ու ապա՝ ներկայացուցչական խումբին շապիկները: Մաս կը կազմէ նաեւ Հալէպի ֆութպոլի երիտասարդական կազմին: Կարճ ատեն մը, Դամասկոս զինուորական ծառայութեան շրջանին, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղի ֆութպոլի Ա. խումբին:

Եղբ. Գեորգ Կարապետեան երկար տարիներ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի վարչութեան, ապա՝ Սուրիոյ Շրջանային Վարչութեան: Ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական վեց Ժողովներու եւ 1999-ին, Պատգամաւորական 8-րդ ժողովին, կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Եղբ. Գեորգ Կարապետեան կը մահանայ 9 Օգոստոս 2012-ին: Յետ-մահու կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

## ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՄԻԱՄԱՆԹՕ



Եղբ. Սիամանթո Կարապետեան ծնած է 20 Յուլիս 1939-ին, Թեհրան: Նախնական եւ բարձրագոյն կրթութիւնը ստացած է Թեհրանի մէջ: Փոքր տարիքէն ան մաս կազմած է Իրանի Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան (ՀՍԱԿ):

1964-ին ան կը պսակուի Էլբա Ղահրամանեանի հետ եւ կը բախտաւորուի երկու զուակով՝ Էմիլ եւ Գարօլին:

1981-ին, եղբ. Սիամանթո ընտանիքին հետ կը հաստատուի Լոնտոն: Թէ՛ Իրանի եւ թէ՛ Լոնտոնի մէջ ան կը վարէ շինարարական անձնական ընկերութիւն:

1985-ին, երբ Լոնտոնի Հայ Սկստակական Միութիւնը Հ.Մ.-Ը.Մ.ին կը միանայ եւ Մեկուսի շրջան կը դառնայ, եղբ. Սիամանթո կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիղի անդրանիկ վարչութեան անդամ եւ ատենապետ: Ան կարեւոր դեր կը ստանձնէ Լոնտոնի մէջ կատարուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ. ընդհանուր բանակումի կազմակերպման աշխատանքներուն:

Իր ժրաջան գործունէութեան շնորհիւ, եղբ. Սիամանթո 1987-ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, իբրեւ Եւրոպայի ներկայացուցիչ:

1988-ին, գլխաւորաբար իր ջանքերով եւ նուիրատուութեամբ կը հիմնուի Լոնտոնի Հայ Կեդրոնը՝ Armenian Community Center-ը (ACC):

Նոյն տարին, Հայաստանը հարուածած երկրաշարժէն անմիջապէս ետք ստեղծուած ACC-ն կը վերածուի աղէտեալներու օժանդակութեան շտապի: Այս առթիւ եղբ. Սիամանթո կը նուիրէ 20 շարժական տնակներ, որոնք անմիջապէս կ'ուղարկուին Սպիտակ:

Միաժամանակ, եղբ. Սիամանթո հիմնադիրներէն մէկը կը հանդիսանայ Անգլիոյ մէջ կազմակերպուած «Aid Armenia»-ի:

Այդ կազմակերպութեան շնորհիւ, 1990 թուականին բացումը կը կատարուի Վանաձորի մանկական հիւանդանոցին:

Իր ջանքերով, 1989 թուականին, կը կազմակերպուի երկրաշարժի հետեւանքով որբացած երեխաներու Լոնտոն երկարատեւ այցելութիւնը, որուն ընթացքին ան եւ գաղութի այլ անդամներ մկրտութեան կնքահայր կը հանդիսանան երեխաներուն եւ շարունակաբար կը հովանաւորեն զանոնք:

20 Փետրուար 1989-ին, երկրաշարժի աղէտեալ գօտիին վերականգնման գործին իր ունեցած կարեւոր ներդրումին համար, եղբ. Սիամանթօ Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսէն կը ստանայ «Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանը:

Լոնտոն հաստատուելէ ետք, 35 տարի շարունակ, եղբ. Սիամանթօ իր աշխոյժ մասնակցութիւնը կը բերէ Լոնտոնի հայ գաղութի կեանքին: 1980-ական տարիներուն ան կ'անդամակցի բրիտանահայ համայնքային եւ եկեղեցական խորհուրդին եւ իր կապերը միշտ սերտ կը պահէ հայրենիքին հետ:

Եղբ. Սիամանթօ կը մահանայ 27 Մայիս 2016-ին, խոր վիշտ պատճառելով իր հարազատներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:



### ԿԷՕՁԻԻՊԷՕՅԻԲԵԱՆ ԲԻԻՉԱՆԴ

Բիւզանդ Կեօզիպէօյիքեան կը պատկանի Ռոպերթ Քոլէճի խմբակին: Հետեւաբար, ինք ալ մէկն է հայ մարզական շարժումի մղիչ դէմքերէն: Դպրոցը ասարտելէ ետք, կը դառնայ ուսուցիչ, միաժամանակ աւանդելով մարմնամարզ: Այս ձեւով, ան առիթը կ'ունենայ պատրաստելու մարզիկներ, որոնք յաջողութիւններ ձեռք կը ձգեն նախապատերազմեան ողիմպիականներուն: Կեօզիպէօյիքեան եւս կը մասնակցի այդ մրցումներուն եւ կը շահի մրցանակներ: Ան կը խլէ հայկական Բ. ողիմպիականին

բարձրութիւն ցատկելու առաջնութիւնը եւ կը հաստատէ հայկական մրցանիշ մը (1.71 մ.), որ երկար տարիներ կը մնայ անխախտ:

Կէօզիւպէօյիքեանի դերը մեծ կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի կազմութենէն ետք: Ըլլալով խնամակալութեան ընդհանուր տնօրէն, ան մեծապէս կը սատարէ որբանոցներու մէջ սկաուտական շարժումի կազմակերպումին, դռները լայն բանալով Հ.Մ.Ը.Մ.ի մարզիչներուն առջեւ: Ասիկա փոքր նպաստ մը չէր, անշուշտ, ու կը բխէր Կէօզիւպէօյիքեանի այն խոր համոզումէն, որ ո՛չ միայն մարմնակրթանքը, այլեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի, գաղափարախօսութիւնն ու ոգին հարկ էր ներմուծել պատանիներուն մէջ, որոնք այնքան խաթարուած ու անմշակ ձեռով բերուեր մէկտեղուեր էին որբանոցները, անապատներէն թէ թուրքերու տուններէն առնուելով: Կէօզիւպէօյիքեան ապագային դարձաւ կրօնատր (պատուելի) մը:

Վախճանեցաւ Եզիպտոսի մէջ:

## ՀԻՆԴԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Պոլսոյ Նոր Դպրոցի հիմնադիր-տնօրէններէն, ծանօթ մանկավարժ Յովհաննէս Հինդլեան Հայոց մէջ մարմնակրթական ու մասնատրապէս սկաուտական շարժումի գաղափարախօսներէն եղած է: Ան ծնած է 1866-ին, Սկիւտար: Նախակրթութիւնը կը ստանայ Ներսէսեան-Երմոնեան Վարժարանը: Ապա կ'անցնի Ժամանակի նշանատր մանկավարժ Ռեթէոս Պէրպլեբեանի վարժարանը, զոր կ'աւարտէ յաջողութեամբ: Կը դասաւանդէ շարք մը վարժարաններու մէջ: Ըլլալով հմուտ դաստիարակ մը, ան մարմնակրթանքը կ'ըմբռնէ իբրեւ ազդակ մը հայ երիտասարդութեան բարոյական դաստիարակութեան: Ինքն է, որ Շաւարշ Քրիսեանի «Մարմնամարզ»ին մէջ սկաուտութեան



էութիւնը կը պարզէ եւ Ա. Աշխարհամարտէն ետք անոր գաղափարախօսը կ'ըլլայ:

Հինդլեանի գրութիւնները, պրակներու վերածուած, գաւառի մէջ մղիչ ազդակները կ'ըլլան սկաուտական շարժումներու: 1913-ին, իր վարժարանին մէջ ան կը կազմէ հայ առաջին սկաուտական խումբերէն մէկը: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութենէն ետք, ան կը հանդիսանայ միութեան գլխաւոր զօրավիզներէն: Մանկավարժի անվիճելի կարողութիւնը, հանրային դիրքը եւ բարոյական զօրաւոր անհատականութիւնը՝ միացած մարմնակրթական շարժումին ցոյց տուած իր անվերապահ աջակցութեան, ոչ միայն օգտակար կ'ըլլան նախապատերազմեան մարմնակրթական կեանքին, եւ պատերազմէն ետք՝ Հ.Մ.Ը.Մ.ին, այլեւ կը նպաստեն անոնց վայելած հանրային համակրանքին տարածման:

Հինդլեան կը մահանայ 16 Փետրուար 1950-ին: Ան հեղինակ է բազմաթիւ դասագիրքերու, գրքոյկներու եւ մամուլին մէջ ցրուած մանկավարժական յօդուածներու:



### ԾԻՉՄԷՃԵԱՆ ՀԱՅԿ

Հայկ Ծիզմէճեանի անունը մարզական կեանքին կապուած է 1918-էն ետք: Ա. Աշխարհամարտէն առաջ անդամ էր Սկիւտարի «Րաֆֆի Յառաջդիմական»-ին եւ կազմակերպողներէն էր անոր արշաւներուն. կ'անդամակցէր գործադիր մարմնին, իսկ 1913-ին մաս կը կազմէր Սկիւտարի Հայ Սկաուտներու տեղական ժողովին:

Իր այս կապը բաւական կ'ըլլայ, որ Չինադադարի առաջին օրերուն, ինք եւս մասնակցի այն ժողովին, որ հիմը պիտի դնէր Հ.Մ.Ը.Մ.ին: Ծիզմէճեան կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն մէկը: Ան մեծ եռանդով կը փարի նորաստեղծ շարժումին: Եւ խորապէս գիտակցելով Հ.Մ.Ը.Մ.ի վերապահ-

լած ազգային վսեմ գործին, արտակարգ աշխուժութեամբ մը կը նուիրուի տողոց հոգեկան ու բարոյական զարգացման գործին: Մարզական ոչ մէկ բաժին կը ստանձնէ, բայց կ'ըլլայ ամէնուն հետ, ամէն տեղ ու ամէն ատեն, նոյնիսկ իր վաճառատունը ձեռով մը Հ.Մ.Ը.Մ.ի գրասենեակը դարձնելով: Անշուշտ, այս բոլորին մէջ զգալի դեր կը կատարեն ո՛չ թէ մարզական կամ սկաուտական նիւթերու իր ծանօթութիւնը, այլ՝ իր ոգին, նկարագիրը, խառնուածքին ջերմութիւնը եւ ընկերական ու ջանադիր տրամադրութիւնները, ինչպէս նաեւ իր ներքին ջերմ հաւատքը՝ գործին վսեմութեան հանդէպ:

Հայկ Ճիզմէճեան անտիտղոս տիտղոսատր մը կ'ըլլայ, ու Հ.Մ.Ը.Մ.ի մէջ բոլորը իր իրաւասութիւններուն սահմանները չեն փնտռեր, բայց թեքնիք եւ փորձառու ղեկավարներու կողքին նաեւ այս վերջինները միշտ կը փնտռեն զինք, որ իր կարգին, աշխատանքներ չ'ընտրեր, ու գրեթէ ամէն գործի կը բերէ իր անվերապահ աջակցութիւնը:

Ճիզմէճեան, որ խօսելու շնորհ ունէր, յաճախ կ'այցելէ թաղէ թաղ: Կը բանախօսէ ու կը դասախօսէ: Շուտով իր անունը կը նոյնանայ մարզական կեանքի աչքառու անուններուն հետ:

1922-ի վերջաւորութեան ան կ'անցնի Եգիպտոս: Ոգին ու համոզումները կը մնան անփոփոխ, բայց իր գործունէութիւնը անհամեմատօրէն կը նուազի, թէւ իր գրութիւններով ան նոյն խանդն ու հաւատքը կը ցուցաբերէ մինչեւ մահ:

## ՄԱՆՈՒՄԵԱՆ ՄԿՐՏԻՉ

Մկրտիչ Մալումեան «Տորք»ի նախկին մարզիկներէն է: 1918-ի զինադադարէն ետք ան սկաուտ խմբապետ է նախ՝ Խասգիւղի մասնաճիւղին, ապա՝ Բերայի եւ Գատը գիւղի որբանոցներուն մէջ:

Միաժամանակ, ան կը պաշտօնավարէ Պոլսոյ որբանոցնե-



րուն եւ կարգ մը վարժարաններուն մէջ, իբրեւ մարզանքի ուսուցիչ: 1923-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ կը գործուողի Յունաստան եւ հոն պաշտօնի կը կոչուի Ամերիկեան Նպաստամատոյց Ընկերութեան կողմէ: 1924-ին կ'անցնի Ֆրանսա եւ կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի Մարսէլի մասնաճիւղը: Կը կազմակերպէ նաեւ միջազգային ախոյեանական մրցումներ, ուր Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներ կը խլեն առաջնութիւններ: 1921-ին կը հաստատուի Փարիզ: Կ'ըլլայ ֆութպոլի ֆետերասիոնի պաշտօնական իրաւարար, կ'անդամակցի նաեւ Congres International de l'education physique et sport-ի: Ֆրանսական կառավարութեան կողմէ կ'արժանանայ officier d'Academie եւ Education Physique-ի մետալներուն:



## ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՂԻՇԷ

Եղբ. Եղիշէ Մանուկեան ծնած է 1914-ին, Ատանա: Փոքր տարիքին ան կը կորսնցնէ ծնողքը: Մինչեւ 1919 կը մնայ Մերսինի որբանոցը: Այնուհետեւ կը փոխադրուի Լիբանան, ուր նախակրթութիւնը կը ստանայ Աշքուրի, ապա՝ Պէյրութի Քէլէքեան որբանոցներուն մէջ:

1926-ին ան կը դրկուի Կիպրոս՝ Մելքոնեան կրթական հաստատութեան մէջ ուսանելու համար:

Փոքր տարիքէն ֆութպոլի սիրահար, 1930-ին ան արդէն ուշագրաւ ֆութպոլիստ է Կիպրոսի «Կայծակ» եւ Մելգոնեանի առաջին խումբերէն:

1931-ին, ան կը վերադառնայ Պէյրութ, անկէ կ'անցնի Դամասկոս, փնտռելու համար երեք եղբայրներն ու չորս մօրեղբայրները: Կը գտնէ բոլորն ալ: Այս շրջագայութեան ընթացքին ան կ'արձանագրուի Հ.Մ.Ը.Մ.ին եւ մուտք կը գործէ Հ.Յ.Դաշնակցութեան շարքեր:

Վերադառնալով Մելգոնեան, կրթութիւնը կ'աւարտէ 1932-ին:

Եղիշէ Մանուկեանի կեանքը Հ.Մ.Ը.Մ.ի մէջ կը սկսի 1932-ին, Դամասկոսի մասնաճիւղին մէջ եւ կը շարունակուի Պէյրութ, Պաղեստին եւ դարձեալ Պէյրութ: Իբրեւ տոկուն յետսապահ, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ախոյեան եւ բաժակակիր խումբերուն: Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի խումբին հետ ան Լիբանանի ախոյեանութիւնը կը շահի 1943-ին, 1944-ին, 1945-ին եւ 1950-ին, բաժակը՝ 1943-ին եւ 1948-ին, Պէյրութի քաղաքապետութեան բաժակը՝ 1940-ին:

Եղիշէ Մանուկեան երիտասարդ տարիքէն մաս կը կազմէ միութեան վարչական կազմերուն: Այսպէս, 1935-ին, Սուրիոյ եւ Լիբանանի Պատգամաւորական չորրորդ ժողովը զինք կ'ընտրէ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամ: 1937-ին ան կը փոխադրուի Հայֆա: Շրջանային Վարչութիւնը առիքէն օգտուելով իրեն պարտականութիւն կու տայ վերակենդանացնել տեղւոյն մասնաճիւղը: Ան ձեռնհասօրէն կը վերակազմէ ու կը մարզէ Հ.Մ.Ը.Մ.ի Հայֆայի, Եաֆայի եւ Երուսաղէմի ֆութպոլի խումբերը, ինչպէս նաեւ կը կազմակերպէ շրջանի միջ-մասնաճիւղային առաջին խաղերը:

Պէյրութ վերադարձին, 1941-ին, Եղիշէ Մանուկեան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի անդամ՝ սկաւառական բաժինի ներկայացուցիչի պաշտօնով: 1943-ին ան կրկին մաս կը կազմէ վարչութեան՝ այս անգամ մարզական պատասխանատուի հանգամանքով:

Փայլուն մարզիկ մը ըլլալու կողքին, Եղիշէ Մանուկեան կը հանդիսանայ հմուտ հրապարակագիր եւ գաղափարախօս: Միաժամանակ, ան կ'ունենայ կրթական բեղուն գործունէութիւն՝ երկար տարիներով ծառայելով Դամասկոսի եւ Պէյրութի հայկական վարժարաններուն:

Միութենական եւ ազգային իր երկարամեայ նուիրեալ ու անշահախնդիր գործունէութեան առ ի գնահատանք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը 14 Մայիս 1992-ին, զինք կը պարգեւատրէ միութեան «Արժանեաց» շքանշանով:

Եդր. Եղիշէ Մանուկեան կը մահանայ 1994-ին:





## ՄԱՍՊԱՆԱՃԵԱՆ ԼՈՒՏԵՐ

Եղբ. Լուտեր Մասպանաճեան կը նկատուի Հ.Մ.Ը.Մ.ի իսկական առաքեալը Միջին Արեւելքի մէջ: 1925-ին, խումբ մը գաղափարապաշտ երիտասարդներու հետ, ան հիմը կը դնէ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիղին եւ այնուհետեւ քառորդ դար մաս կը կազմէ անոր իրերայաջորդ վարչութիւններուն, իբրեւ ատենապետ, սկաուտականի ներկայացուցիչ, ֆութպոլի եւ աթլէթի պատասխանատու:

Եղբ. Լուտեր Մասպանաճեան ծնած է Այնթապ, 2 Փետրուար 1898-ին, անտարանական ընտանիքի մը յարկին տակ: Ան իր կրթութիւնը ստացած է Այնթապի Ամերիկեան Քոլէճը՝ մարզանքի ուսուցիչ ունենալով Մ. Նահանգներու ուսումնառութենէն նոր վերադարձած Մանասէ Միսիրեանը:

1917-ին, դեռ պատանի, թուրքերը Այնթապի մէջ զօրակոչ կը յայտարարեն եւ հօրը հետ զինք ալ բանակ կը տանին: 1918-ին, երբ անգլիական բանակը Այնթապ կու գայ, իբրեւ թարգման ան կը ծառայէ անգլիական բանակին:

Այնթապի մէջ, եղբ. Լուտեր մաս կը կազմէ «Համազասպ» մարզական միութեան, որ նկատառելի գործունէութիւն կ'ունենայ մինչեւ Յեղասպանութիւն:

1918-ի զինադադարին, երբ վերապրող այնթապցիները կը վերադառնան հայրենիք՝ իրենց կործանած բոյները վերականգնելու, կը վերակազմուի «Համազասպ»ը: Սակայն, հայութեան հանգիստը երկար չի տներ: Քենալական Թուրքիոյ ձեռնարկած հալածանքներուն եւ ճնշումներուն հակազդելով, հայաբնակ այլ շրջաններու նման, Այնթապ եւս կը դիմէ ինքնապաշտպանութեան: Եղբ. Լուտեր կը մասնակցի Այնթապի գոյամարտին, ապա իր ժողովուրդին հետ կ'անցնի Սուրիա՝

հաստատուելու համար Հալեպ, ուր «Համագասպ» միութեան վերապրող վարիչները 1922-ին կը վերակազմեն իրենց միութիւնը եւ կը գործեն երեք տարի: 1925-ին, տոքթ. Ատուր Գապաքեանի նախաձեռնութեամբ, մարզական այլ միութիւններու հետ, «Համագասպ» եւս մաս կը կազմէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան:

Հալեպի մէջ, եղբ. Լուտեր կարեւոր դեր կը խաղայ հայութեան ազգային կեանքի կազմաւորումին եւ կազմակերպումին մէջ: Տասնամեակներ շարունակ ան կը լծուի Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Յ.Դ-աշնակցութեան ծրագիրներուն գործադրութեան, ցուցաբերելով վարչական փայլուն կարողութիւններ:

Հալեպի մէջ ան կը ճանչուի իբրեւ «Պարոն Լուտեր»: Իր ջանքերուն շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ը մարզական տարածուն շարժում մը կը դառնայ Սուրիոյ մէջ: Եղբ. Լուտեր արհեստով դերձակ էր, բայց ո՞վ էր աշխատողը: Ան կը շրջէր ակումբէն դաշտ, դաշտէն ակումբ, ժողովէ ժողով, կառավարչատուն, Առաջնորդարան եւ տպարան, մոռնալով տուն ու տեղ: Ամուսնացած էր եւ հայր երկու զաւակի՝ մանչ մը եւ աղջիկ մը:

Հ.Յ.Դ-աշնակցութեան Սուրիոյ Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչի պաշտօնը վարած եւ, իբրեւ հանրային-կուսակցական գործիչ, Սուրիոյ բոլոր շրջաններուն մէջ գործած եղբ. Լուտեր 1946-ին կը ստանձնէ նաեւ «Արեւելք» օրաթերթի վարչական տնօրէնի պաշտօնը եւ «Արեւելք-Մարգաշխարհ»-ի խմբագրութիւնը՝ եղբայրներ Զաւէն Սապունճեանի եւ Պարգեւ Միսիրեանի հետ միասին:

Իր կուսակցական պատկանելիութեան համար եղբ. Լուտեր կը կրէ նաեւ բանտարկութեան եւ չարչարանքի լուծը: Հակառակ իր յառաջացեալ տարիքին, սակայն, ան կարգապահութեամբ կը տոկայ իրեն բաժին հանուած դժուարութեան:

1968-ին, եղբ. Լուտեր կը գաղթէ Գանատա եւ կը հաստատուի Թորոնթօ, ուր իբրեւ լիազօր ներկայացուցիչը Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութեան վերածող մարմինին, ան

կը գլխատրե Գանատայի եւ Արեւելեան Մ. Նահանգներու մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու միացումով Շրջանային Վարչութիւն մը յառաջացնելու աշխատանքը:

Եղբ. Լուտեր կը մահանայ 23 Սեպտեմբեր 1976-ին:

Յետ-մահու, Յունուար 1977-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը զայն կը պարգեւատրէ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:



## ՍԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԽԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ.ի եւ Սուրիոյ բոլոր ժամանակներու անկրկնելի ֆութպոլիստներէն մէկն է եղբ. Արտաւազդ Մանուկեանը՝ ծանօթ «Արտօ» անունով: Մէկը, որ օրին արժանացած է Սուրիոյ «ֆութպոլի թագաւորը»

կոչումին:

Եղբ. Արտաւազդ Մանուկեան ծնած է 1912-ին, Խարբերդ: 15 տարեկանին ան ֆութպոլ խաղալ սկսած է թաղային խումբերէ: Իր խաղընկերները եղած են Անդրանիկ Ծառուկեանը եւ Մանուկ Թոնդեանը (հետագային՝ Տէր Վրթանէս): Շուտով ան ուշադրութիւնը գրաւած է «Իւնիոն Սփորթի» խումբին, որուն պատասխանատուները զայն հրաւիրած են իրենց կազմին միանալու:

Տարի մը մարզուելէ ետք, 1928-ին ան ընդունուած է «Իւնիոն Սփորթի»ի առաջին խումբէն ներս: 1930-ին փոխադրուած է Պէլրութ, իբրեւ ուսանող Միսիոն Լայիք Կրթական Հաստատութեան: Ուսանողական տարիներուն ան խաղացած է «Ռընեսանս» խումբէն: Մաս կազմած է նաեւ ուրիշ խումբերու:

Այդ տարիներուն, Լիբանան տակաւին ֆութպոլի ֆետերասիոն չունէր եւ մարզիկ մը կրնար խաղալ բոլոր խումբերու հետ: Այսպէս, Փիէր Ժենայէլ բազմիցս զայն տարած է Ժեզ-

ուիթներու խումբը, որուն յետապահն էր Շարլ Հըլուն, Լիբանանի ապագայ նախագահը (1964-1970): Շրջան մը ան հրավիրուած է նաեւ Սուրիոյ ֆութպոլի ազգային խումբ:

Ֆութպոլի գուգահեռ, եղբ. Արտաւազը զարգացուցած է թենիսը եւ 1934-1940 հանդիսացած է թենիսի Հալէպի բոլոր ճիւղերու ախոյեան: Մասնակցած է նաեւ աթլէթիզմի մրցաշարքերու:

1942-ին, մեծանուն ֆութպոլիստը, թենիսի նշանաւոր ախոյեանը եւ անուանի աթլէթը մարզական աշխարհին հրաժեշտ կու տայ իր փառքի գագաթնակէտին, թենիսի ախոյեանական 17 բաժակներու եւ աթլէթի 38 մետալներու տիրանալէ ետք:

Այնուհետեւ ան կ'ապրի լուսարձակներէ հեռու եւ իր մահկանացուն կը կնքէ Պէյրութի մէջ, 7 Սեպտեմբեր 1984-ին:

## ՄԱՐՏՈՅԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Եղբ. Յովհաննէս Մարտոյեան ծնած է 1936-ին, Երուսաղէմ: 1938-ին ընտանիքին հետ կը փոխադրուի Սալթ, Յորդանան: 12 տարեկանին ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի



Ամմանի սկաուտական շարքերուն: Կը ստանձնէ Փոխ Առաջնորդի եւ Առաջնորդի աստիճան եւ գայլիկապետի պաշտօն:

1950-1963 եղբ. Մարտոյեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի միջ-մասնաճիւղային Նաւասարդեան տողանցքներուն: 1951-ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի սկաուտութեան ընդհանուր խմբապետ: 1958-ին ան կը նախաձեռնէ արեւոյշներու եւ արծուիկներու խումբերու կազմութեան: 1960-1961 մաս կը կազմէ մասնաճիւղի վարչութեան:

1963-ին Աւստրալիա հաստատուելէ ետք, եղբ. Մարտոյեան այլ եղբայրներու հետ կը ձեռնարկէ սկաուտական խումբի մը կազմութեան: 1965-ին ան կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ

առաջին մասնաճիւղին հիմնադիրներէն: Կ'ընտրուի վարչութեան անդամ եւ կը ստանձնէ սկաուտութեան ընդհանուր խմբապետի պարտականութիւնը:

1973-ին ան իր մասնակցութիւնը կը բերէ Սիտնիի արեւմտեան շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի հիմնադրութեան: 1974-ին կ'ընտրուի վարչական անդամ, ատենապետ, ապա՝ մասնաճիւղի ընդհանուր խմբապետ, մինչեւ 1979:

1979-ին եղբ. Մարտոյեան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ անդրանիկ Շրջանային Վարչութեան: Երկու շրջան կ'ըլլայ ատենադպիր, իսկ 4 շրջան՝ ատենապետ: Ընդամենը 12 տարի մաս կը կազմէ յաջորդական Շրջանային Վարչութիւններու:

Եղբ. Մարտոյեան 1981-էն սկսեալ կ'աշխատակցի «Մարզիկ»ին: Ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանական առաջին եւ երրորդ ժողովներուն (1985, 1993) եւ 1983-2011 գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր Պատգամատրական Ժողովներուն:

Երկարամեայ իր ծառայութիւններուն իբրեւ գնահատանք, եղբ. Մարտոյեան 1995-ին կը պարգեւատրուի «Ծառայութեան» շքանշանով, իսկ 2007-ին՝ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Եղբ. Մարտոյեան կը մահանայ 13 Սեպտեմբեր 2015-ին, Սիտնի, Աւստրալիա:



## ՄԵՀԵԱՆ ԿԱՐՕ

Կարօ Մեհեան, բուն անունով՝ Կարօ Ղազարոսեան, կը հանդիսանայ Ա. Աշխարհամարտի նախորդող շրջանի մարզիկներէն: 1918-ի զինադադարէն ետք, ան Մաքրի գիւղի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի վարչութեան անդամ է: 1923-ին կ'անցնի Պուլկարիա, ուր կը դառ-

նայ Շրջանային Վարչութեան անդամ: 1925-ին կը հրատարակէ «Հ.Մ.Ը.Մ.»ը, իբրեւ շրջանի պաշտօնաթերթ: 1927-ին, «Հ.Մ.Ը.Մ.»ը «Արի» թերթին միանալով կը սկսի լոյս տեսնել «Մարզիկ» անունով, դարձեալ իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ շրջանի պաշտօնաթերթ:

Կարօ Մեհեան 1938-ին կ'անցնի Ֆրանսա. հոն աշխատանքի մեծ բաժին մը կ'ունենայ «Հ.Մ.Ը.Մ.ի քսանամեայ յուշարձան»ի խմբագրութեան գործին մէջ: Ապա կ'անցնի Պուլկարիա, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի գործիչ: 1944-ի Հոկտեմբերին, երբ համայնավարները կը գրաւեն Պուլկարիան, ան ալ ուրիշ ազգայիններու հետ (ընդհանրապէս դաշնակցական գործիչներ ու վարիչներ) ձերբակալուելով կ'աքսորուի Սիպերիա:

Երկար տարիներ քսորավայրին մէջ տաժանելի կեանք մը ապրելէ ետք, Ստալինի մահէն ետք (1953), Կարօ Մեհեան խումբ մը ընկերներու հետ ազատ կ'արձակուի եւ ձեւ մը գտնուելով կ'ապաստանի Ֆրանսա, ուր կը մահանայ 1984-ին:

## ՄԵՀԻՐԱՊԵԱՆ ԾԱԽԱՐՇ Ա. ՔՀՆՅ.

Հ.Մ.Ը.Մ.ի աւագ սերունդի ներկայացուցիչներէն է Ծախարշ Ա. Քհնյ. Մեհրապեան, աւագանի անունով՝ Համագասպ, որ ծնած է 1905-ին, Բարձր Հայքի Դերջան գաւառի Դերնիկ գիւղը: Ան իր քահանայ հօր եւ երկու քոյրերուն հետ 1913-ին կ'անցնի Պոլիս, իսկ 1914-ին՝ Կիլիկիա:

Ֆնտրընաքի հերոսամարտէն ետք, իր հօր՝ Տէր Եղիշէ քահանային հետ կը բռնէ քսորի ճամբան, Հալէպէն Ղաթմա, Ռաս Իւլ Այն եւ Մուսուլ, օրհասական երեք տարիներու ողիսական մը ապրելով: Ռաս Իւլ Այնի մէջ, Տէր Եղիշէ կը վարէ տարագիր 30 հազար հայերու հոգեւոր հովութիւնը, մինչ պատանի Համագասպ, անչափահաս 11 բախտակիցներու հետ,



քանի մը անգամ մահէ ազատելէ ետք, կը վիրաւորուի գանկէն, զիստէն եւ ոտքէն:

1918-ին, անգլիական բանակին Մուսուլ մուտքէն ետք, Համազասպ արքայի բազմահարիւր վիրաւորներու հետ կը հիւրընկալուի հիւանդանոցի մը մէջ, ուր ենթակայ կը դառնայ ոտքը կորսնցնելու վտանգին: Յանդգնութիւնը կ'ունենայ սակայն փախչելու հիւանդանոցէն եւ անցնելու Հալէպ, ուր քանի մը ամիս կը մնայ Սապուն Խանի որբանոցը:

Այնուհետեւ, վիրաւոր ոտքը քաշկռտելով՝ Հալէպէն կը հասնի Պոլիս, ուր Գարակէօզեան որբանոցի եւ Ունճեան-Արամեան բարձրագոյնի մէջ կ'աշակերտէ Յակոբ Օշականի եւ Շաւարշ Քրիսեանի սաներէն տարօնցի Սուրէն Բաբախեանի:

Որբանոցի հայաշունչ մթնոլորտին մէջ մեծցող պատանի Համազասպ կը հետեւի սկաուտական եւ մարզական դասընթացքներու (Ֆութպոլ, լող, արթիթիզմ): Հակառակ իր վնասուած ոտքին, ան յամառօրէն կը հետեւի փորձերու եւ որբանոցին ախոյեանը կը դառնայ բարձրութիւն ցատկելու, մէկ քայլ եւ երեք քայլ ոստումի մարզաձեւերուն:

Թուրքիոյ մէջ Քեմալական շարժումի յաջողութենէն եւ Փոքր Ասիոյ աղէտէն ետք, 1922-ին, կը փոխադրուի Յունաստան. Գորֆու, Սիրա կղզիներ եւ ապա՝ Գաւալայի եւ Տրամայի որբանոցները: Ուր որ կը գտնուի, կը հիմնէ մարզական-սկաուտական խումբեր: Ի վերջոյ, Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի հաշուեյարդարին բերումով, Թրակիոյ եւ Մակեդոնիոյ կարգ մը գիւղերը շրջելէ ետք, կը հաստատուի Սելանիկ, ուր մինչեւ 1928 կը նուիրուի տեղւոյն նոր սերունդի կազմակերպման գործին: 1928-ին կ'անցնի Աթէնք, ուր 1933-ին կը կազմէ ընտանեկան իր բոյնը:

Աթէնքի մէջ, Համազասպ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն կը միանայ իբրեւ մարզիկ եւ վարչական պատասխանատու: Շուտով, Գէորգ Յաբէթեանի եւ Դանիէլ Դանիէլեանի հետ ան կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի կարկառուն ղեմներէն:

Երկրորդ Աշխարհամարտէն ետք (1939-1945), իբրեւ Յու-

նաստանի Շրջանային Վարչութեան անդամ, ան մեծ եռանդով կը լծուի Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը վերակազմակերպելու եւ մարզական կեանքը վերակենդանացնելու աշխատանքին:

Սկզբնական շրջանին մամլոյ աշխատաւոր, հետագային «Քոտաք» լուսանկարչական ընկերութեան արուեստին տիրանալով, Համազասպ Աթենքի մէջ կ'ունենայ իր սեփական խանութը, ուր կը գործէ մինչեւ 1949, երբ կ'ընդունի քահանայական ծառայութիւն կատարել՝ ներգաղթի հետեւանքով առանց հոգեւոր հովիւի մնացած Աթենքի հօտին:

Իբր գնահատանք իր գործունէութեան, ան կ'անուանուի Տ. Շաւարշ, վերապրեցնելու համար յիշատակը հայ մարմնակրթանքի ռահվիրայ Շաւարշ Քրիսեանի:

1951-ին, հարաւային ամերիկահայոց Հայրապետական Պատուիրակ Գարեգին Արք. Խաչատուրեանի հրաւերով կը մեկնի Պուէնոս Այրէս, ուր մինչեւ իր յառաջացեալ տարիքը կը ստանձնէ տեղւոյն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցոյ հոգեւոր հովիւի պաշտօնը:

Հակառակ քահանայական իր ծառայութեան, Տ. Շաւարշ Արժանթինի մայրաքաղաքին մէջ երկար տարիներ կը շարունակէ միութենական իր գործունէութիւնը: Ան իր շուրջ կը համախմբէ այլ գաղութներէ եկած Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ կը ձեռնարկէ սկաուտական շարքերը կազմակերպելու աշխատանքին: Սիւնոյն ժամանակ ան կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի հոգեւոր հովիւը:

1985-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը գնահատելով Քահանայ Հօր բազմամեայ օգտաշատ գործունէութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս, իբրեւ մարզիկ, պատասխանատու եւ վարչական, զինք կը պարգեւատրէ Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով:

Շաւարշ Աւագ քահանայ կը վախճանի 4 Սեպտեմբեր 1995-ին, Պուէնոս Այրէս, Հ.Մ.Ը.Մ.ի եւ եկեղեցոյ ճամբով հայութեան ծառայութեան բեղուն անցեալ մը ձգելով իր ետին: Այդ անցեալը սակայն չի սահմանափակուիր միայն գործնա-



կան եւ բանաւոր սահմաններու մէջ, այլ կ'ընդգրկէ նաեւ գրատորը: Ան նորահաս սերունդին կը կտակէ խմբագրական պատկառելի վաստակ մը: Արդարեւ, 1924-էն մինչեւ իր ծերունագարդ տարիքը ան հանդէս կու գայ «Ալիք», «Հորիզոն» (Սելանիկ), «Նոր Օր», «Ազատ Օր» (Աթէնք), «Արմենիա», «Նաւասարդ» (Պուէնոս Այրէս), «Արեւելք-մարգաշխարհ» (Հալէպ) թերթերու էջերուն: Առանց մոռնալու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պաշտօնաթերթ «Մարգիկ»ը, որուն հրատարակութենէն ետք տասնամեակ մը շարունակ (1980-1990) ան կը դառնայ անոր հաւատարիմ աշխատակիցներէն՝ գրելով յուշագրական արժէքաւոր յօդուածներ:

Իր խմբագրութեամբ հրատարակուած են «Մարմնամարգ» ամսագիրը, «Սկաուտին Ալպոմը» (Աթէնք), «Նաւասարդ» եւ «Արիական Հունձք» թերթերը (Պուէնոս Այրէս):

1987-ին երկու հատորով ան լոյս կ'ընծայէ Եղեռնէն ճողոպրածի իր յուշերը՝ «Մեծ Եղեռն Հայոց» անունով: Ունի կրօնական, գրական եւ ազգային բովանդակութեամբ անտիպ բազմաթիւ գործեր, որոնց շարքին մեծ կարեւորութիւն կը ներկայացնեն Հ.Մ.Ը.Մ.ականի իր յուշերը (1918-1985) ներկայացնող «Յուշեր եւ Ապրումներ Հ.Մ.Ը.Մ.ի Հիմնադրութեան Օրերէն» խորագրեալ եւ երկու հատորով հրատարակութեան ներկայացուելիք մէկ աշխատասիրութիւնը:



### ՄԵՐՃԱՆՈՅ ԳՐԻԳՈՐ

Հայ մարմնակրթութեան վեթերան գործիչներէն մէկը: Փոքր հասակէն Պուլկարիա գտնուելով եւ նախնական կրթութիւնը հոն ստանալով, Մերճանօֆի մարզական գործունէութիւնն ալ սկսած է Ֆիլիպէէն: Հոն, պուլկարական «Թրաքիիսքի Եունաք» կազմակերպու-

թեան անդամակցելով, եղած է կազմակերպութեան օգնական ուսուցիչը, ստանձնելով արեւի քան 600 տողոց մարզական դաստիարակութիւնը:

Այդ աշխատանքը արգելք եղած չէ սակայն, որ Մերճանոֆ Ֆիլիպէի մէջ կազմէ նաեւ հայ մարզական միութիւն մը, զայն եւս առնելով իր ղեկավարութեան տակ: Այդ միութիւնը հետագային մեծապէս կը զօրանայ եւ ի վերջոյ կը միանայ Հ.Մ.-Ը.Մ.ին: Ան դասաւանդած է Ֆիլիպէի Չօրեանց Վարժարանին մէջ:

1904-ին, Մերճանոֆ «Թրաքիիսքի Եունաք»ի կողմէ մասնակցած է Փրակայի մարմնակրթական հանդէսին:

Մերճանոֆի մարզական ամէնէն եռանդուն շրջանը, սակայն, կը սկսի Օսմանեան սահմանադրութենէն ետք: 1909-ին, Պոլսոյ արուարձաններէն Մաքրի գիւղին մէջ ան կը հիմնէ «Տիտան» խումբը, իսկ Սամաթիոյ մէջ՝ «Վահագն»ը: Այս երկու խումբերը հաւաքական փորձեր կ'ունենան, եւ Մերճանոֆ կը դասախօսէ անոնց եւ Պոլսոյ այլ թաղերու խումբերուն: 1912-ին, հայկական Բ. ողիմպիականին, Մերճանոֆի խումբերը ուշադրութիւն կը գրաւեն իրենց համաչափ (ռիթմիկ) մարզանքներով եւ բուրգերով:

Պատերազմի տետղութեան ան կը մնայ Պուլկարիա: Զինադադարին կը վերադառնայ Պոլիս: Մաս կը կազմէ Հ.Մ.-Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան եւ Լեւոն Յակոբեանի հետ կը ստանձնէ շուէտական մարզանքի ճիւղին ղեկավարութիւնը: Ինքն է, որ այդ ձեւով Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու մարզանքներուն մէջ կը հաստատէ միօրինակութիւն ու կանոն, ընդհանրացնելով ռիթմիկ մարզանքները: Կը գրէ մարզական բազմաթիւ յօդուածներ:

Իր մասնագիտութիւններն են գործնական ու չափական մարզանքները: Այս ուղղութեամբ, պատերազմէն առաջ ան բաւական օգտակար եղած է Շաւարշ Բրիսեանին:

1919-ին, Մերճանոֆ կ'անցնի Հայաստան, իսկ 1923-էն ետք՝ Փարիզ, ուր կը մահանայ արեւի ուշ:



### ՄԻՆԹԱՆՃԵԱՆ ԺԻՐԱՅՐ

Ժիրայր Մինթաճեան եղած է Գարակեօզեան որբանոցի սկաուտ խմբապետներէն, Բերա: 1923-ին, ան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ գործուղուած է Յունաստան: 1924-ին կ'անցնի Ֆրանսա եւ առաջին անգամ ան է, որ իր շուրջ կը հաւաքէ բոլոր հին սկաուտները եւ կը կազմէ երեց սկաուտներու խումբ մը: 1928-ին ան կը կազմէ Ալֆորվիլի սկաուտներու խումբը: 1929-ին կը դառնայ շրջանի փոխ խմբապետ, իսկ 1933-1936՝ Ֆրանսայի շրջանի ընդհանուր պետ:



### ՄՂՁԱԿԵՏԻՔԵԱՆ ԿՐԷԿՈՒԱՐ

Եղբ. Կրէկուար (Գրիգորիս) Մղճաւետիքեան ծնած է Ատանա, 1915-ին: Կրիկլիոյ պարպումէն առաջ, 1920-ին, ընտանեօք ան կը փոխադրուի Պէյրութ, ուր կարճ ժամանակ մը Աւետարանականներու եւ Զափիսէններու վարժարանը յաճախելէ ետք՝ կը նետուի կեանքի ասպարէզ: Պատանի Կրէկուար Պէյրութի նշանաւոր Սուրբ Սըրսոք շուկային մէջ շրջան մը կը ծառայէ Դանիէլեան եւ Անթիքաճեան հաստատութիւններուն, ապա ան կը հիմնէ իր անձնական վաճառատունը:

Եղբ. Կրէկուարի գործի փայլուն ասպարէզին առընթեր, Հ.Մ.Ը.Մ.ականի անոր կեանքն է, որ առաւելաբար կը ճառագայթէ իր անձին եւ շրջանակին մէջ: Փոքր տարիքէն գայլիկ, ապա՝ սկաուտ, շուտով իր մօտ ի յայտ կու գան ծառայասիրութեան ոգիով օժտուած ղեկավարի մը կարողութիւնները: Սկիզբը ակումբի, դաշտի եւ ընկերային յանձնախումբերու մէջ

գործել է ետք, 1951-ին եղբ. Կրեկուար առաջին անգամ ըլլալով կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Պեյրուֆի մասնաճիղի վարչական՝ գոյքապահի պաշտօնով: Այնուհետև, շարունակաբար քսան տարի, ան մաս կը կազմէ մասնաճիղին յաջորդական վարչական կազմերուն, գրեթէ մնալուն կերպով վարելով փոխատենապետի պաշտօն:

Միութենական ներքին ծառայութիւններէն բացի, եղբ. Կրեկուար երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ.ը կը ներկայացնէ Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի մէջ: Շրջան մը ան կը ստանձնէ նաեւ անոր նախագահութիւնը:

Վարչական ծառայութիւններու երկարամեայ շրջանին, միջ-միութենական դժուարին կացութիւններու, դաշտերու հարցերու պարագային, ոստիկանութեան հետ լեզու գտնելու միակ բանալին կը մնար եղբ. Կրեկուար: Միջ-միութենական, յատկապէս ֆութպոլի, միացեալ գործառնութեանց ճամբով ծագած հարցերը կը լուծուին իր վերջնական վճիռով: Իր արդարադատ ու հեղինակաւոր վճիռը, առիթնուող ժպիտով ու համեմուած բառերով հրամցուած՝ կ'արժանանայ բոլորին հաւանութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, 1995-ին, գնահատելով եղբոր երկարամեայ ծառայութիւնները՝ զայն կը պարգևատրէ Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Եղբ. Կրեկուար կը մահանայ 31 Օգոստոս 1998-ին:

## ՄԿՐԵԱՆ ՄԿՐՏԻՉ

Մկրտիչ Մկրեան կը նկատուի Պոլսոյ առաջին եւ լաւագոյն մարզիկներէն մէկը: Ան եղած է Ռոպէրթ Քուլէճի հայ մարզական հոյլէն:

Մկրեան Սկիտարի մէջ հիմնած է «Հայ Մարզարան»ը, որուն համար իր ջանքն ու ժամանակը չէ



խնայած: 1915-էն առաջ ան եղած է հայ մարզական կեանքի աչքառու ներկայացուցիչներէն մէկը: 1912-ին ան Սթոքհոլմի մէջ Թուրքիան կը ներկայացնէ միջազգային 6-րդ ողիմպիականին: Ան կը մասնակցի Փենտաթլոնի եւ սկաւառակ նետելու մրցումներու:



## ՄՈՒՐԱՏԵԱՆ ՀՐԱՆԴ

Ամբողջ կեանք մը Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ անշահախնդիր ոգիով գործած դէմք մըն է եղբ. Հրանդ Մուրատեան:

Ան ծնած է Տիգրանակերտ եւ մանկութիւնը անցուցած է հոն եւ, իբրեւ զաւակը ազգանուէր իր հօր, ճաշակած է Եղեռնի ու անոր յաջորդած տարիներուն տառապանքը՝ մինչեւ Մուրատեան ընտանիքին հաստատուիլը Հալէպ, ուրկէ ան կը փոխադրուի Պէյրութ, իբրեւ առաջին աշակերտներէն մէկը այդ օրերուն նոր հիմնուած Համազգայինի Ճեմարանին: Հոս է, որ մեծ ուսուցիչներ Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի շունչով կը մշակուի իր միտքը, կը գործնայ իր կամքը ու կը թրծուի իր ոգին, իբրեւ նուիրեալը ազգային գաղափարական ծառայութեան:

Եղբ. Հրանդ Մուրատեան Հ.Մ.Ը.Մ.ի շարքեր մուտք կը գործէ 1930 թուականին, երբ ուսանող էր Համազգայինի Ճեմարանին մէջ: Ճեմարանը աւարտելէ ետք կը վերադառնայ Հալէպ (1935) եւ Հալէպի մասնաճիւղի վարչութիւնը զինք կը նշանակէ Նոր Գիւղի շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի Պատասխանատու Յանձնախումբի անդամ:

1938-ին ան կը հաստատուի Պէյրութ, ու կը դառնայ Պէյրութի մասնաճիւղի գործունեայ անդամներէն մէկը: Մարզիկ, յանձնախումբի անդամ, վարչութեան ատենադպիր եւ ատենապետ՝ եռանդով կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպած բոլոր ձեռնարկներուն եւ գործօն դեր կ'ունենայ Լիբանանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի տարածման եւ ամրապնդման ի նպաստ:

1954-ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եւ կը վարէ ատենադպիրի կամ հաշուապահի պաշտօններ:

1971-ին, Լիբանանի կառավարութեան կողմէ ան կը նշանակուի Պէյրութի Մարզական Աւանի Պատասխանատու Խորհուրդի անդամ:

1972-ի Յունուարին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութեան վերածելու կոչուած եռանդամ մարմինի անդամ: Այս հանգամանքով ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Առաջին Պատգամաւորական Ժողովին՝ Պէյրութ:

Եղբ. Հրանդ Մուրատեան կը գործէ շուքի մէջ, միշտ մնալով հեզահամբոյր բնատրութեամբ այն անձը, որ կը գիտնայ իր կշիռը դնել նժարին մէջ, ամէն անգամ որ ժողովական կեանքի ընթացքին իր միջամտութիւնը անհրաժեշտ կ'ըլլայ: Իբրեւ տիպար Հ.Մ.Ը.Մ.ական եւ գաղափարական դաշնակցական, ան սերունդներ կ'առաջնորդէ դէպի զոյգ կազմակերպութիւնները: Մասնատրապէս կը քաջալերէ իր երկու կրտսեր եղբայրները՝ Սուրենն ու Վարուժանը հետեւելու իր վարակիչ օրինակին, իբրեւ ազգանուէր ծառայութեան նուիրեալներ:

Առ ի գնահատանք միութենական իր երկարամեայ վաստակին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը 1981-ին զինք կը պարգեւատրէ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Եղբ. Հրանդ կը մահանայ 28 Յունուար 1984-ին:

## ՍՈՒԲԱՏԵԱՆ ՍՈՒԲԷՆ

Եղբ. Սուրեն Մուրատեան կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ի սփիւռքեան առաջին սերունդին: 1934-ին ան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն կ'անդամակցի Նոր Գիւղի մէջ, Հալէպ: 1941-ին կը փոխադրուի Պէյրութ եւ այնուհետեւ քառորդ



դար իր ամբողջական մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքի սկաուտական աշխատանքներուն, մղիչ ուժը հանդիսանալով անոնց:

Եղբ. Սուրէն 1944-էն սկսեալ բազմիցս կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի անդամ, նաեւ՝ մասնաճիւղի վարչական (1951-1956 եւ 1963): Ան մաս կը կազմէ Հ.Յ.Գաշնակցութեան շարքերուն: Երկար տարիներ կ'աշխատակցի «Ազդակ»ին եւ «Ազդակ մարզական»ին՝ ջանալով երիտասարդութիւնը համախմբել մարմնակրթութեան ճամբով:

1974-ին եղբ. Սուրէն կը հաստատուի Փարիզ եւ իր շուրջ խումբ մը հաւատաւոր երիտասարդներ հաւաքելով՝ 1977-ին հիմը կը դնէ Հ.Մ.Ը.Մ.ի Փարիզի մասնաճիւղին: 1980-ին, Զլամարի մէջ, Ֆրանսա, ան կը հանդիսանայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Բ. բանակումին ընդհանուր խմբապետը:

Եղբ. Սուրէն Մուրատեան կը մահանայ 25 Օգոստոս 1981-ին:



## ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ


Եղբ. Վարուժան Մուրատեան ծնած է 7 Փետրուար 1931-ին, Հալէպ: 1939-ին, Մուրատեան ընտանիքը կը փոխադրուի Պէյրութ, ուր 1943-ին ան մուտք կը գործէ Հ.Մ.Ը.Մ.ի շարքեր, իբրեւ զայիկ: Այնուհետեւ, ան կ'էս դար կը նուիրուի իր պաշտելի միութեան՝ ծառայութեան համեստագոյն աստիճանէն հասնելով բարձրագոյնին՝ Կեդրոնական Վարչութեան անդամակցութեան:

1950-ական թուականներուն, եղբ. Վարուժան կը վարէ Պէյրութի մասնաճիւղի զայիկական վոհմակները, մատղաշ սերունդի անդամները առաջնորդելով Քրիստեաններու եւ Յակոբեաններու ուղիէն: 1964-ին կ'ընտրուի Պէյրութի մասնաճիւղի վարչական: Երկու տարի ետք, ան կը հանդիսանայ ԼԵ-

ՎԱՄ-ի հիմնադիրներէն: 1971-1978, որոշ ընդմիջումներով, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ: 1979-1987, երկու շրջան ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Եդր. Վարուժան կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի հիմնադիր սերունդի գլխաւոր ներկայացուցիչներէն: 1987-էն մինչեւ մահը՝ 7 Մայիս 1993, ան կը վարէ «Մարզիկ»ի վարիչ տնօրէնի պաշտօնը, անսակարկ նուիրումով կատարելով թերթին խմբագրական եւ վարչական աշխատանքները:

### ՅԱԲԷԹԵԱՆ ԳԷՈՐԳ



Գէորգ Յաբէթեան ծնած է Իզմիր, 1896-ին: Նախնական կրթութիւնը կը ստանայ Գարաթաշի Վարդանեան վարժարանը: 1904-ին կը յաճախէ Մեսրոպեան երկրորդական վարժարանը, ուր կը սկսի հետեւիլ մարմնամարզի:

1910-ին, Իզմիրի յունական «Բելորա» մարզական միութեան կողմէ կազմակերպուած ողիմպիականին, մէկ քայլ ուստումի մրցումին կը հանդիսանայ երկրորդ: Իսկ 1911-ին, հայկական Ա. ողիմպիականին, կը տիրանայ նոյն մրցումին առաջնութեան տիտղոսին:

1912-ին, Պոլսոյ մէջ կը մասնակցի հայկական Բ. ողիմպիականին եւ կը շահի հարիւր մէթր վազքի եւ մէկ քայլ ուստումի առաջնութիւնները, ինչպէս նաեւ՝ երեք քայլ ուստումի երկրորդութիւնը:

1913-ին, մէկ եւ երեք քայլ ուստումի մէջ առաջնութիւն կը շահի, իսկ 100 մէթրի մէջ՝ երկրորդութիւն:

1912-1913, իր խմբապետութեամբ կը կազմուի Իզմիրի



հայկական խումբերը գտուած ֆութպոլի մայր խումբ մը եւ տեղոյն միջազգային մրցումներուն մասնակցելով կը հանդիսանայ առաջին:

1915-ին, հայկական խումբը կը լուծուի եւ ան կը մասնակցի «Ալթա» ֆութպոլի խումբին, ուր մեծ ընդունելութիւն կը գտնէ, ստանալով Verdun մակդիրը:

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանը զինք կը նշանակէ խմբապետ:

Ադէտէն քանի մը օր առաջ կ'ապաստանի Աթէնք: 1924-ին, երբ Սկրտիչ Մալումեան Աթէնք կու գայ, Յաբէթեանի հետ խորհրդակցելով Յունաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին վարչութիւնը կը կազմեն եւ ան կը ստանձնէ ֆութպոլի եւ մարմնամարզի բաժիններուն պատասխանատուութիւնը: 1937-ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ. պաշտօն մը, զոր երկար տարիներ կը վարէ ձեռնհասօրէն:

1958-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Ներկայացուցչական ժողովը գայն կ'ընտրէ շրջանի պատուակալ նախագահ: 1978-ին ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանին:



## ՅԱԿՈՒԲԵԱՆ ԱԼՊԷՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին հիմնադրութեամբ միութեան Լիբանանի կառոյցին ստեղծիչն է եղբ. Ալպէր Յակոբեան, իրեն բախտակից եղբ. Յարութիւն Պէօյիսեանի հետ:

Եղբ. Ալպէր Յակոբեան ծնած է 1904-ին, Պոլիս, Սամաթիոյ Ենի Մահալլէն (Նոր թաղ) շրջանը: Նախնական ուսումը ստացած է Սամաթիոյ Սահակեան Վարժարանը, Գարեգին

Խաժակի տնօրէնութեան օրերուն: 1915-1918 ան յաճախած է Ազգ. Կեդրոնական Վարժարան:

Դեռ պատանի, ան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Սամաթիոյ մասնաճիղին, որուն հիմնադիրը եղած է Հայկ Դիզմէճեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Պոլսոյ գործունէութեան դադրեցումէն ետք, 1923-ին, եղբ. Ալպէր կը փոխադրուի Պէյրութ, ուր Բերա Շիշլիի մասնաճիղէն եղբ. Յարութիւն Պէօյիքեանի հետ կը մտածէ հիմնել Հ.Մ.Ը.Մ.ի առաջին մասնաճիղը Լիբանանի մէջ: Շուտով անոնց կը միանայ խանդավառ երիտասարդութիւն մը՝ կազմելով Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիղը:

Մասնաճիղին հիմնադիր ժողովը տեղի կ'ունենայ Հայկ Պոտագեանի շակագործարանը: Հիմնադրութենէն ետք, եղբ. Ալպէր ճիգ չի խնայեր եւ հանգիստն ու աշխատանքի ժամերը գոհելով կը լծուի մասնաճիղին արեւելիկ եւ ֆուրպոլի խումբերու կազմակերպման, ինչպէս նաեւ՝ վարչական պատասխանատու աշխատանքներու: 1924-1928 ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիղի առաջին երկու վարչութիւններուն, իսկ այնուհետեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձատր Արեւելքի Շրջանային Վարչութեան յաջորդական կազմերուն՝ 1931-1933, 1937-1947 եւ 1951-1954:

Աւելի քան երեսուն տարի կազմակերպչական սպառնիչ գործին նուիրուելէ ետք, եղբ. Ալպէր 1954-էն սկսեալ կը դադրի պատասխանատու պաշտօններ ստանձնելէ, սակայն նիւթական իր օժանդակութիւններով կը շարունակէ սատար կանգնիլ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիղին:

Իր երկարամեայ նուիրումին եւ վաստակաշատ գործունէութեան համար, եղբ. Ալպէր 17 Դեկտեմբեր 1980-ին կը պարգեւատրուի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Յետ երկարատեւ հիւանդութեան, եղբ. Ալպէր Յակոբեան կը մահանայ 14 Ապրիլ 1984-ին:



## ՅԱԿՈԲԵԱՆ ԳՐԻԳՈՐ

Գրիգոր Յակոբեանի անունին կապուած է մասնաւորապէս հայ սկստուական շարժումը: Յակոբեան եղած է անոնցմէ, որոնք Ա. Աշխարհամարտէն առաջ ուղղութիւն եւ քաջալերանք ցոյց տուած են Շաւարշ Քրիսեանին՝ մինչեւ որ ան մարմնակրթանքը դարձուցած է ասպարէզ ու ամբողջովին նուիրուած է անոր:

Ռուպերթ Քոլէճի աշակերտ, պատանեկութենէն սէր ունեցած է մարմնակրթանքի հանդէպ: Այնքան, որ կապ կը հաստատէ փրոֆ. Տեպոնէի հետ՝ Փարիզ, եւ թղթակցութեամբ մարզական դասեր կ'ստանէ անկէ: Միաժամանակ կը զարգացնէ իր մարմինը: Յակոբեան օր ըստ օրէ խանդավառուելով՝ կը ջանայ Ռուպերթ Քոլէճէն դուրս եւս զբաղիլ ֆիզիքական դաստիարակութեան գործով: Պոյաճը գիւղին մէջ ան կը կազմէ Պալթա-Լիման անունով ֆութպոլի խումբը, որ առաջին հայկական խումբը կ'ըլլայ Պոլսոյ մէջ եւ անուանի կը դառնայ:

Սահմանադրութեան շրջանին, ուրիշ վեթերաններու հետ, Շաւարշ Քրիսեանին կը թելադրէ հրատարակել թերթ մը, ինք եւս յանձն առնելով նիւթական գոհողութիւններ:

Սկիւտարի մէջ, ան կը կազմէ սկստուական խումբ մը, ու վարիչը կ'ըլլայ Սկիւտարի Հայ Մարզարանին, երբ Սկրտիչ Սկրեան Եւրոպա կը մեկնի: Զինադադարին, երբ Գրիգոր Յակոբեանի հրաւերով Պոլսոյ մարզական միութիւններու ներկայացուցիչները հիմը կը դնեն Հ.Մ.Ը.Մ.ին, ան կը դառնայ հայ սկստուներու պետը, ներկայացնելով դասախօսութիւններ եւ ղեկավարելով մարզական վարժութիւններ:

Յակոբեան կը մահանայ 1938-ին, Փարիզ:

## ՅԱԿՈԲԵԱՆ ԼԵՒՈՆ

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Գրիգոր Յակոբեանի եղբայրը: Անդամ «Տորք»ի: Աշխատած է եղբօրը հետ ու ջերմօրէն փարած է հայ մարմնակրթական շարժումին: Ինք եւս ո՛չ ժամանակ, ո՛չ եռանդ եւ ոչ ալ նիւթական խնայած է: Անդամ էր Հ.Մ.Ը.Մ.ի արեւելիկ կեդրոնական յանձնախումբին: Լաւ լողորդ էր: Եղած է ազգային վարժարաններու մարզանքի ուսուցիչ:



## ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՎԱՐԴԻՎԱՆ

Մարզասէրներ եղբ. Վարդիվան Յովհաննէսեանը ճանչցած են իբրեւ «Հ.Մ.Ը.Մ.ի Վարդիվանը»: Ու տասնամեակներ շարունակ մեծ եղած է այս երկու բառերուն զուգորդութիւնը: Մէկը միւսը հարստացնող, մէկը միւսը ամբողջացնող: Եւ այս բոլորը այնպիսի փայլուն յաջողութիւններով, որոնց մեծ մասը կերտուած է ֆութպոլի դաշտերու վրայ` Լիբանանէն Պաղեստին, Սուրիայէն Կիպրոս եւ Թուրքիա:

Եղբ. Վարդիվան Յովհաննէսեան կը պատկանի 1940-ական տարիներու Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ֆութպոլի փառատոր տասնամեակը կերտած տիտաններու այն սերունդին, որ իւրայատուկ դեր եւ դիմագիծ կու տայ իր միութեան` Հ.Մ.Ը.Մ.ին, յաղթանակներու բերկրանք եւ ազգային հպարտութիւն պարգեւելով անոր բազմաազար համակիրներուն, ժամանակի մը մէջ, երբ ներազգային մեր կեանքը երկփեղ-



կումի եւ տեղատուութեան տխուր հանգրուան մը կը բոլորէ: Վարդիվառ եւ իր աննման խմբակիցները՝ Մանուէլ Ալթունեանը, Սաաթին (Կարապետ Սաաթնեան), Ժորժ Շատարեանը, Եղիշէ Մանուկեանը, Տիգրան Արապեանը, Յովհաննէս Նազարեանը եւ Սարգիս Ազնաւորեանը, ամբողջական նուիրումով, զոհաբերութեամբ եւ յանձնառութեամբ բարձր կը պահեն Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը՝ յաղթանակէ յաղթանակ առաջնորդելով զայն:

Եդր. Վարդիվառ Յովհաննէսեան կը ծնի 25 Դեկտեմբեր 1925-ին, Պէյրութ: Ան իր նախնական ուսումը կը ստանայ Նորաշէնի Սեարոպեան Վարժարանին եւ Էշրէֆիէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Դեմարանին մէջ, ուր կը սորվի նաեւ ֆութպոլ խաղալ:

1939-ին, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի սկաուտներու «Յառաջ» ֆութպոլի խումբին, որուն կազմին մէջ կը թրծուի իբրեւ տոկուն ֆութպոլիստ: 1941-1952, ան պատուով կը կրէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ֆութպոլի ներկայացուցչական խումբին շապիկը, որուն հետ չորս անգամ կը տիրանայ Լիբանանի ախոյեանութեան (1944, 1946, 1948, 1951), երկու անգամ՝ բաժակին (1943, 1948) եւ հինգ անգամ՝ Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային խաղերու առաջնութեան (1942, 1944, 1948, 1951, 1952): 1945-1952 ան մաս կը կազմէ նաեւ Լիբանանի ֆութպոլի ազգային խումբին:

1945-ին, դեռ ֆութպոլիստ, Ժոզէֆ Նալպանտեանի եւ Յովհաննէս Տէր Յարութիւնեանի հետ, եդր. Վարդիվառ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ֆութպոլի երկրորդական խումբերու կեդրոնական յանձնախումբին եւ հսկայական աշխատանք կը տանի օրուան 16 երկրորդական խումբերէն («Մայր Հայաստան», «Ազատամարտ», «Խանասոր», «Մուրատ», «Քրիստափոր», «Շանթ», «Համազասպ», «Բարգէն Սինի»...) ներկայացուցչական խումբին խոստմնալից ֆութպոլիստներ հասցնելու համար:

1951-1952, եդր. Վարդիվառ Շուէտի մէջ վեց ամիս կը հե-

տելի ֆութպոլի մարզումի յատուկ դասընթացքներու: Լիբանան վերադարձին, «Հ.Մ.Ը.Մ.ի Վարդիվառ»ը, «Պոնյա արմիք»ը կը դառնայ լիբանանեան ֆութպոլի աստղ, մինչեւ որ դժբախտ պատահար մը կանուխէն վերջ կու տայ ֆութպոլիստի իր կեանքին: Մարտ 1952-ին, հազիւ 27 տարեկանին, ան ընդմիջտ կը հեռանայ կանաչ դաշտերէն, երբ եգիպտական խումբի մը դէմ մրցած պահուն, հակառակորդ յետսպահ մը ծանրօրէն կը վիրաւորէ իր կռունկը:

Այնուհետեւ, եղբ. Վարդիվառ կ'անցնի վարչական աշխատանքի: Ան յաճախ կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի Պատգամաւորական Ժողովներուն: 1953-ին, մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան, իսկ 1971-1973` Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:

1995-ին եւ 1999-ին ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Չ. եւ Է. Պատգամաւորական Ժողովներուն: Է. Պատգամաւորական Ժողովի նախօրեակին, 31 Մարտ 1999-ին, միութենական իր երկարամեայ ծառայութիւններուն առ ի գնահատանք` ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արտակարգ» պատուանշանին:

Եղբ. Վարդիվառ 1989-ին կը հաստատուի Փարիզ, ուր մաս կը կազմէ տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսին:

2000 թուականին, եղբ. Վարդիվառ լոյս կ'ընծայէ Հ.Մ.Ը.Մ.ական ֆութպոլիստի իր օրագրութիւններն ու տպաւորութիւնները ներկայացնող «Յուշեր Հ.Մ.Ը.Մ.ականի կեանքէս 1940-1952» հատորը: Գիրքը յուզումով, հիացումով եւ պարծանքով կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի 170 խաղերու մասին ծանօթութիւններ եւ յիշարժան 60 խաղերու մասին մանրամասն տեղեկութիւններ:

Եղբ. Վարդիվառ Յովհաննէսեան կը մահանայ 15 Ապրիլ 2018-ին, 93 տարեկան հասակին, Փարիզի մէջ:



## ՅՈՎԱԷՓԵԱՆ ՀԱՅԿ

Եղբ. Հայկ Յովսեփեան կը ծնի Պէյրուֆ, Լիբանան: Ծննդավայրի Նշան Փալանճեան Դեմարանի նախակրթարանի բաժինը աւարտելէ ետք, արաբերէն լեզուին տիրապետելու նպատակով, երկրորդական ուսումը կը ստանայ «Ռ-ալտա» երկրորդական վարժարանը: Համալսարանական ուսումը կը ստանայ Պէյրուֆի Ամերիկեան Համալսարանը՝ մասնագիտանալով արուեստի ճիւղին մէջ:

Եղբայր Հայկ փոքր տարիքին կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի սկստուական շարքերուն եւ հպարտութեամբ կը կրէ անոր տարազը, միշտ հաւատալով այս մեծ կազմակերպութեան «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին: Աւելի ուշ, երիտասարդութեան տարիներուն, ան կ'անդամակցի Հ.Յ.Դ. «Զաւարեան» Աշակերտական Միութեան եւ ապա կը փոխանցուի Ուսանողական Միութիւն: Այնուհետեւ, հայրենիքի ազատութեան հաւատքով ան կ'անցնի Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը, անոր հաւատարիմ անդամը մնալով մինչեւ վաղահաս մահը՝ 2004:

1976-ին, Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով, ան կը փոխադրուի Լոս Անճելըս, ուր կը նետուի կեանքի ասպարէզ:

Եղբ. Հայկ կարճ ժամանակ մը ամերիկեան առեւտրական հաստատութեան մը մէջ պաշտօնավարելէ ետք, կը նախաձեռնէ իր սեփական գործին:

Ազգային իր պարտաւորութիւններուն գիտակից, Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով ան երկար տարիներ կը ծառայէ իր ժողովուրդին ու հայրենիքին:

Ան անդամ էր Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղին: Երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային տնտեսական յանձնա-

խումբին մէջ աշխատելէ ետք, 4 շրջան (8 տարի) ան ձեռնհասօրէն կը վարէ Շրջանային Վարչութեան փոխ ատենապետի պաշտօնը: Մեծ ներդրում կ'ունենայ «Ֆերահեան» Ազգ. վարժարանի զանազան աշխատանքներուն մէջ:

Եղբ. Հայկ կը մահանայ Սեպտեմբեր 2004-ին:

## ՆԱԶԱՐԵԱՆ ՍՈՒՐԷՆ



Եղբ. Սուրեն Նազարեան ծնած է 1923-ին, Խարբերդ: 1931-ին, ընտանիքին հետ փոխադրուած է Հալէպ, ուր նախակրթութիւնը ստացած է տեղոյն Ազգ. Հայկազեան Վարժարանին, իսկ երկրորդական ուսումը՝ Հալէպի Մխիթարեան հայրերու վարժարանին մէջ:

Բ. Աշխարհամարտին ստեղծուած պայմաններուն բերումով, 1941-ին, եղբ. Սուրեն լքած է ուսումը եւ մտած է Սուրիոյ երկաթուղիի ընկերութիւնը, ուր իբրեւ վարչական պատասխանատու պաշտօնավարած է 40 տարի:

Եղբ. Սուրեն կանուխէն մուտք գործած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտական շարքեր: Եղած է խմբապետ, ընդհանուր խմբապետ եւ Սկաւտ. Խորհուրդի ներկայացուցիչ: 1953-էն սկսեալ ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի յաջորդական վարչութիւններուն: Սուրիոյ Շրջանային կառոյցին ստեղծումով, 1978-ին ան մաս կազմած է անդրանիկ Շրջանային Վարչութեան: Այնուհետեւ, յաջորդական կազմերու մէջ, մինչեւ 1987, ան վարած է Շրջանային Վարչութեան ատենադպիրի պաշտօնը, իսկ 1989-1991՝ Շրջանային Վարչութեան ատենապետութիւնը: Իր երկարամեայ ծառայութեան եւ վաստակաշատ գործունէութեան համար, Նոյեմբեր 1988-ին, ան արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանին:


1991-1995 եղբ. Սուրեն ընտրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնա-



կան Վարչութեան անդամ: Զինք բնորոշող յատկանիշները եղած են պարտաճանաչութիւնը, ճշդապահութիւնը, աշխատասիրութիւնը, ուղղամտութիւնն ու փափկանկատութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ական գործունէութեան կողքին, եղբ. Սուրէն ունեցած է հանրային-հասարարական բեղուն կեանք: Ան մաս կազմած է Բերիոյ թեմի Ազգային գաւառական եւ քաղաքական ժողովներուն, ինչպէս նաեւ՝ Համազգայինին: Եղած է Ազգ. Հայկազեան Վարժարանի հոգաբարձու եւ Ուսումնական Խորհուրդի երկարամեայ անդամ: Եղած է Ազգ. Առաջնորդարանի «Օշական» պարբերաթերթի խմբագիրներէն:

Եղբ. Սուրէն կը մահանայ 10 Օգոստոս 1998-ին: Յետ մահու, 2015-ին, լոյս կը տեսնէ իր «Գիրք երախտիքի» հատորը:



## ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆ ՍԱՀԱԿ

Եղբ. Սահակ Նալպանտեան Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի առաջին սերունդի հաւատաւոր անդամներէն է, որ կանուխէն մուտք գործած է միութեան շարքեր: Ան ծնած է Այնթապ, 1899-ին:

Եղբ. Սահակ հասակ կը նետէ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Յ.Դաշնակցութեան ազգանուէր ծառայութեան մեծ դպրոցին մէջ, ուր կը կազմէ անձնուրաց մարդու նկարագիր եւ գաղափարական դիմագիծ: Հայութեան եւ Հայ Դատին հանդէպ իր ունեցած խոր հաւատքով, նուիրումով, ուղղամտութեամբ ու պարտաճանաչութեամբ, ան սիրելի դէմք մը կը դառնայ բոլորին: Իր սենդակիցներուն հետ, ան կը նկատուի Նոր Գիւղի հայաշատ արուարձանին հիմնադիրներէն մէկը:

Շրջապատը զինք կը ճանչնայ իբրեւ սակաւախօս, դատողութեամբ միշտ խոհեմ ու վճռական Հ.Մ.Ը.Մ.ական:

1960-ականներուն սկիզբը, երբ Սուրիոյ տարածքին տեղի կ'ունենայ Հ.Յ. Դաշնակցութեան տեղոյն կազմակերպութեան ներկայացուցիչներուն ձերբակալութիւնը, հակաօրինական եւ հակապետական գործունէութիւն վարելու ամբաստանութեամբ, եղբ. Սահակ եւս կը ձերբակալուի ու կը բանտարկուի: Բանտին մէջ, իր կրած չարչարանքներուն տեղի չտալու համար, ան ձերբակալութենէն շարքս մը ետք, 23 Յուլիս 1961-ին, իր իսկ ձեռքով վերջ կու տայ կեանքին, խիզախներու յատուկ մահ մը ունենալով:

## ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ԱՐԱՄ



Յովհաննէս Հինդլեանէն ետք, Արամ Նիկողոսեան հայ կրթական մշակներէն երկրորդն է, որ խորապէս գնահատած է մարզական շարժումը եւ իր լայն աջակցութիւնը ցուցաբերած է անոր:

Ուսուցիչ, տնօրէն եւ Արամեան Վարժարանի հիմնադիր (Սկիւտար) Արամ Նիկողոսեան թափ տուած է դպրոցներու մէջ մարմնամարզի դասերուն: Իբրեւ Ազգային Ուսումնական Խորհուրդի անդամ, ան մեծ ջանքով ու համոզումով ջանացած է մարզանքի դասերը պաշտօնապէս ներառնել Ազգային վարժարաններու դասացուցակներուն մէջ:

Զինադադարին, իբրեւ Շիշլիի Գարակէօգեան որբանոցի տնօրէն, Նիկողոսեան լայնօրէն թոյլատրած է սկաուտական խումբերու կազմութիւնը: Եղած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ: Մարզական հարցերու մասին գրած է բազմաթիւ յօդուածներ:

Մեռած է 1937-ին, Պոլիս:



## ՇԱՀԻՆԵԱՆ ԳԱՐԼՕ

Հայ մարզական կեանքին մէջ Գարլօ Շահինեանի մասնակցութիւնը կու գայ պատանեկութենէն, երբ տակաւին Պէրպէրեանի սան՝ ան իր շուրջ կը հաւաքէ Սկիւտարի տղաքը եւ հիմը կը դնէ «Հայ-

յորդիք» միութեան:

Այդ միութիւնը մէկը կ'ըլլայ 1915-էն առաջ սկաուտական շարժումի միացողներէն: Գարլօ Շահինեան եղած է մարզիկ, մասնակցած է մրցաշարքներու՝ բարձրութիւն ցատկելով: Ան յաճախ խլած է առաջնութիւններ:

Զինադադարին ինք կ'ըլլայ «Հայորդիք»ը ներկայացնողը այն պատմական ժողովին, ուր հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ին: Կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ եւ կ'ըլլայ աթլէթիզմի բաժինի վարիչ: Միաժամանակ, ան կը շարունակէ ըլլալ Սկիւտարի մասնաճիւղի ղեկավարներէն: Հետագային, ան մաս կը կազմէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի երրորդ Կեդրոնական Վարչութեան՝ ատենադպիրի պաշտօնով:

Գարլօ Շահինեան կը հանդիսանայ Սկիւտարի մրցաշարքերուն գլխաւոր կազմակերպիչը, իսկ զանազան թաղերու եւ ընդհանուր մրցաշարքներու մէջ՝ իրաւարար, խորհրդատու եւ յանձնախումբի անդամ: 1922-ին ան կ'անցնի Պոլկարիա, 1925-ին՝ Փարիզ, ուր մինչեւ մահը կը շարունակէ կապուած մնալ Հ.Մ.Ը.Մ.ին եւ ընդհանուր ձեռնարկներուն բերել իր եռանդուն մասնակցութիւնը:

## ՇԱՀԻՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ



Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով լիբանանահայ գաղութը կերտող եւ մարզական կեանքը դեկավարող պատմական դեմքերէն մէկն է եղբ. Յովհաննէս Շահինեան: Ան ծնած է 1901-ին, Սեբաստիա: 14 տարեկանին, ազգականներուն հետ կը բռնէ բռնագաղթի ճամբան, հայրն ու մայրը կորսնցնելով տարագրութեան ընթացքին:

Շրջան մը ան կը մնայ Համա, «Նոխուտեան» որբանոցը: Ապա, հինգ տարի, Համայէն Այնթուրա, Հալէպ, Քիլիս ու Այնթապ, որբանոցէ որբանոց թափառական կեանք մը ապրելէ ետք, 1920-ին կայք կը հաստատէ Ժիպէյի «Թռչնոց բոյն» որբանոցը:

1924-ին, եղբ. Շահինեան կը յաջողի ընդունուիլ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը, իբրեւ դեղագործութեան ուսանող: Նոյն տարին հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին՝ ֆութպոլի խումբով մը, որուն առաջին մասնակիցներէն կ'ըլլայ ան: Քանի մը տարի ետք կ'ընտրուի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան անդամ: Յաջորդաբար կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպած ողիմպիական խաղերուն, շահելով ախոյեանական տիտղոսներ:

1929-1932 գործով Պաղեստին մեկնելէ ետք, 1932-ին ան վերջնականապէս կը հաստատուի Լիբանան՝ ցմահ Հ.Մ.Ը.Մ.ին ծառայելու պատրաստակամութեամբ: Ան պատնէշի վրայ կը մնայ ամբողջ կէս դար, իբրեւ մարզիկ, մարզական լրագրող, վարչական եւ 1954-1975՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ: Ան բազմիցս կ'ընտրուի լիբանանեան մարզական ֆետերասիոններու անդամ:

Հ.Մ.Ը.Մ.ին եւ ընդհանրապէս մարզական կեանքին իր մատուցած ծառայութիւններուն համար, եղբ. Շահինեան կ'ար-

ժանանայ լիբանանեան պետութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Հ.Ս.Ը.Մ.ի բարձրագոյն կարգի շքանշաններուն:

Եղբ. Յովհաննէս Շահինեան կը մահանայ 16 Դեկտեմբեր 1979-ին:



### ՇԷՀՐԻԿԵԱՆ ԳԱՌՆԻԿ

Հ.Ս.Ը.Մ.ի ստեղծման մեծագոյն սատարողներն մէկն է Գառնիկ Շէրիկեան: Ինքն էր, որ իբրեւ Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ընդհանուր հաշուապահ, յաջողեցաւ ստեղծել հաշուապահական եւ անդամագրական օրինակելի դրութիւն: Խստապահանջ իր խառնուածքով՝ Շէրիկեան նոյն ոգին կիրարկեց նաեւ միութեան մէջ: Կեդրոնական Վարչութիւնը 22 Մարտ 1922-ի իր նիստին որոշեց զայն արծաթ մետալով մը պատուել:

1923-ին, երբ Շէրիկեան Փարիզ հաստատուեցաւ, կրկին գործօն դեր ստանձնեց Հ.Ս.Ը.Մ.ի մէջ: Յետոյ անցաւ Թիֆլսն (Սպանիա), ուր մահացաւ:



### ՇԻՄՇԻՐԵԱՆ ՄԻՀՐԱՆ

Եղբ. Միհրան Շիմշիրեան ծնած է 1942-ին, Պէյրութ: Փոքր տարիքին ընտանիքին հետ փոխադրուած է Դամասկոս, ուր Հ.Ս.Ը.Մ.ին անդամակցած է 1947-ին, իբրեւ զայլիկ: 1963-1965 եղած է Դամասկոսի մասնաճիւղի վարչական: 1965-էն սկսեալ ան մասնակ-

ցած է Հ.Մ.Ը.Մ.ի Մերձատր Արեւելքի գրեթէ բոլոր Շրջանային Ժողովներուն: 1961-ին եւ 1963-ին մասնակցած է Աւստրլիոյ եւ Յունաստանի մէջ տեղի ունեցած սկաուտական միջազգային ճամպորհներու: 1965-ին վերադարձած է Պէյրութ եւ, այնուհետեւ, մինչեւ 1974 Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկաուտական շարքերուն ծառայած է իբրեւ Աքելլայ, Շրջանային Աքելլայ, Շրջանային Սկաուտ. Խմբապետ եւ Շրջանային Ընդհանուր Խմբապետ:

1973-1992 եւ 1995-2002, 26 տարի շարունակ եղբ. Շիմշիրեան մաս կազմած է Լիբանանի սկաուտական ֆետերասիոնին եւ Լիբանանը ներկայացուցած է արաբական ու միջազգային բազմաթիւ համագումարներու՝ Լիպիա, Օման, Անգլիա, Սենեկալ, Մ. Նահանգներ:

Միաժամանակ, 1974-1976 ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, իսկ 1983-1999 եւ 2007-2014՝ վեց Կեդրոնական Վարչութիւններու: Այս միջոցին, միութենական առաքելութեամբ ան գտնուած է Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական գրեթէ բոլոր շրջանները: Հայաստանի անկախացումէն ետք, սկաուտական միջազգային իր ծանօթութիւններուն բերումով ան կարելոր դեր ունեցած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի միջազգային սկաուտական շարժումի անդամակցութեան նախաքայլերուն մէջ:

2001-ին եղբ. Շիմշիրեան արժանացած է Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի բարձրագոյն շքանշանին: 2006-ին պարգևատրուած է լիբանանեան պետութեան երիտասարդութեան եւ մարմնամարզի նախարարութեան կողմէ: Տարի մը ետք, ան արժանացած է միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Եղբ. Շիմշիրեան կը մահանայ 16 Փետրուար 2014-ին:



## ՇԻՐԻՆԵԱՆ ՊԱՐԳԵՒ

Վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, հրապարակախօս, հայ մամուլի բազմամեայ սպասաւոր եղբ. Պարգեւ Շիրինեան (1962-էն մինչեւ մահը վեր Հրազդան գրչանունով ծանօթ) ծնած է Ատանա, 1 Յունուար 1920-ին: Կիլիկիոյ հայութեան տարագրութեամբ, ծնողքին հետ ան կը փոխադրուի Պէյրութ եւ նախնական ուսումը կը ստանայ Ազգային Ս. Նշան Վարժարանը, որմէ ետք կը յաճախէ Համազգայինի Նշան Փալանճեան Դեմարան, ուր ազգային կրթութիւնը կը ստանայ հայ մշակոյթի մեծ երախտաւորներ՝ Լեւոն Ծանօթի եւ Աղբալեանի շունչին տակ:

Փոքր տարիքէն եղբ. Պարգեւ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի սկաուտական թեւին, իբրեւ գայիկ: Միութենական իր գործունէութիւնը, սակայն, առաւելաբար կը յատկանշուի Հ.Մ.Ը.Մ.ական կեանքին նուիրում մամուլ իր երկարամեայ աշխատակցութեամբ: 1976-ին ան կը հաստատուի Մ. Նահանգներ: 1978-1984 ան կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու յաջորդական երեք Շրջանային Վարչութիւններուն գործավար-քարտուղարութիւնը: Շրջան մը կ'ըլլայ Շրջանային Վարչութեան անդամ: Եղբայր Շիրինեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ե. ժողովին (1991, Աթէնք) եւ տարիներ շարունակ կ'աշխատակցի միութեան պաշտօնաթերթ «Մարզիկ»ին:

Հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական մը ըլլալու կողքին, եղբ. Շիրինեան եղած է ուխտեալ եւ համեստ դաշնակցական:

Մամուլ իր բեղուն ծառայութիւնը կը սկսի երիտասարդութեան օրերէն, նախ իբրեւ յօդուածագիր ու սրբագրիչ, ապա՝ իբրեւ փոխ խմբագիր, խմբագիր եւ հեղինակ: Եղբ. Շիրինեան շրջան մը կը խմբագրէ Հ.Յ.Դ. Պէյրութի «Բարգէն Միւնի» Պատանեկան Միութեան «Ովսախ» պարբերաթերթը եւ կ'աշխա-

տակցի Նշան Փալանճեան Դեմարանի Շրջանաւարտից Միութեան «Ակօս» ամսագիրին: Հետագային, ան կը խմբագրէ ու կը հրատարակէ Սկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքին ու գործին նուիրուած հատորը, կը խմբագրէ Միսաք Թորլաքեանի «Օրերուս հետ» յուշագրական աշխատասիրութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Նորընծայի Բ. Կարգի եւ Ա. Կարգի գիտելիքներու գիրքը: Հ.Մ.Ը.Մ.ի 70-ամեակին առիթով, ան կը խմբագրէ «Հ.Մ.Ը.Մ.ի 70-ամեակ-Յուշատետր 1918-1988» հատորը:

Բազմակողմանի եղած է եղբ. Պարգեւ Շիրինեանի ներդրումը մեր հանրային կեանքին, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական, համագայնական, կուսակցական գործիչ, ազգային-եկեղեցական զանազան մարմիններու եւ ժողովներու անդամ ու պատգամաւոր: Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կողմէ ան կ'արժանանայ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսին: Տարբեր առիթներով, իր ծառայութիւններուն համար կը ստանայ բազմաթիւ յուշատախտակներ եւ զնահատագիրներ:

1985-ին, Լոս Անճելըսի մէջ կը նշուի հանրային իր գործունէութեան 50-ամեակը եւ այս առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. կաթողիկոս յատուկ կոնդակով մը զինք կը պարգեւատրէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Եղբ. Պարգեւ Շիրինեան կը մահանայ 30 Յունուար 1997-ին:

## ՇԽԻՏԸՄԵԱՆ ԿԱՐՊԻՄ

Եղբ. Կարպիս Շխրտըմեան Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղին անդամակցած է 1978-ին: Նոյն տարին եւ յաջորդող երեք տարիներուն ան նշանակուած է մասնաճիւղի Սկսուտ. Խորհուրդի ատենապետ: 1981-1984





եղած է վարչական եւ վարած է ատենադպիրի եւ ատենապետի պաշտօններ:

1984-1988, յաջորդական երկու շրջան, ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ վարած է ատենադպիրի պաշտօն:

1996-1998 նշանակուած է Նաւասարդեանի կազմակերպիչ յանձնախումբի ատենադպիր: 1988-2002 մաս կազմած է Շրջանային դաստիարակչական յանձնախումբին, իբրեւ ատենապետ եւ ապա՝ Շրջանային Վարչութեան կապ:

1998-2002, դարձեալ յաջորդական երկու շրջան, մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ վարած է ատենադպիրի պաշտօն:

1991-ին եւ 1995-ին մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Ե. եւ Զ. Պատգամատրական Ընդհանուր Ժողովներուն, որոնց դիւաններուն մէջ վարած է ատենադպիրի պաշտօն:

2007-ին վերադառնալով մասնաճիւղ ընտրուած է վարչութեան անդամ եւ վարած է ատենապետի պաշտօն:

1993-ին, Շրջանային Վարչութեան կողմէ պարգեւատրուած է «Ծառայութեան» շքանշանով: Նոյն տարին, մասնաճիւղին 25-ամեակին առիթով, պարգեւատրուած է իբրեւ «Օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական»: 1982-էն սկսեալ ան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային ներկայացուցչական բոլոր ժողովներուն, յաճախ վարելով ատենադպիրի պաշտօն:

Նոյեմբեր 2010-ին, անողորք հիւանդութիւնը եղբ. Շխրտըմեանը կանուխ բաժնեց այս աշխարհէն ու Հ.Մ.Ը.Մ.էն:

Եղբ. Կարպիս Շխրտըմեան կը մահանայ 24 Նոյեմբեր 2010-ին:

## ՈՍԿՈՒՆԻ ՏԻԳՐԱՆ



Տիգրան Ոսկունի, բուն անունով Տիգրան Գույումճեան, ծնած է Դամասկոս, 1925-ին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Միացեալ Վարժարանը, իսկ երկրորդականը՝ Դամասկոսի ֆրանսական լիսէն:

1945-ին, ընտանեօք ան փոխադրուած է Պէյրութ եւ մուտք գործած է լրագրական ասպարէզ: 1946-1976, երեսուն տարի ան մաս կազմած է «Ազդակ» օրաթերթի խմբագրութեան՝ 1952-1958 վարելով նաեւ «Ազդակ-Մարզական»ի խմբագրութիւնը: Շրջան մը մաս կազմած է նաեւ «Ազդակ Շաբաթօրեակ»ի եւ աւելի ուշ՝ «Բագին»ի խմբագրութիւններուն: Ան ֆրանսացի հեղինակներէ թարգմանած է աւելի քան 20 գիրքեր: Գրած է «Այրող մայրիկներ» գիրքը:

Ոսկունի գործօն մասնակցութիւն բերած է լիբանանահայ ազգային, մշակութային եւ կուսակցական կեանքին: 1961-1962 ան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան անդամ: Բազմիցս մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան Պատգամաւորական Ժողովներուն:

1974-ին, միութեան համագաղութային առաջին Պատգամաւորական Ժողովին, Ոսկունի կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ՝ 1974-1979:

1976-ին, ան կը սեկնի Մ. Նահանգներ եւ կը հաստատուի Սան Ֆրանսիսքօ, ուր կը շարունակէ իր հանրային եւ հրապարակագրական գործը: Կը խմբագրէ «Նոր Կեանք» շաբաթաթերթը: 2003-ին, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոս Ոսկունիի կը շնորհէ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանը:

Ոսկունի կը մահանայ 26 Փետրուար 2005-ին:



## ՈՒՇԱԳԼԵԱՆ ԿԱՐՕ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան առաջին տարիներու ընդհանուր քարտուղար եւ «Հայ Սկսուտ»ի խմբագիր Կարօ Ուշագլեան ծնած է Քէօթահիա: Ան իր շրջաբերականներով շարժումի մէջ դրած է Հ.Մ.Ը.Մ.ի ամբողջ վարչամեքենան եւ սկսուտական խումբերը: «Հայ Սկսուտ»ի իր խմբագրականները ներշնչած են մեծ թիով Հ.Մ.Ը.Մ.ականներ: Իր սերնդակիցներէն Տիգրան Ա. Քինյ. Խոյեան կը վկայէ. «Գործ մը ունենալու համար չէր որ Կարոն ուսերուն վրայ առաւ այդ երկու պարտականութիւնները: Ինք՝ կարողութիւններով եւ շէնշող բնատրութեամբ կրնար շատ աւելի մեծ վճարումով գործ մը գտնել: Անհաւատալիօրէն ծաւալած Հ.Մ.Ը.Մ.ը, իր սկսուտներով, նիւթական ծանր բեռան տակ էր: Կարոն յօժարեցաւ 30 թրքական թղթադրամով գոհանալ, եւ միշտ զուարթ ու կատակախօս՝ իրեն վստահուած այդ շա՛տ կենսական գործը անտրտունջ, ընդհակառակն... միշտ բարձր ու գոհունակ տրամադրութեամբ եւ արժանատր կերպով տանիլ միչեւ 1922 տարին...»:

Ուշագլեան աշխատակցած է Շաւարշ Քրիսեանի «Մարմնամարզ»ին: 1924-ին ան կ'անցնի Ֆրանսա, մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Փարիզի յաջորդական վարչութիւններուն:

1929-ին կը դառնայ Ֆրանսայի շրջանի քարտուղար, կրկին կը հրատարակէ «Հայ Սկսուտ»ը: Երկու տարի ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամատրական Ժողովին կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ, դառնալով քարտուղար եւ միաժամանակ շարունակելով «Հայ Սկսուտ»ի խմբագրութիւնը:

## ՈՒՐՖԱԼԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ



Հ.Մ.Ը.Մ.ի սփիւռքեան ղեկավարութեան երկրորդ սերունդի հաւատարմ ներկայացուցիչներէն է եղբ. Անդրանիկ Ուրֆալեան, որ ծնած է 1923-ին, Մուսա լեւան Քէպուսիէ գիւղը: Նախնական կրթութիւնը գիւղին վարժարանին մէջ ստանալէ ետք, ան հինգ տարի ուսանած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանը՝ Յակոբ Օշականի, Թորգոմ Վրդ. Մանուկեան, Եղիշէ Վրդ. Դուրեանի եւ մեծանուն այլ դաստիարակներու շունչին տակ:

Երուսաղէմէն վերադարձին, եղբ. Անդրանիկ նետուած է կրթական ասպարէզ եւ 44 տարի ծառայած է հայ դպրութեան, 6 տարի իբրեւ ուսուցիչ, իսկ 38 տարի՝ տնօրէն: 1942-1948, ան պաշտօնավարած է Այնճարի Ազգ. Յառաջ Վարժարանին եւ Դամասկոսի Ազգ. Միացեալ Վարժարանին մէջ: 1948-1953 ան ստանձնած է Թրիփոլիի Ազգ. Նուպարեան (քաղաք) եւ Խրիմեան (Միւս) վարժարաններուն տնօրէնութիւնը: Այնուհետեւ, ան 33 տարի վարած է Պուրճ Համուտի Նոր Միս քաղամասի Ազգ. Լուսինեան, ապա՝ Աքսոր Գասարճեան վարժարանի տնօրէնութեան պաշտօնը:

Եղբ. Անդրանիկ Ուրֆալեան Հ.Մ.Ը.Մ.ական գործունէութիւն ծաւալած է նախ՝ Դամասկոսի, ապա Պուրճ Համուտի մէջ: 1960-1969, ամբողջ տասնամեակ մը ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան եւ իր բոլորանուէր մասնակցութիւնը բերած է Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի մասնաճիւղերու ղեկավարման պատասխանատու աշխատանքին: Մասնակցած է բազմաթիւ Ներկայացուցչական Շրջանային Ժողովներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի Ե. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, Աթէնք, 1991-ին:

Կրթական իր ասպարեզին կողքին, եղբ. Անդրանիկ Ուրֆալեան ունեցած է ազգային-հասարակական բեղուն գործունեություն: Ան կանուխեն մաս կազմած է Հ.Յ. Դաշնակցության շարքերուն: Եղած է Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտեի անդամ եւ ներկայացուցիչ: 1967-1972 ան մաս կազմած է Հ.Յ.Դ. Բիւրոյին: Եղած է հրապարակագիր եւ փնտռուած դասախօս: Երկար տարիներ աշխատակցած է Պէյրութի «Ազդակ» օրաթերթին:

1989-ին, եղբ. Անդրանիկ Ուրֆալեան հաստատուած է Լոս Անճելըս, Մ. Նահանգներ, ուր մահացած է 2006-ին:



## ՉԵՐԱԶ ՎԱՀԱՆ

Հայ մարմնակրթական շարժումի ամենէն եռանդուն եւ նուիրեալ գործիչներէն մէկը: Ծնած է 1886-ին: Աշակերտ՝ Պոլսոյ Կեդրոնական Վարժարանին, ինքն է որ նոյն վարժարանի տղոց կը սորվեցնէ ֆուքպոլը: Ան կը կազմէ Սանթրալ ֆուքպոլի խումբը, որ ժամանակագրական կարգով, հայկական ֆուքպոլի պատմութեան երկրորդ խումբն է: Չերազ այդ խումբով չի բաւարարուիր եւ կը ստեղծէ նաեւ Փրոթի կղզիի ֆուքպոլի համանուն խումբը եւ գլխաւոր ոգին կը հանդիսանայ «Տորք» խումբին:

Պալքանեան պատերազմին կ'անցնի Փարիզ, ուր կը մնայ երկու տարի: Ա. Աշխարհամարտին կ'անցնի Կովկաս, իբրեւ կամաւոր: Կ'արձանագրուի Անդրանիկի հարիւրեակին:

1920-ին, Տիգրան Խոյեանի եւ Օննիկ Եազմաճեանի հետ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի եռանդամ այն մարմինին, որ Հայաստանի կառավարութեան հրաւերով հայրենիք կ'երթայ սկաւտական եւ մարզական շարժում կազմակերպելու համար:

Հայաստանի մէջ, Չերազ աշխատանքի կեդրոն կ'ընտրէ

Կհամրին, ուր ան կը զբաղի ամերիկեան որբանոցներու որբախնամի աշխատանքով: Որբերէն կը պատրաստէ սկաուտներ:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Չերագ իր աշխատանքները կը շարունակէ իբրեւ ամերիկեան որբանոցներու ուսուցիչ: Քէփթըն Պրաունի օժանդակութեամբ կը կազմէ սկաուտական խումբեր եւ կը մարզէ որբեր: Կը գործէ դժուարին եւ նոյնիսկ անկարելի պայմաններու մէջ: Իր աշխատանքին բերումով, օր մը վէճ կ'ունենայ չեկիստի մը հետ, ու այդ դէպքը ճակատագրական կ'ըլլայ իրեն համար:

21 Դեկտեմբեր 1927-ին, Թիֆլիսի մէջ ան կը զնդակահարվի չեկիստներու կողմէ:

## ՉՈՔԿԱՐԵԱՆ ՎԱՀԷ



Եղբ. Վահէ Չոքկարեան ծնած է 1921-ին, Ատանա: Հագիւ աչքերը բացած, ծնողքին հետ կը բռնէ գաղթականութեան ճամբան: Տասնամեակ մը ամբողջ, ան գաղթականութեան զրկանքները կը կրէ Ռումանիոյ մէջ:

1931-ին, Չոքկարեան ընտանիքը կը հաստատուի Լիբանան, ուր 10 տարեկան Վահէն կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի սկաուտական շարքերուն: Երեք տարի սկաուտութեան մէջ գործելէ ետք, ան մաս կը կազմէ մասնաճիւղի «Մուրատ» ֆութպոլի երկրորդական խումբին:

1936-ին, տարի մը, եղբ. Վահէ կ'անցնի Գամասկոս, իսկ 1937-1939՝ Հալէպ, ուր ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի պահեստի խումբին:

Պէյրութ վերադարձին, եղբ. Վահէ կը հետեւի Պէյրութի Ամերիկեան Համալսարանի դասընթացքներուն եւ 1947-ին կը վկայուի իբրեւ ճարտարագէտ: Այնուհետեւ, ան կ'անցնի Հալէպ, ուր բազմիցս կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի վարչութեան ան-

դամ՝ փոխ ատենապետի (1953-1955) եւ ատենապետի պաշտօնով (1952-1953, 1956-1958 եւ 1961-1962):

1961-ին, Սուրիոյ ծանօթ դէպքերուն, ան կը ձերբակալուի եւ դառնօրէն կը ճաշակէ բանտային տանջանքներ: Այս, կը փոխադրուի Լիբանան եւ հետո կը մնայ միութենական կեանքէ, սակայն միտքն ու հոգին երբեք չեն դադրիր Հ.Մ.Ը.Մ.ին հետ ըլլալէ:

Նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ական մը ըլլալու կողքին, եղբ. Վահէ կ'ըլլայ հաւատարոք դաշնակցական մը: Կը ստանձնէ կուսակցական պատասխանատու պաշտօններ: 1963-ին, ան կը մասնակցի Հ.Յ.Գ. ԺԸ. Ընդհանուր Ժողովին, Պէյրութ:

Լիբանան հաստատուելէ ետք, իբրեւ ճարտարագէտ, եղբ. Վահէ գործի բերումով կը կատարէ բազմաթիւ ճամբորդութիւններ եւ կ'աշխատի զանազան երկիրներու մէջ՝ Քուէյթ, Իրաք, Եգիպտոս, Սէուտական Արաբիա, Գանատա եւ այլն:

1985-ին, հանգստեան կոչուելէ ետք, եղբ. Վահէ բնակութիւն կը հաստատէ Լիբանանի ամարանոցներէն Ռէյֆունի մէջ, իսկ 1994-էն մինչեւ մահը՝ հարաւային Լիբանանի Մաժտալիուն գիւղը, Սայտայի արեւելքը:

Միութենական երկարամեայ իր ծառայութեան առ ի գնահատանք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը 11 Մայիս 2006-ին, եղբ. Չոքկարեանը կը պարգեւատրէ Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով:

Եղբ. Վահէ Չոքկարեան կը մահանայ 8 Հոկտեմբեր 2008-ին:



## ՊԱՅԹԱՐԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Յովհաննէս Պայթարեան կը ծնի 1915-ին, հայ ժողովուրդի պատմութեան արհաւիրքի օրերուն, իբրեւ կիւրիւնցի ծնողքի մը երկրորդ զաւակը: Դժբախտ ճակատագիրը այնպէս մը կը տնօրինէ, որ նոյն տարին, մանուկ Յովհաննէսին հայրը թրքական վայրագ Տեղասպա-

նութեան զոհ կ'երթայ, իր այրիին ձգելով զոյգ զաւակներուն հոգածութեան ամբողջ բեռը: Մայրը, ամէն զոհողութիւն յանձն առնելով, կը յաջողի իր զաւակները իրենց ծննդավայրին մէջ խնամել մինչեւ 1925, երբ իր եղբօր՝ Հայկին հետ, Յովհաննէս կը փոխադրուի Պէյրութ:

Պէյրութի մէջ, պատանի Յովհաննէս, Ազգային Ս. Նշան Վարժարան յաճախելով կ'աւարտէ իր նախնական ուսումը, ապա երկու տարեշրջան բախտը կ'ունենայ յաճախելու Համազգայինի նորաբաց Դեմարանը, ներշնչուելով Շանթի ու Աղբալեանի գաղափարապաշտ մթնոլորտէն, ինչպէս իր դասընկերներէն Բարգէն Փափագեանն ու Եղիկ Գոնիալեանը:

Դժբախտաբար, օրուան դժնդակ պայմանները պատճառ կ'ըլլան որ Յովհաննէսը շուտով նետուի կեանքի ասպարէզ, ինքնաշխատութեամբ կատարելագործելու համար ինքնակերտ անհատի տիպարը:

Այդ թուականներուն, Յովհաննէս միաժամանակ կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի սկաուտական շարքերուն եւ Հ.Յ.Դ «Բարգէն Սիւնի» Պատանեկան Միութեան, իբրեւ ազգային գիտակցութեան կերտումի երկու հնոցներ:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերու անդամ, եղբ. Յովհաննէս կը փոխանցուի մասնաճիւղին մարմնամարզի ճիւղը եւ իր բաժինը կը բերէ հրապարակային հանդիսութեանց: Երիտասարդ Յովհաննէսի աշխատունակ նկարագիրն ու նախաձեռնող ոգին ուշագրաւ կ'ըլլան. մասնաճիւղին ղեկավարութիւնը շուտով զինք կը հրաւիրէ ստանձնելու օժանդակ անդամի պարտականութիւններ: Անոր զանազան պաշտօններ կը վստահուին մարզական եւ սկաուտական յանձնախումբերու կազմերէն ներս:

1947-ին, առաջին անգամ ըլլալով, եղբ. Յովհաննէս Պայքարեան կ'ընտրուի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան անդամ, ստանձնելով ատենապետի պատասխանատու պաշտօնը: Այնուհետեւ, կարճ ընդմիջումներով, ան մաս կը կազմէ վարչական զանազան կազմերու, աւելի քան 15 տարի:



1974-ին, Հ.Մ.Ը.Մ.ի նորագոյն շրջանի Պատգամատրական անդրանիկ Ընդհանուր Ժողովը եղբ. Յովհաննէս Պայթարեանը կ'ընտրէ Կեդրոնական Վարչութեան անդամ, հաշուապահի պաշտօնով:

Իբրև վարչական, եղբ. Պայթարեանի համեստ ու սակաւախօս բնատրութիւնը զինք հեռու կը պահէ արտաքին շռայլ երեւոյթներէ, բայց աշխատունակ եւ հմուտ վարչականի իր փորձառութիւնները, իրատես եւ գործնական մարդու իր կարողութիւնները իրենց կշիռը կ'ունենան վարչական ժողովներու ընթացքին: Կարելոր ու հիմնական որոշումներու պարագաներուն, եղբ. Պայթարեանի անշահախնդիր եւ անկողմնակալ միջամտութիւնները եզրակացութիւններու վերջնական ուղղութիւնը կը ճշդեն, գոհ ձգելով իր բոլոր գործակիցները:

1979-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Բ. Պատգամատրական Ընդհանուր Ժողովին, Յովհաննէս Պայթարեան դարձեալ կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը «Ծառայութեան», իսկ այնուհետեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը «Արժանեաց» շքանշանով կը պարգևատրեն զինք. 1993-ին, գնահատելով իր երկարամեայ գործունէութիւնը՝ շարքերէն ներս: Եղբ. Յովհաննէս կը մահանայ 21 Յունուար 1993-ին:



## ՊԱՊԼՈՒՋԵԱՆ ԼԵՒՈՆ

Զէյթունցի Լեւոն Պապուզեան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կեանքի վաստակաշատ դէմքերէն մէկն է, որուն երախտագիտութեամբ կը յիշեն Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Արեւելեան Մ. Նահանգներու շրջաններու երէց սերունդի ներկայացուցիչները:

1933-1957, եղբ. Լեւոն Պապլուզեան կը հանդիսանայ Սուրբոյ սկաուտական շարժումի կեդրոնական դէմքերէն մէկը՝ արժանանալով հայ թէ արաբ սկաուտներու յարգանքին: Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան կարգապահութիւնը, հնազանդութիւնն ու նուիրումը այլոց օրինակ կը դառնայ եղբ. Պապլուզեանի երկաթեայ կարգապահութեան շնորհիւ:

1957-ին, եղբ. Լեւոն Պապլուզեան կը հաստատուի Արեւելեան Մ. Նահանգներ եւ մաս կը կազմէ «Արթըր Տը Լիթըր» ճարտարագիտական ընկերութեան: Շուտով, ան ամերիկեան շրջանակներու մեծ գնահատանքին կ'արժանանայ NASA-ի անջրպետական հետազօտութիւններուն իր բերած մասնակցութեան համար: Իր կարգ մը գիտերը կ'օգտագործուին դէպի լուսին անջրպետագնացութեան համար:

Եղբ. Լեւոն Պապլուզեան եղաւ տիպար Հ.Մ.Ը.Մ.ական մը, քաղաքացի մը, օրինակելի ամուսին մը, գուրգուրոտ հայր մը եւ անգուգակական ընկեր մը, որուն համար հայութիւնը մնաց ամէն արժէքէ վեր: Հազարաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ Միջին Արեւելքի թէ Մ. Նահանգներու մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի գայիկական թէ սկաուտական շարքերէն անցած, հպարտութեամբ կը յիշեն իրենց սկաուտապետին՝ Լեւոն Պապլուզեանի անունը, որուն յիշատակին կը նուիրուին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու եւ Գանատայի միջ-մասնաճիւղային 17-րդ մարզախաղերը:

Եղբ. Լեւոն Պապլուզեան կը մահանայ 11 Հոկտեմբեր 1979-ին:

## ՊԱՐՍԱՄԵԱՆ ՊԱՐԳԵՒ

Եղբ. Պարգեւ Պարսամեան ծնած է Եոզկաթ, 15 Սեպտեմբեր 1915-ին: Փոքր տարիքին, ընտանիքին հետ կը հաստատուի Պուլկարիոյ Սոֆիա մայրաքաղաքը, ուր կը մնայ մինչեւ պատանեկութիւն: Ուսումը կը ստանայ Մես-



րուպեան Վարժարանին մեջ եւ սկաուտական շարքեր կ'անցնի Պուկարիոյ մէջ:

Շրջան մը կը բնակի Փրակա, ապա՝ Պերլին: Դեկտեմբեր 1939-ին կը հաստատուի Արժանթինի մայրաքաղաք Պուէնոս Այրէս, ուր եղբօրը՝ Արտաշէսի եւ այլ հայրենակիցներու հետ կը հիմնէ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն սկաուտութիւնը: 1944-1974 ան Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին ատենապետութիւնը կը վարէ 13 անգամ: Դեկտեմբեր 1974-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Պատգամաւորական Ժողովին, կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին Կեդրոնական Վարչութեան անդամ, չորս տարուան ժամանակաշրջանի մը համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Բ. Պատգամաւորական ժողովին (1979, Նիկոսիա) ան կը վերընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

11 Նոյեմբեր 1989-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի հիմնադրութեան տօնակատարութեան առիթով, եղբ. Պարգեւ Պարսամեան կը ստանայ «Ծառայութեան» շքանշանը: 1993-ին, ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արժանեաց» շքանշանին:

Ան կ'ըլլայ օրինակելի, համեստ ու նուիրեալ, ազգային-միութենական սկզբունքներու հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ.ական մը: Կը մահանայ 7 Փետրուար 2004-ին, Պուէնոս Այրէս:



## ՊԵՐՊԵՐԵԱՆ ԼԵՒՈՆ

Եղբ. Լեւոն Պերպէրեան Հ.Մ.Ը.Մ.ական պասքեթպոլի փառքի օրերը կերտած փայլուն սերունդի լաւագոյն ներկայացուցիչներէն մէկն է:

Ան ծնած է 1927-ին, Պէյրութ: Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ եղած է գայլիկ եւ սկաուտ: Երկար տարիներ

մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պեյրուֆի մասնաճիւղի պասքեթ-պոլի տղոց առաջին խումբին՝ ըլլալով սիրուած ու փնտռուած մարզիկը բոլորին, միութեան ապահովելով Լիբանանի ախոյեանութեան տիտղոսը: Ան տիպարն էր միութեան կրտսերներուն եւ խանդավառողն էր իր շրջապատին:

Եղբ. Լեւոն ամբողջականօրէն նուիրուած էր հանրային-հասարակական աշխատանքներու: Անդամ էր Համազգայինի յաջորդական Կեդրոնական Վարչութիւններու: Իբրեւ հաւատարմոր դաշնակցական, ան ստանձնած է կուսակցական բազմաթիւ պատասխանատու պաշտօններ: Եղած է Հ.Յ.Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամ եւ լիբանանեան պատերազմի ամէնէն դժնդակ պահերուն գտնուած է պատնէշի վրայ, գործօն մասնակցութիւն բերելով հայութեան ինքնապաշտպանութեան աշխատանքներուն եւ մարտնչումներուն:

Իր հեզ ու ընկերական բնաւորութեամբ, իր ծառայատէր ոգիով եւ «Միշտ պատրաստ» ըլլալու օրինակով, եղբ. Լեւոն տիպար Հ.Մ.Ը.Մ.ական մըն էր, որ 31 Յունուար 1986-ին, Վարդգէս Տէր Կարապետեանի եւ Ներսէս Խիտավերտեանի հետ, Պեյրուֆի մէջ զոհ կ'երթայ հայութեան թշնամիներու անարգ ոճիրին:

### ՊՈՅԱՆԵԱՆ ԺԻՐԱՅԻ

Եղբ. Ժիրայր Պոյանեան ծնած է 22 Հոկտեմբեր 1946-ին, Հալէպ: 1966-ին ան կը փոխադրուի Պեյրուֆ եւ Պեյրուֆի Ամերիկեան Համալսարանէն կը ստանայ փիլիսոփայութեան Մագիստրոսի աստիճան: 1976-ին ան կը հաստատուի Արեւմտեան Մ. Նահանգներ, դառնալով շրջանի հաւատարմ անդամներէն: 1979-ին եղբ. Ժիրայր կը հան-



դիսանայ Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղի հիմնադիրներէն:

1980-1986 եղբ. Ժիրայր Պոյաճեան մաս կը կազմէ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան, վերջին երկու տարին վարելով անոր ատենապետութիւնը: 1987-էն մինչեւ իր անժամանակ մահը՝ 17 Հոկտեմբեր 1991, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

1989-ին, Նաւասարդեան 14-րդ մարզախաղերուն, եղբ. Ժիրայր կը հռչակուի տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը:



### ՌՈՍՏՈՄԵԱՆ ՎԱՅԷ

Արցախեան պահանջատիրութեան նուիրեալ սերունդի ներկայացուցիչներէն է եղբ. Վաչէ Ռոստոմեանը, որ ծնած է 1961-ին, Արմաւիրի մարզի Կրիբոյետով գիւղը: Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ական շարժումի ստեղծումէն անմիջապէս ետք, ան մաս կազմած է միութեան եւ «Միշտ պատրաստ» նշանաբանով եղած է Արցախեան պայքարի առաջին զիծերուն վրայ:

Շուշիի առանձնակի գումարտակին հետ, եղբ. Վաչէ մասնակցած է բազմաթիւ կռիւներու եւ իր զինակից ու գաղափարակից եղբ. Վարդան Բախշեանի եւ Գագիկ Գրիգորեանի հետ նահատակուած է 16 Դեկտեմբեր 1991-ին, Հասանապատի ազատագրման կռիւներուն:

Եղբ. Վաչէի անունով կը կոչուին Կրիբոյետովի միջնակարգ վարժարանը, տեղւոյն Հ.Յ.Դ. Կոմիտէն եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գրասենեակը:

## ՍԱՊՈՒՆՃԵԱՆ ՉԱԻԷՆ



Եղբ. Չալեն Սապունճեան ծնած է Հալէպ, 1930-ին: Նախնական եւ միջնակարգ ուսումը ստացած է Ազգ. Հայկազեան եւ Վեներաբիկեան Մխիթարեան Հայրերու Վարժարանը, իսկ երկրորդականը՝ Հալէպի Մխիթոն Լայիքի Ֆրանքո-Արապ Լիսէն:

Իբրեւ ուսուցիչ 3 տարի ան պաշտօնավարած է Ազգ. Չալարեան վարժարանին մէջ՝ 1952-1954:

Եղբ. Սապունճեան մաս կազմած է Հալէպի «Արեւելք» օրաթերթի խմբագրութեան, վարելով թերթին մարզական եւ գեղարուեստական բաժինները: 1957-ին ան եղած է «Արեւելք Մարզաշխարհ» շաբաթաթերթին հիմնադիրներէն մէկը եւ անոր խմբագրութիւնը վարած է մինչեւ թերթին դադրեցումը (1963): Խմբագրած է հրատարակած է «Պատանեկան Մատենաշար»ը եւ «Չալեն Սապունճեան Մատենաշար»ը (12 գրքոյկ): Միաժամանակ, ան գլխաւոր խմբագիրը եղած է «Զրիստափոր Մատենաշար»ին:

Աշխատակցած է հայ մամուլին, իբրեւ մարզական թղթակից: Խմբագրած է նաեւ Բերիոյ Թեմի Ազգ. Առաջնորդարանի «Օշական» պարբերաթերթը:

Եղբ. Սապունճեան 60 տարի մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, սկիզբը իբրեւ սկաուտ (1941-1952): Ան մասնակցած է սկաուտական միջ-մասնաճիղային հինգ բանակումներու (Լիբանան) եւ եղած է սկաուտական նուագախումբի թմբկահար: Շրջան մը ծառայած է Հալէպի գայլիկներու խումբին՝ «Պաղիւրա»յի աստիճանով: Իբրեւ մարզիկ ան սիրած ու կիրարկած է աթլետիզմը, ի մասնաւորի միջակ եւ երկար վազքերը՝ 800 մ., 1500 մ., 5000 մ., 10000 մ.

եւ քրոս քաունթրի (1952-1956): Հետեւած է նաեւ այլ մարգա-  
խաղերու:

1956-1968 ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնա-  
ճիւղի վարչութեան: Եղած է նաեւ անդամ Սուրիոյ առաջին  
Շրջանային Վարչութեան: 1976-ին, Սուրիոյ մարզական ընդ-  
հանուր ֆետերասիոնին որոշումով ան նշանակուած է Հալէ-  
պի վարչութեան անդամ՝ երկու տարուան համար  
(1976-1978):

Եղբ. Սապունճեան չորս անգամ մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի  
Մերձաւոր Արեւելքի Շրջանային Ներկայացուցչական Ժո-  
ղովներուն (Հալէպ կամ Պէյրութ), ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի  
Պատգամաւորական Բ. Ընդհանուր Ժողովին (Կիպրոս):

1953-1963, իբրեւ լրագրող կամ վարչական ան մասնակ-  
ցած է հեծելարշաւի Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր կարեւոր  
մրցումներուն, շրջավազներուն եւ Պէյրութի Սիջերկրական-  
եան խաղերուն:

Բազմիցս ընտրուած է անդամ՝ Հալէպի փինկ-փոնկի, հե-  
ծելարշաւի, պասքէթպոլի եւ աթլէթիկմի ֆետերասիոններուն:  
1976-1984 ընտրուած է Հալէպի Նահանգային Խորհուրդի  
անդամ եւ միշտ մաս կազմած է անոր կրթական եւ մշակու-  
թային յանձնախումբին:

Հայ մարզական մամուլին ունեցած իր ծառայութիւննե-  
րուն համար, 1961-ին, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի կող-  
մէ ան պարգեւատրուած է համահայկական ողիմպիականի  
յատուկ շքանշանով:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը գնահատելով իր  
բազմամեայ նուիրումը եւ բոլորանուէր աշխատանքը մար-  
զական, մշակութային եւ ազգային մարմիններու մէջ, 20 Նո-  
յեմբեր 1988-ին զայն կը պարգեւատրէ Հ.Մ.Ը.Մ.ի  
«Արժանեաց» շքանշանով:

Եղբ. Սապունճեան կը մահանայ 18 Յունիս 2001-ին:

## ՄԱՐԳԻՍԵԱՆ ՃԵՄԻԼ



Եղբ. Ճեմիլ Մարգիսեան ծնած է Հալէպ, ընտանեկան համեստ յարկի մը տակ: Փոքր տարիքէն ան անդամակցած է Հ.Մ.-Ը.Մ.ի տեղոյն մասնաճիւղին եւ եղած է անոր սկաուտական փոքրաթիւ խումբի այն անդամներէն, որոնք կեանքի դժուարին պայմանները յաղթահարելով՝ տքնաջան աշխատանքով խտացուցած են միութեան շարքերը:

Եղբ. Ճեմիլ մեծապէս կարեւորելով իզական սեռի ներկայութիւնը ազգային կեանքին մէջ, կազմակերպչական լայն աշխատանք տարած է ստեղծելու համար Հալէպի արեւուշական առաջին խումբը: Իր շրջապատին վստահութիւնը շահելով, ան կազմակերպած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի արեւոյշներու առաջին բանակումը:

Սկաուտականին առընթեր, եղբ. Ճեմիլ եղած է ֆութպոլի սիրահար մը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի ֆութպոլի առաջին խումբին անդամներէն մէկը: Եղած է նաեւ ֆութպոլի հմուտ մարզիչ եւ փնտռուած իրաւարար: Իբրեւ իրաւարար, ան երկար տարիներ ղեկավարած է Սուրիոյ ֆութպոլի ախոյեանութեան մրցումները:

1968-ին, եղբ. Ճեմիլ ընտանիքին հետ կը փոխադրուի Լոս Անճելըս եւ անսակարկ նուիրումով կը ծառայէ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի նորաստեղծ մասնաճիւղին: Այնուհետեւ, ան մեծ ներդրում կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան մարզախաղերու կազմակերպման առաջին քայլերուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղի հիմնադրութեան:

1984-ին, իբրեւ վեթերան Հ.Մ.Ը.Մ.ական, ան կը պարգեւատրուի միութեան «Ծառայութեան» շքանշանով: 1993-ին կ'արժանանայ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսին:

Եղբ. Ճեմիլ կը մահանայ 1993-ին, իր ետին ձգելով անձնագոհ հայու եւ օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ականի բարի անուն:





### ՄԻՐՈՒՆԻ Յ. Ճ.

Յ. Ճ. Սիրունի (Յակոբ Ճոլուեան) եղած է Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն: Ծնած է 1890-ին, Ատափազար: Անձնապէս մարզանքի հանդէպ մեծ սէր չէ ունեցած, բայց հայ մարզական շարժումը ոչ միայն մօտիկ ընդունած է իր սրտին, այլև՝ գորավիզ կանգնած է անոր:

Փետրուար 1911-ին հիմնուած «Մարմնամարզ» թերթի հրատարակութիւնը Շաւարշ Քրիսեանին թելադրողը եղած է ան:

1922-ին, Պոլսոյ քաղաքական ծանօթ դէպքերուն պատճառով, Սիրունի կը մեկնի Ռումանիա: 1923 Սեպտեմբեր 30-ին ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Ռումանիոյ Շրջանային Վարչութեան անդամ: 1 Փետրուար 1924-ին լոյս կը տեսնէ «Արի» ամսաթերթը, խմբագրութեամբ Սիրունիի: Թերթը կը հրատարակուի երեք տարի, որմէ ետք կը դադրի, երբ Ֆիլիպէի (Պուկարիա) մէջ կը սկսի հրատարակուիլ «Հ.Մ.Ը.Մ.»ը, իբրեւ Պուկարիոյ եւ Ռումանիոյ շրջաններու պաշտօնաթերթ: 1924-ի Բ. Շրջանային Ժողովը, որ այս անգամ Քոստանդնուպոլիսի մէջ կը գումարուի, Սիրունին կրկին կ'ընտրէ Ռումանիոյ Շրջանային Վարչութեան անդամ եւ ատենապետ:

18-22 Յուլիս 1925-ին Պուքրէշի մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Շրջանային Ժողովը, ուր Սիրունին անգամ մը եւս կ'ընտրուի Ռումանիոյ Շրջանային Վարչութեան անդամ եւ ատենապետ:

Սիրունիի օրով է, որ 4 Սեպտեմբեր 1926-ին տեղի կ'ունենայ հայկական Գ. ողիմպիականը, մարմնակրթութեան ազգային հաստատութեան մարզադաշտին մէջ:

5-7 Սեպտեմբեր 1926-ին տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի Ռումանիոյ Դ. Շրջանային Ժողովը, ուր Սիրունին կը վերընտրուի ատենապետ: 21-ի Նոյեմբեր 1926-ին տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի Ռումանիոյ եւ Պուկարիոյ Շրջանային Վարչու-

թիւններուն խորհրդաժողովը, չորսական լիազօրներու մասնակցութեամբ: Այս խորհրդաժողովին կը ճշդուին համագործակցութեան հիմները եւ որոշումներ կը տրուին Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական մարմինի մը ստեղծման: Կը կազմուի Հ.Մ.Ը.Մ.ի առժամեայ Կեդրոնական Յանձնախումբ մը, որուն անդամ կ'ընտրուին Ռումանիայէն տոքթ. Սալբի, Գրիգոր Յակոբեան եւ Սիրունի: Իսկ Պուլկարիայէն՝ տոքթ. Թովմասեան, Թագուր Թագուրեան եւ Կարօ Ղազարոսեան. փոխ անդամներ՝ Ներսէս Աստուածատրեան եւ Լեւոն Գազանճեան:

1927 Սեպտեմբեր 4-ին, Սիրունիի գլխատրութեամբ, Ռումանիոյ Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ Շիրակի աղէտեալներուն օժանդակութեան գործը:

1928-ին, Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, Սիրունի Ֆիլիպէի մէջ կը բանայ սննդակայան մը, Պուլկարիոյ երկրաշարժի աղէտեալներուն օգնելու համար:


Այսպէս, Սիրունի մինչեւ վերջ կապուած կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ին, մեծ եռանդով աշխատելով անոր ծաւալման եւ զարգացման համար, միութեան միջոցով ծառայելով իր ժողովուրդին:

Բ. Աշխարհամարտին, Սիրունի համայնավարներու կողմէ կ'աքսորուի Սիպերիա եւ 12 տարուան տաժանակիր աշխատանքէ ետք ազատ կ'արձակուի եւ շրջան մը կ'անցնի Պուլկարիա, ապա կը վերադառնայ Ռումանիա:

Ան կը մահանայ 7 Ապրիլ 1973-ին, Պուրբէշ:

## ՄՆՏՐԵԱՆ ՄՈՒՇԵՂ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մարզական կեանքը շատ բան կը պարտի հաւատարմի միութեան, «անծանօթ զինուոր» եղբ. Մուշեղ Սնտրեանին, որ աւելի քան քառորդ դար՝ 1960-1985, իր շուրջ հաւաքեց Պէյրուսի Մար Մըլխայէլ, Քարանթինա եւ Էշրէֆիէ թաղամասերու



տղաքն ու աղջիկները, պասքեթպոլի, ֆութպոլի եւ աթլետիկայի խումբեր կազմեց անոնցմէ եւ լիբանանեան դաշտերու վրայ պատուաբեր արդիւնքներ արձանագրեց՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի հովանաւորութեամբ:

Եղբ. Մուշեղ Սնտրեանի անունը առաւելաբար կապուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Շանթ անունին, որուն հիմնադիրը, մարզիչն ու գլխաւոր պատասխանատուն եղաւ ան:

Եղբ. Մուշեղ Սնտրեան ծնած է 1916-ին, տարագրութեան անձանօթ ճամբուն վրայ, անապատին մէկ անկիւնը: Ան եղած է Սեբաստիոյ Տիվրիկ քաղաքի Օտուր գիւղի շինական մէկ ընտանիքին զաւակը: Հայրենակիցը ֆետայի Վարդան Շահպազին: Մօրեղբայրներն ալ եղած են ֆետայիներ:

Աքսորի եւ տարագրութեան օրերուն, Մուշեղ մօրը հետ քալելով հասած է Արաբկիր, ուր քանի մը տարի մնալէ ետք, 1926-ին ան հաստատուած է Պէյրութ եւ բնակած է վրանաքաղաքի անշուք մէկ խրճիթին մէջ: Մայրը պարտէզները աշխատած է, իսկ ինք՝ կօշիկ ներկելով զբաղած է:

Դեռ պատանի, մօրը ջանքերով ան մաս կազմած է Հ.Յ.Դ. Պատանեկան Միութեան շարքերուն: Կարճ ատեն մը յաճախած է դպրոց, ուր... կազմած է Մուրատ անունով ֆութպոլի խումբ մը: Ապա, գործունէութիւնը ծաւալելով, ան 60 աշակերտներէ կազմած է դաշնակցական խումբեր: Մաս կազմած է Հ.Յ.Դ. Պէյրութի Պատանեկան Միութեան եւ քաղաքի Ժողովրդային Տան մէջ ճանչցած է Հայր Աբրահամը, Լեւոն Շանթը, Նիկոլ Աղբալեանը, Կոմսը, Արշակ Յովհաննէսեանը, Վարդան Շահպազը, Արամ Սահակեանը եւ մեծանուն այլ դէմքեր: 1934-ին ան փոխանցուած է Հ.Յ.Դ. շարքեր:

1960-ին, եղբ. Մուշեղ գաղափարը կը յղանայ մարզական երկսեռ խումբերու կազմութեան: Ան հայկական վարժարաններէ եւ Պատանեկան Միութիւններէ խոստմնալից մարզիկ-մարզիկուհիներ հաւաքելով կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.-Շանթի (Լեւոն Շանթի յիշատակին) պասքեթպոլի տղոց ու աղջկանց, աթլետիկայի եւ ֆութպոլի տղոց խումբերը: Հոգատար մարզիչի եւ

խստապահանջ պատասխանատուի իր հետետողական ճիգերով, Հ.Մ.Ը.Մ.-Շանթեն Հ.Մ.Ը.Մ.ի ֆուրսպոլի ներկայացուցչական խումբ կը հասնին Կիրակոս Գալաթեանի, Սարգիս Ազնաւրեանի, Մանուէլ Ալթունեանի, Յակոբ Գալֆայեանի, Վահէ Մինասեանի, Յարութիւն Մարկարոսեանի մման խաղացողներ: Պասքէթպոլի պարագային, եղբ. Մուշեղ կը յայտնագործէ Ալէքօ Պէզիկեանը, Նշան Համամճեանը, Եսայի Եսայեանը, Համբիկ Միսաքեանը, Մանուշակ Գասապեանը, Եսքեր մեծմօրութեանը, Սեդա Պէքրէճեանը, Անի Նաճարեանը, Կասիկ Սարգիսեան-Խաչերեանը, Կասիկ Պոսնոյեան-Մահսէրէճեանը եւ ուրիշներ:

Այսպէս, 1960-1987, մինչեւ եղբ. Մուշեղի հանգստեան կոչուիլը, Հ.Մ.Ը.Մ.-Շանթի խումբերը ելոյթներ կ'ունենան լիբանանեան 80 մարզադաշտերու վրայ եւ կը շահին 114 բաժակներ:

Իր կեանքի վերջին տարիներուն, յառաջացեալ տարիքին բերումով, եղբ. Մուշեղ կը հեռանայ մարզադաշտերէն եւ Հ.Մ.-Ը.Մ.ի ծառայութեան անհուն գոհունակութիւնը սրտին, առանձին եւ դժբախտ պայմաններու մէջ ան կ'անցընէ խոր ծերութեան վերջին օրերը: 1987-ին ան կը հրատարակէ «Աքսորի արեան ճանապարհէն դէպի Հ.Մ.Ը.Մ. Շանթ» պատկերագարդ գիրքը, որ կը ներկայացնէ իր կեանքն ու Հ.Մ.-Ը.Մ.ական գործունէութիւնը:

Եղբ. Մուշեղ Սնտրեան կը մահանայ 1 Մարտ 1996-ին:

## ՏԱՂԼԵԱՆ ՃՈՐՃ

Եղբ. Ճորճ Տաղլեան ծնած է Հալէպ, 15 Յունուար 1925-ին: Հ.Մ.Ը.Մ.ին կ'անդամագրուի մանկութեան տարիներուն: Երիտասարդութեան ան մաս կը կազմէ Հ.Մ.-Ը.Մ.ի Հալէպի պասքէթի եւ վոլիպոլի խումբերուն, ու կը ճանչցուի իբրեւ փայլուն մարզիչ:



Եղբ. Տաղլեան Պուէնոս Այրես կը հաստատուի Սեպտեմբեր 1948-ին: Շուտով ան կ'անդամագրուի Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին, ուր եւս մաս կը կազմէ վոլիպոլի, պասքէթի եւ փինկ-փոնկի խումբերուն: Անմիջապէս կը նշանակուի մարզադաշտի վերակացու:

Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ եղբ. Տաղլեանի յանձնառութիւնը կ'ըլլայ մնայուն եւ եռանդուն, վարչական կազմի անդամակցութեան բազմաթիւ առիթներով՝ 1952-1954, 1958-1959, 1963-1964 եւ 1972-1978: 1978-1981 ան կը վարէ Պուէնոս Այրեսի մասնաճիւղին ատենապետութիւնը եւ մեծ դերակատարութիւն կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ստեղծման մէջ:

Իբրեւ պատգամաւոր, եղբ. Տաղլեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Պատգամաւորական Ժողովին (Գեկտեմբեր 1974, Լիբանան): 1987-1991 ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

Ան կը մահանայ 19 Սեպտեմբեր 2005-ին:



## ՏԱՔԷՍԵԱՆ ԸՈՐԸ

Եղբ. Ըորճ Տաքէսեան ծնած է Երուսաղէմ, 1927-ին: Յաճախած է տեղւոյն Հայ Աւետարանականներու Վարժարանը, ապա՝ Սրբոց Թարգմանչաց Վարժարանը, զոր ասարտած է 1940-ին:

Փոքր տարիքին կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն, ուր կը հասնի խմբապետի աստիճանին: Կ'ըլլայ մարզիկ ու կը մասնակցի Պաղեստինի միջ-մասնաճիւղային խաղերուն (1945-1947), 100 եւ 1500 մէթր վազքերու մրցումներուն: Իբրեւ պասքէթպոլի մարզիկ ան կը մասնակցի 1945-ի Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի միջ-մասնաճիւղային խաղերուն՝ Հալէպի մէջ:

Կը մտնէ Երուսաղէմի Հ.Յ.Դաշնակցութեան շարքերը, նախ իբրեւ պատանի, ապա կ'անդամակցի պատասխանատու մարմիններու, մինչեւ 1965:

Քաղաքական դէպքերու պատճառով 1948-ին ան կը հաստատուի Ամման, ուր կը շարունակէ միութենական եւ կուսակցական գործունէութիւնը:

Եղբ. Տաքէսեան 1953-ին կ'ընտրուի Ամմանի մասնաճիւղի հայաշատ թաղամասի Եկեղեցիին եւ Ազգ. վարչութեան անդամ եւ կը վարէ վարչութեան գանձապահի, հաշուապահի եւ ատենադպիրի պաշտօնները: Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մասնաճիւղի վարչութեան ատենապետ կ'ընտրուի 1965-1980 եւ 1983-1987:

Ամմանի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'որոշէ ունենալ իր սեփական ակումբը Ամմանի վարժարանին կից: Շնորհիւ եղբ. Տաքէսեանի եւ անոր նման գիտակից եղբայրներու նուիրումին եւ գոհողութիւններուն, Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Օ.Մ.ի մասնաճիւղերը կ'ունենան իրենց սեփական տունը, որուն բացումը կը կատարուի 31 Մայիս 1967-ին:

Եղբ. Տաքէսեան եղած է Յորդանանի պասքեթպոլի ֆետերասիոնի անդամ, իբրեւ գանձապահ եւ ապա՝ ատենապետ:

Ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Բ. եւ Գ. Պատգամատրական Ընդհանուր ժողովներուն, իբրեւ լիազօր պատգամատր: Կեդրոնական Վարչութիւնը զինք կը հրաւիրէ նաեւ Դ. Պատգամատրական Ժողովին մասնակցելու՝ խորհրդակցական ձայնով:

Կ'անդամակցի Ամմանի Ազգային Խորհուրդին, իբրեւ ատենապետ՝ 1969-1973:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը գնահատելով եղբ. Տաքէսեանի բազմամեայ ազգային եւ միութենական օգտաշատ գործունէութիւնը, 24 Նոյեմբեր 1988-ի զինք կը պարգևատրէ Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով:

Եղբ. Տաքէսեան կը մահանայ 15 Դեկտեմբեր 2014-ին, Ամմանի մէջ, Յորդանան:



## ՏԷՄԻՐՃԵԱՆ ԵՐՈՒԱՆՈՒ

Հ.Ս.Ը.Ս.ական կորովի եւ մտաւորական սերունդի լաւագոյն ներկայացուցիչներէն մէկը կը հանդիսանայ եղբ. Երուանդ Տէմիրճեան: Ան ծնած է 1931-ին, Տիգրանակերտ: Տասը տարեկանին, ծնողքին հետ կը փոխադրուի Հալէպ, ուր կանուխէն կը նետուի ազգային կեանքի ասպարէզ, ստանձնելով պատասխանատու պաշտօններ:

Եղբ. Երուանդ փոքր տարիքին կ'անդամագրուի Հ.Ս.-Ը.Ս.ին, որ այնուհետեւ կէս դար կը դառնայ իր կեանքի ամենէն հարազատ միջավայրը: Ան կ'ըլլայ սկաւտ, մարզիկ եւ վարչական: Արգելարշաւի, մէկ քայլ ոստումի եւ հարիւր մեթր վազքի Սուրիոյ ախոյեան:

1963-ին եղբ. Երուանդ կը հաստատուի Լիբանան: Մաս կը կազմէ Հ.Ս.Ը.Ս.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին եւ շրջան մը կը վարէ վարչութեան ատենապետութիւնը: Ան մաս կը կազմէ նաեւ Լիբանանի Շրջանային Վարչութեան, իսկ 1986-1995՝ Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան: Կ'ունենայ գրական-հրապարկագրական բեղուն գործունեութիւն: Հայ մամուլին կ'աշխատակցի Ե. Երկաթ, Ասիացի Գիսաւոր, Աստղ եւ Աշակերտին Բարեկամը ծածկանուններով:

Եղբ. Երուանդ մեծ նուիրումով կը փարի Հ.Ս.Ը.Ս.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրական աշխատանքին եւ շուրջ տասնամեակ մը կը գրէ անոր ոգեշունչ խմբագրականները: Ան Հ.Ս.Ը.Ս.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին կ'արժանանայ 11 Փետրուար 1996-ին:

Կը մահանայ 1 Մարտ 1996-ին:

## ՏԷՅԻՐՍԷՆՃԵԱՆ ԱՐՍԷՆ

Եղբ. Արմեն Տեյիրսենճեան ծնած է 1937-ին, Պէյրուֆ, Լեւոն եւ Արաքսի Տեյիրսենճեաններու ընտանեկան յարկին տակ: Ան Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուֆի սկաուտական շարքերուն կ'անդամակցի 1943-ին:



Աւելի ուշ, եղբ. Արմեն կը տեղափոխուի Արեւմտեան Մ. Նահանգներ եւ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղին, որուն յաջորդական վարչական կազմերուն մաս կը կազմէ 1970-1974:


1974-ին, եղբ. Արմեն կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի հիմնադիր Շրջանային Ներկայացուցչական Ժողովին եւ կ'ընտրուի անդրանիկ Շրջանային Վարչութեան անդամ՝ ատենադպիրի պաշտօնով: Դեկտեմբերին, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ՝ 1974-1979: Երկրորդ շրջանի մը համար ան կը վերընտրուի 1979-1983:

Եղբ. Արմեն իր մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեսնի կեդրոնի վերանորոգման աշխատանքներուն եւ կ'արժանանայ համապատասխան գնահատագիրի:

Եղբ. Արմեն Տեյիրսենճեան կը մահանայ 2015-ին:

## ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՎԱՐԴԳԷՍ

Եղբ. Վարդգէս Տէր Կարապետեան կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին Կեդրոնական Վարչութեան ատենապետը եւ միութեան համագաղութային կառոյցի կերտման գլխատըր ճարտարապետը:





Ան ծնած է 1928-ին, Պէյրուֆ: Պատանի տարիքին մաս կը կազմէ Պէյրուֆի պասքէթպոլի խումբին՝ դառնալով անոր լաւագոյն մարզիկներէն մէկը:

Իբրեւ հնուտ վարչական, եղբ. Վարդգէս բազմիցս կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Պատգամաւորական Ժողովներուն, ներկայացնելով Լիբանանի շրջանը: 1973-ին, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութեան վերածելու յատուկ մարմինին: Ապա, 1974-ին, 1979-ին եւ 1983-ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ, իբրեւ ատենապետ, ձեռնհասօրէն կը վարէ միութեան աշխատանքները՝ մինչեւ իր նահատակութիւնը 31 Յունուար 1986, երբ Լեւոն Պէրպլեանի եւ Ներսէս Խիտավերտեանի հետ, Պէյրուֆի մէջ ան զոհ կ'երթայ հայութեան թշնամիներու անարգ ոճիրին:

Ատենապետութեան 12 տարիներուն, եղբ. Վարդգէս ճիգ չի խնայեր Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցը դնելու ամուր հիմներու վրայ: Ան կ'այցելէ շրջաններ, իբրեւ Կեդրոնական Վարչութեան շրջուն պատգամախօս: Բժախնդրութեամբ եւ խոր հաւատքով մասնակից կը դառնայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր ձեռնարկներու կազմակերպման:

Հ.Մ.Ը.Մ.ական իր գործունէութեան կողքին, եղբ. Վարդգէս կ'ունենայ ազգային-հասարակական բեղուն գործունէութիւն, իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Քաղաքական Ժողովի քարտուղար եւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի երկար տարիներու անդամ:

Յետ-մահու, 14 Նոյեմբեր 2008-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը իրեն կը շնորհէ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանը:

## ՏԵՐ ԳՈՒԿԱՍԵԱՆ ՎԱԶԳԷՆ



Եղբ. Վազգէն Տեր Գուկասեան ծնած է 1918-ին, Քիլիս: Հազիւ նորածին, ծնողքին հետ կը փոխադրուի Չահլէ, ուր 5 տարի մնալէ ետք կը հաստատուի Հալէպ, Սուրիա: Ան իր նախակրթութիւնը կը ստանայ Ազգային Հայկազեան եւ ապա՝ Ուսումնասիրաց վարժարաններուն մէջ:

1930-ին, Հ.Մ.Ը.Մ.ին իբրեւ սկաուտ անդամակցելէ ետք, ան մաս կը կազմէ ֆութպոլի սկաուտական պատուոյ Ա. խումբին: 1936-1957 ան կը կրէ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի ներկայացուցչական Ա. խումբին շապիկը, միաժամանակ մաս կազմելով նախ Հալէպի խառն խումբին եւ ապա՝ Սուրիոյ ազգային խումբին, որոնց հետ 10 տարի ան կը կատարէ միջազգային շարք մը մրցումներ: 1954-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի վարչութեան որոշումով, ան կ'ուղարկուի Լոնտոն, ուր 3 ամիս կը հետեւի ֆութպոլի մարզումի դասընթացքներու:

Փայլուն ֆութպոլիստ մը ըլլալու կողքին եղբ. Վազգէն եղած է նաեւ լաւ մարզիչ, իրաւարար, թենիսմէն եւ արլէթ: Ան տիրացած է բազմատասնեակ մետալներու:

Արհեստով լուսանկարիչ: Աշխատակցած է Լիբանանեան «Լըսուար», «Լ'Օրիան Լըժուր», «Լարիվի Տիւ Լիպան», «Մակազին» թերթերուն եւ հայ մամուլի շարք մը ներկայացուցիչներուն: 1980-էն մինչեւ մահը եղած է Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի լուսանկարիչ:

1993-ին, երկարամեայ իր ծառայութիւններուն իբրեւ գնահատանք, եղբ. Վազգէն Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կողմէ կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին:

Ան կը մահանայ 28 Յունուար 2004-ին:



## ՏԷՐ ՅԱՐՈՒՓԻՒՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Վաթսունամեայ միութենական ծառայութեամբ բեռնատրուած եղբ. Յովհաննէս Տէր Յարութիւնեան Հ.Ս.Ը.Մ.ի պատմութեան ծանօթ անուն մըն է: Ան ծնած է 1924-ին, Իսկէնտէրունի Աթրք գիւղը: Ուսանողութեան տարիները կ'անցընէ Հալէպի մէջ: 1939-ին, Տէր Յարութիւնեան ընտանիքը կը հաստատուի Պէյրութ, ուր ան չորս տարի կը ծառայէ ֆրանսական բանակին, հասնելով ենթասպայի աստիճանին:

Եղբ. Յովհաննէս Հ.Ս.Ը.Մ.ին կ'անդամակցի 1936-ին, Հալէպի մէջ: Ան մաս կը կազմէ Հ.Ս.Ը.Մ.ի «Շանթ» ֆութպոլի կրտսերներու խումբին: 1947-1956, ան վարչական զանազան պատասխանատուութիւններ կը ստանձնէ Հ.Ս.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղէն ներս: 1957-ին, 1961-ին եւ 1962-ին կը ղեկավարէ Հ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան միջ-վարժարանային մարզահանդէսները: Իր եւ մարզասէր այլ եղբայրներու ջանքերով, 1961-ին կը կազմուի Հ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի աթլէթի խումբը:

1970-1985, եղբ. Յովհաննէս մաս կը կազմէ Հ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի իրերայաջորդ Շրջանային Վարչութիւններուն: 1986-1995 կը դառնայ Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ: 11 Փետրուար 1996-ին, ան կ'արժանանայ Հ.Ս.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Կը մահանայ 4 Դեկտեմբեր 2000-ին:

## ՏՕՆԱՊԵՏԵԱՆ ՎԱՀԱՆ



Հ.Մ.Ը.Մ.ի սփիռքեան սերունդի աւագ ներկայացուցիչներէն է եղբ. Վահան Տօնապետեան, որուն գործն ու անունը սերտօրէն կապուած է միութեան Դամասկոսի մասնաճիւղին հետ:

Եղբ. Վահան Տօնապետեան ծնած է 1888-ին, Ատանա: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ: Երկրորդական ուսումը՝ Տարսոնի Ամերիկեան Զոլէճին մէջ, ուրկէ շրջանաւարտ եղած է 1912-ին: Կարճ ժամանակով, իբրեւ ուսուցիչ, պաշտօնավարած է Տարսոնի մէջ, ապա նետուած է առետրքական ասպարէզ, աշխատելով իր հօրը կերպասի վաճառատան մէջ, Ատանա:

Տարագրութեան շրջանին, Վահան Տօնապետեան բախտը կ'ունենայ հասնելու Դամասկոս, ուր կը մնայ մինչեւ 1918: Պատերազմի վերջաւորութեան կը վերադառնայ Ատանա: Կիլիկիոյ պարպումով, 1922-ին, վերջնականապէս կը հաստատուի Դամասկոս, ուր կը կազմէ ընտանեկան իր բոյնը՝ ամուսնանալով Սելանիկէն Եպրաս Փափագեանի հետ: Կ'ունենան երկու դուստր՝ Սոնա եւ Լուսին:

Վահան Տօնապետեան յարգուած ազգային-հասարակական դէմք մըն էր Սուրիոյ մայրաքաղաքին մէջ: Ան սերտ յարաբերութիւններ կը պահէր արաբ շրջանակներու եւ պետական անձնաւորութիւններու հետ:

1924-ին, երբ խումբ մը մարզասէր երիտասարդներու կողմէ Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղը կը հիմնուի, Վահան Տօնապետեան կը հանդիսանայ մասնաճիւղին հոգին եւ սիրտը, մինչեւ Պէյրութ փոխադրութիւնը, 1962-ին: Իր օրերուն, Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղը ունէր ֆութպոլի իր հռչակաւոր խումբը, որ երկար տարիներ մնաց Սուրիոյ անպար-

տելի ախոյեանը: Այս խումբը, Օննիկ Կելլեկեանի խմբապետութեամբ եւ Սեզար եւ Ֆերտին Թերճիմաններու, Կարապետ Սաաթեանի, Չաւէն Չորպաճեանի, Եղիշէի եւ ուրիշներու մասնակցութեամբ, արձանագրեց մասնաճիւղին պատմութեան ամէնէն փայլուն էջերը:

1929-ին, Դամասկոսի մէջ հիմնուեցաւ Միացեալ Վարժարանը եւ Վահան Տօնապետեան 33 տարի անընդիստ վարեց վարժարանի հոգաբարձութեան ատենապետի պաշտօնը:

Վարչական մեծ կարողութիւններով օժտուած Վահան Տօնապետեան Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղին եւ Միացեալ Վարժարանին մնայուն ատենապետութիւնը վարեց անսահման նուիրումով, զոհելով իր գործի եւ հանգիստի ժամերը, մինչեւ իր յառաջացեալ տարիքը:

Վահան Տօնապետեան մահացաւ Պէյրութի մէջ, 12 Յուլիս 1969-ին:



## ՓԱՓԱԶԵԱՆ ՎԱՀՐԱՄ

Վահրամ Փափազեան կը հանդիսանայ մարզական շարժումը հայ պատանեկութեան մէջ տարածող առաջին դէմքերէն: Ծնած է 1890-ին, Գում Գափու: 1907-ին ան կը մտնէ Ռուպերթ Զոլէճ: Նիւթական միջոցներ չունի: Փոխառութեամբ հեծանիւ մը կը գնէ: Պապը Ալիէն Վերին Վոսփոր ամէն առտու թերթ կը վաճառէ: Յաճախ ան ստիպուած կ'ըլլայ հեռասպառ վազել՝ թերթը հասցնելու համար: Այդ ձեւով, ան հետզհետէ կը վարժուի արագ ու երկար վազելու: Կը շահի կէս մղոնի վազքի մրցանակ: Միջին Վոսփորի մէջ, 1912-ին, կը հիմնէ «Արտաւագր»ը, երբ մարզական կեանքը թափ ստացած էր Օսմանեան Սահմանադրութենէն ետք: Սկրտիչ Սկրեանի հետ ան կը դրկուի Սթոքհոլմ՝ Թուրք-

իսան ներկայացնելու միջազգային 6-րդ ողիմպիականին, ուր կը մասնակցի կէս մղոնի վազքի մրցումին: Կը գլէ իր մրցակիցները, բայց 100 մէքր մնացած՝ ուշակորոյս կ'իյնայ գետին:

1915-էն առաջ ան եղած է ուսուցիչ: Աշխատակցած է «Մարմնամարզ»ին, ինչպէս նաեւ՝ «Ազդարար»ին եւ «Հայ Սկաուտ»ին: 1915-էն ետք, Ժիրայր Եաղմուրեանի հետ կը հրատարակէ «Մարզաշխարհ»ը: Լաւ լողորդ էր եւ միշտ առաջնութիւն կը շահէր:

Վահրամ Փափազեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր ժողովին: Կ'ընտրուի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ: Հետագային, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի երրորդ Կեդրոնական Վարչութեան:

1922-ի Պոլսոյ աղետէն ետք կ'անցնի Յունաստան: Շրջան մը կը մնայ Լիբանան, ապա կը հաստատուի Միացեալ Նահանգներ, ուր նաեւ կը մահանայ:

## ՓՈՂԱՐԵԱՆ ՎԱՐԱԳ



Վարագ Փողարեան բնիկ շապին գարահիսարցի է: Զուռնաճեան է, բայց յետոյ մականունը հայացուած է: Յաճախած է Ռոպէրթ Քոլէճ, աւարտած է գայն եւ նշանակուած է նոյն վարժարանի մեքենական ճիւղի վարիչ: Պաշտօն մը, զոր մինչեւ վերջ կը շարունակէ: Միաժամանակ, ան մարզանքի ուսուցիչ էր: Ա. Աշխարհամարտէն առաջ, իբրեւ ուսուցիչ կ'այցելէ Կիլիկիա, ուր կը ստեղծէ մարզական շարժում: Կը մասնակցի նախաեղեռնեան հայկական ողիմպիականներուն: Կը հաստատէ նիզակ նետելու Հ.Մ.Ը.Մ.ական մրցանիշ: Կը նետէ նաեւ գունտ եւ սկաւառակ: Սակայն, ան առաւելաբար ֆութպոլով անուանի կը դառնայ:

1915-էն առաջ «Տորք»ի լաւագոյն խաղացողներէն էր: Յետ-սապահ էր: Ամբողջ Պոլիսը գայն կը նկատէր «Անծակելի պատուար մը»:

Պատերազմէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի կեդրոնական յանձնախումբի անդամ էր: Մրցաշարքները ինք կը կազմակերպէր: Լաւ իրաւարար էր: 1915-էն առաջ եւ ետք ան գրած է ֆութպոլի մասին յօդուածներ: Ունի նաեւ ֆութպոլի մասին գիրք մը: Իր անունը նոյնացած էր ֆութպոլին հետ:

Խառնուածքով հեզ էր, ընկերական, իրական մարզական ոգիի տէր մարդ մը: Կը մահանայ Պոլիս, 1938-ին:



### ՔԱԶՈՒՆԻ ԵԶՆԻԿ

Եզնիկ Քաջունի ծնած է 1897-ին, Արաբկիր:

Քաջունի մաս կը կազմէր «Տորք»ի շարքերուն: Աշխոյժ ու վարակող, ան կի-րակնօրեայ արշաւներու ոգին էր: Երբ կը սկսի «Մարմնամարզ»ի հրատարակութիւնը, Եզնիկ կը դառնայ Շաւարշ Քրիսեանի գործակիցներէն: Իր կարգին, ան դասախօսութիւններ կը ներկայացնէ առողջապահական նիւթերու շուրջ:

Ա. Աշխարհամարտէն վերջ Երեւան է: Հոն կը մնայ՝ իբրեւ մարզանքի ուսուցիչ ամերիկեան որբանոցներու, եւ կը նուիր-ուի երկրի մարզական-սկաուտական շարժումին: Իրեն յանձնուած էին Աղեքսանդրեան եւ Գալֆայեան գիմնազիոն-ներու մարզանքի դասերը:

## ՔԱՋՈՒՆԻ ԵՂԻՇԷ



Եղիշէ Քաջունի 1899-ին, Արաբկիր:

Ան կրտսեր եղբայրն էր Եզնիկ Քաջունիի: Կեդրոնականի աշակերտ էր: Հայ առաջին ֆութպոլիստներէն, նախ՝ «Մանքրայի»ի եւ ապա՝ «Տորք»ի մէջ, որուն հիմնադիրներէն կ'ըլլայ ան: Պոլսոյ մէջ կ'ուսանի իրաւաբանութիւն: Յետոյ կ'անցնի Վան՝ իբրեւ մարզանքի ուսուցիչ: Հոն կը հիմնէ «Վասպուրական» ֆութպոլի խումբը: Ա. Աշխարհամարտին կը մասնակցի Վանի ինքնապաշտպանութեան կռիւներուն: Յետոյ կը դառնայ Ջօր. Անդրանիկի քարտուղարը. անոր հետ Կովկասէն կ'անցնի Փարիզ, Լոնտոն, Մանչեսթըր: Նոյն այդ գաղութներուն կողմէ կը վերադառնայ Հայաստան, իբրեւ օժանդակութիւն հանդերձեղէն բաժնելու համար: Այդ առիթով, Պոլսոյ մէջ ան շփում կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնին հետ, կը խոստանայ սատարել երկրին սկաւուտական շարժումին եւ իր հետ Հայաստան կը տանի մարզական գոյքեր:

## ՔԻՐԱՋԵԱՆ ԽՈՐԷՆ



Եղբ. Խորէն Քիրազեան ծնած է 1922-ին, Պազարճիք, Պուլկարիա: Ծնողները նոյն տարին իսկ փոխադրուած են Փլովտիվ, ուր ան նախակրթութիւնը ստացած է Մխիթարեաններու տեղոյն վարժարանը:

1939-ին, եղբ. Խորէն կ'աւարտէ Փլովտիվի առեւտրական հիմնարկը եւ 1940-ին կը փոխադրուի Մոֆիա, ուր 55 տարի կը պաշտօնավարէ վաճառականական մեծ հաստատութեան մը



մէջ: 1943-1945 ան կը զինուորագրուի պուլկարական բանակին եւ կը մասնակցի Բ. Աշխարհամարտի կռիւներուն: Կը մեկնի մինչեւ Քոստա եւ ողիսական պայմաններու մէջ քալելով կը վերադառնայ Փլովտիվ:

Եղբ. Խորէն մանկութենէն կը դաստիարակուի Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական իտեւլներով եւ Գարեգին Նժդեհի հայրենասիրական շունչով: Կը կրէ ազդեցութիւնը Պուլկարիոյ 1930-ական տարիներու ազգային ականաւոր դէմքերուն՝ Ներսէս Աստուածատուրեանին, Օննիկ Փանիկեան-Չարմունիին, Յովհաննէս Տէվէճեանին, Հայկ Ասատուրիին եւ Կարօ Ղազարոսեանին:

1931-ին, Հ.Մ.Ը.Մ.ական վարչական իր երէց եղբօր օրինակին հետեւելով, եղբ. Խորէն Հ.Մ.Ը.Մ.ին կ'անդամակցի, իբրեւ գայիկ եւ ապա՝ սկաւաւ: 1940-ին, Սոֆիա հաստատուելէ ետք, եղբ. Արթօ Յարութիւնեանի հետ ան կը վերականգնէ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն տկարացած մասնաճիւղը: 1931-1944, մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի խափանումը Պուլկարիոյ մէջ, ան կը մասնակցի սկաւաւտական միջ-մասնաճիւղային գլխաւոր ձեռնարկներուն եւ բանակումներուն:

1991-ին, համայնավար կարգերու քայքայումէն եւ Պուլկարիոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի վերընձիւղումէն ետք, եղբ. Խորէն կը ստանձնէ Սոֆիայի մասնաճիւղին ատենապետութիւնը: Միաժամանակ, ան կեդրոնական դէմքն ու մղիչ ուժը կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ մնացեալ մասնաճիւղերուն վերականգնման եւ վերակազմակերպման աշխատանքներուն:

Եղբ. Խորէն կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Չ. եւ Է. Ընդհանուր Ժողովներուն: Է. Ընդհանուր Ժողովի նախօրեակին, Պէյրութ, 1999-ին, ան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ կը պարգեւատրուի միութեան «Արտակարգ» պատուանշանով:

Մինչեւ խոր ծերութիւն եղբ. Խորէն կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական արժէքներուն եւ կազմակերպական աւանդներուն արթուն պահապանը Պուլկարիոյ մէջ:

Եղբ. Խորէն Քիրազեան կը մահանայ 1 Նոյեմբեր 2013-ին:

## ՔՐԻՍԵԱՆ ՇԱԽԱՐԸ



Շախարշ Քրիսեան ծնած է Պէշկեքաշ, 22 Յուլիս 1886-ին: Նախնական կրթութիւնը ստացած է նոյն քաղի Մաքրուհեան երկսեռ վարժարանը: 6 Սեպտեմբեր 1897-ին, եղբայրը զինք կ'ուղարկէ Պարտիզակ՝ Ամերիկեան Բարձրագոյն Վարժարան, իբրև գիշերօթիկ: Հոնկէ կը փոխադրուի Ռոպէրթ Քոլէճ (Պոլիս), ուր իր մէջ կը ծնի մարզանքի հանդէպ բուռն սէր մը: Այնտեղ կը գտնէ նաեւ Գրիգոր Յակոբեանը, ապագայ յայտնի մարզիկը եւ ուրիշներ, որոնք ոչ միայն կը քաջալերեն զինք, այլեւ՝ կը թելադրեն մարմնակրթական ասպարէզին նուիրուիլ ամբողջովին: Քրիսեան Յակոբեանի միջոցով յարաբերութեան մէջ կը մտնէ Փարիզի Լիսէ ժամանոյն անուանի վարիչ փրոֆ. Տեպոնէի հետ, թղթակցութեամբ հետեւելով մարմնակրթանքի անոր դասերուն: 1906-ին կը մեկնի Փարիզ, ուր յիշեալ ուսուցիչին դասընթացքներուն կը հետեւի վեց ամիս: Ապա, ընկերներուն օժանդակութեամբ կ'անցնի Լոնտոն, ուր կը մնայ երկուքուկէս տարի, իր ազատ ժամերուն հետեւելով մարզանքի: 1909-ին կը վերադառնայ Պոլիս:

Քրիսեան զանազան վարժարաններու մէջ կը ստանձնէ մարզանքի ուսուցչութեան պաշտօններ, միաժամանակ աշխատելով որ թաղերու մէջ բացուին մարզարաններ: Ան կը ջանայ մարմնակրթութեան ճաշակը եւ սէրը տարածել հայ ժողովուրդի բոլոր խաւերուն եւ դասակարգերուն մէջ, իրեն խորհրդատու եւ գործակից ունենալով մարմնակրթանքի նուիրուած անձեր: Անոնց շնորհիւ է, որ Քրիսեան կը ձեռնարկէ «Մարմնամարզ»ի հրատարակութեան:

Թերթը կորիզ մըն էր: Ան կ'ըլլայ այդ կորիզին ամենէն տենդոտ աշխատողներէն մէկը: Շարժումը սկսած էր, պէտք էր կազմակերպել եւ կանոնաւորել զայն: Քրիսեան կը շարունա-

կէ ընթանալ որդեգրուած ճամբէն, առանց ընկրկելու:

Քրիստեան գործի կը ձեռնարկէ այնպիսի ժամանակի մը, երբ իր շուրջ չէին պակսեր բազուկի մարդեր: Գաղափարը կար, ինչպէս եւ գործը, սակայն, կողիացած ձեւով: Իրաքանչիւր մարզական խումբ, ինքն իր մէջ, իր խումբին համար էր: Ան կը յաջողի օգտուիլ գոյութիւն ունեցող ատաղձէն եւ մէկ տեղ հաւաքելով տարբեր ուղղութիւններով ուժերը, կը բերէ եւ իր «Մարմնամարզ» թերթին շուրջ կը համախմբէ զանոնք: Քրիստեան, 1911-ին, պարբերականին միջոցով կը քարոզէ հայ իգական սեռը եւս մարզել, եւ դպրոցներէ ներս մարզանքը պարտադիր դարձնել: Ան կ'առաջադրէ նաեւ մինչ այդ գոյութիւն ունեցող հայ մարզական միութիւններն ու ֆութպոլի խումբերը համադաշնակցութեան մը շուրջ հաւաքել:

1914-ին, Ա. Աշխարհամարտի աղէտալի օրերուն, Շաւարշ Քրիստեան կը դիմէ ֆրանսական հիւպատոսարան, ֆրանսական բանակին կամատր արձանագրուելու. կ'ընդունուի: Բայց հիւանդութեան մը պատճառով, Պոլիսէն մեկնումը կ'ունենայ յապաղում մը, որ այնքա՛ն ճակատագրական հետեւանք կ'ունենայ: Բազմաթիւ մտաւորականներու հետ ան եւս կ'աքտրիւի եւ Այաշի մէջ կը նահատակուի, հայ մարմնակրթական ընդհանուր միութիւն մը ստեղծելու իր երազը առանց իրականացնելու:



## ՕՎԱՅԵԱՆ ՅԱԿՈՒՔ

Եղբ. Յակոբ Օվայեան ծնած է 1939-ին: Սանճաքի պարպումէն ետք, ընտանիքին հետ փոխադրուած է Հալէպ, Սուրիա: Նոյն տարին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղին, իբրեւ գայլիկ: Այնուհետեւ երկար տարիներ ծառայած է Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն, իբրեւ սկաուտ, խմբապետ, մարզիկ, Սկաուտական Խորհուր-

դի եւ վարչական կազմերու անդամ: 1961-ին ընտանեօք փոխադրուած է Պէյրութ, Լիբանան եւ փոխանցուած է Հ.Մ.-Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիղ, ստանձնելով պատասխանատու պաշտօններ:

1974-ին, ընտանիքին հետ վերջնականապէս հաստատուած է Լոս Անճելըս: Նոյն տարին ան ընտրուած է Արեւմըտեան Մ. Նահանգներու առաջին Շրջանային Վարչութեան անդամ եւ ստանձնած է ատենապետի պաշտօնը: Այնուհետեւ, մինչեւ 1984, ան մաս կազմած է Շրջանային Վարչութեան յաջորդական կազմերու:

1976-ին, Հ.Մ.Ը.Մ.ական կարգ մը եղբայրներու հետ նախաձեռնած է Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան մարզախաղերուն, որոնք մինչեւ օրս մեծ ժողովրդականութիւն կը վայելեն շրջանին մէջ:

Եղբ. Օվայեան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի բազմաթիւ Շրջանային Ժողովներու, իսկ 1983-ին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Ընդհանուր Ժողովին, Աթէնք, Յունաստան: 1985-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 10-րդ մարզախաղերուն առիթով, Շրջանային Վարչութիւնը յուշանուէրով մը պատուած է զինք: 1987-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիղի վարչութիւնը եւ Լոս Անճելըսի քաղաքապետութիւնը բարձր գնահատելով եղբօր միութենական բեղուն գործունէութիւնը, յատուկ գնահատագիրներով պարգեւատրած են զինք:

Եղբ. Օվայեան մեծ դերակատարութիւն ունեցած է Բալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղերու (ՔԱՀԱՄ) կազմակերպման մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի 80-ամեակին զուգադիպող Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 23-րդ մարզախաղերուն առիթով՝ օրուան Շրջանային Վարչութիւնը «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսը շնորհած է իրեն:

Հոկտեմբեր 2004-ին, եղբայրը պարգեւատրուած է շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Ծառայութեան» շքանշանով:

Եղբ. Յակոբ Օվայեան կը մահանայ 24 Մարտ 2008-ին:



## ՖԵՆԵՐՃԵԱՆ ՔՐԻՍ

Քրիս Ֆեներճեան, որ ծանօթ է նաև Սիլվիո Ռիչի, Քէօութ Արիսքիտի, Քոչօ, Ալֆ Վոկան եւ Վահան կեղծանուններով, ծնած է 1884-ին, Պուլկարիա: Ան Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մաս կազմած է 1921-ին: Ֆեներճեանի շրջանը Հ.Մ.Ը.Մ.ի առաջին տարիներու գործունէութեան ամէնէն փայլուն շրջանն է: Անոր օրով տեղի ունեցած են ազգային իմաստով պատմական երկու փառաշուք հանդէսներ (հայկական ողիմպիականը եւ սկաուտական առաջին մեծ բանակումը): Համահայկական այս մեծ ողիմպիականին աննախընթաց մրցումները եւ բարձրագոյն մրցանիշներ հաստատելու փաստերը բաւական են ըսելու, որ Քրիս Ֆեներճեանի Կեդրոնական Վարչութիւնը ինչքան մեծ գործունէութիւն ունեցած է 1921-1922 տարեշրջանին:

Ֆեներճեան մեծ հեղինակութիւն կը վայելէր Հ.Մ.Ը.Մ.ի մէջ. բոլորէն սիրուած ու յարգուած էր, նաև այն պատճառով, որ ինք Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալէ բացի, հայ ժողովուրդի ծանօթ հերոսներէն մէկն էր, որ 1905-ին մասնակցած էր Սուլթան Համիտի մահափորձին:

Քրիս Ֆեներճեան Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչն էր Հայաստանի Օգնութեան Մարմինին մէջ:

1922-ի քաղաքական ծանօթ դէպքերուն պատճառով եւ Թուրքիոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան դադրեցումով, շատերու նման, ան եւս Պոլիսէն կ'անցնի Պուլկարիա եւ ապա վերջնականապէս կը հաստատուի Փարիզ, ուր երկարատեւ հիւանդութենէ ետք (հիւժախտ) կը մահանայ 10 Մարտ 1926-ին:

## ՖՐԷՆԿԵԱՆ ՕՆՆԻԿ



Նախաեղեռնեան շրջանի Պոլսոյ ան-  
ւանի ֆուքպոլիստներէն մէկն է Օննիկ  
Ֆրէնկեան, որ իբրեւ յետսապահ մաս կազ-  
մած է 1908-ին հիմնուած Բերայի «Արաքս»  
ֆուքպոլի խումբին: Ան իր մասնակցութիւնը բերած է Պոլսոյ  
Բ. դասակարգի ֆուքպոլի ախոյեանութեան, նաեւ՝ հայկական  
ողիմպիական խաղերուն:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութենէն անմիջապէս ետք, Օննիկ  
Ֆրէնկեան կը լծուի Բերայի մասնաճիղի կազմակերպման  
եռանդուն աշխատանքին եւ կը յաջողի կարճ ժամանակի մէջ  
մասնաճիղը հասցնել նախանձելի մակարդակի:

Օննիկ Ֆրէնկեան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ  
սկսաւտական կեդրոնական յանձնախումբին (1919-1922) եւ,  
իբրեւ բանակատեղիի պետ, իր մասնակցութիւնը կը բերէ  
միութեան միջ-մասնաճիղային աստիճանաւորական Բ. բա-  
նակումին, Պէօյիք Տերէ, 29-30 Յուլիս 1922:

Հ.Մ.Ը.Մ.ի Թուրքիոյ գործունէութեան դադրեցումէն ետք,  
Օննիկ Ֆրէնկեան կը մնայ Պոլիս եւ Ալեքսան Սկրտիչեանի  
հետ Շիշլիի մէջ կը կազմէ ֆուքպոլի խումբ մը, որ 1924-էն  
սկսեալ թրքական մամուլին մէջ խօսիլ կու տայ իր մասին:  
Խումբին հետեւողութեամբ ֆուքպոլի այլ խումբեր եւս կը  
ստեղծուին Պոլսոյ զանազան շրջաններուն մէջ (Գատը գիւղ,  
Սամաթիա, Օրթագիւղ, Բերա, Սկիւտար...): Յիշեալ խումբե-  
րը քանի մը տարի կը կազմակերպեն ֆուքպոլի ներքին մրցա-  
շարքեր: 1927-ին անոնք կ'իրականացնեն պոլսահայ դըպ-  
րոցականներու առաջին ողիմպիականը:

Յաջորդող տարիներուն, խումբերուն մեծ մասը կը լուծուի  
կամ կը միանայ Շիշլիի հիմնական խումբին, որ իր կարգին  
երկար կեանք չ'ունենար:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Ներշնչող Միութիւնը* 3

## *Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱՅ ԵՐԹԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ 100 ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ*

<i>Յառաջ նահապահ</i>	6
<i>Ով հայ արի</i>	7
<i>Քայլերգ Հ.Մ.Ը.Մ.ի</i>	7
<i>Սկառուարական քայլերգ</i>	8
<i>Քայլերգ</i>	8
<i>Հ.Մ.Ը.Մ. հայ արիներ</i>	9
<i>Երգ շքերթի</i>	9
<i>Երգ շքերթի</i>	10
<i>Հ.Մ.Ը.Մ.</i>	11
<i>Սկառուարի երգը</i>	12
<i>«Բարչրացի՛ր-բարչրացուր»</i>	13
<i>Ուխտ Արարարին</i>	14
<i>Յիշարակի երգ</i>	15
<i>Երգ հայ երիտասարդութեան</i>	17



<i>Քայլ՝ գայլիկ</i>	18
<i>Յառաջ, ով արի</i>	21
<i>Զօն Հ.Մ.Մ.ի</i>	22
<i>Հ.Մ.Մ. մարզական բանակ</i>	22
<i>Հ.Մ.Մ. աստղ մարզական</i>	23
<i>Հ.Մ.Մ.</i>	24
<i>Հ.Մ.Մ.ի համակիրներ</i>	24
<i>Հ.Մ.Մ. պանծայի</i>	25
<i>Հ.Մ.Մ. Պուրճ Համուր</i>	26
<i>Միութեան երգը</i>	26
<i>Վարդան Բախշեանի յիշատակին</i>	27
<i>Զօն Վարդան Բախշեանի</i>	28
<i>Վիզէն Չաքարեանի յիշատակին</i>	29
<i>Քսանամեակ</i>	30
<i>Հ.Մ.Մ.</i>	31
<i>Անցեալէ ապագայ Հ.Մ.Մ.ն է ներկայ</i>	32
<i>Զօն Հ.Մ.Մ.ին</i>	33
<i>Շքանշան Հ.Մ.Մ.ին</i>	34
<i>Պատիւ ու փառք քեզ Հ.Մ.Մ.</i>	40
<i>Չեր անխոնջ ուղին</i>	41
<i>Զօն Հ.Մ.Մ.ի իննսունհինգամեակին</i>	42
<i>Դարեկան Հ.Մ.Մ.ին</i>	43
<i>Հարիւրամեայ Հ.Մ.Մ.</i>	44
<i>Զօն Հ.Մ.Մ.ին</i>	44
<i>Տաղ չօնուած Հ.Մ.Մ.ի</i>	45
<i>Բանակումի քայլերգ</i>	46
<i>Քայլերգ համա-Հ.Մ.Մ.ական Ա. բանակումի</i>	46
<i>Համա-Հ.Մ.Մ.ական Գ. բանակումի նուիրուած երգ</i>	47

<i>Քանակում 90</i>	47
<i>Մէկ հայրենիք, մէկ հայութիւն</i>	48
<i>Քայլերգ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Չ. քանակումի</i>	49
<i>Քայլերգ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Է. քանակումի</i>	50
<i>Քայլերգ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ը. քանակումի</i>	50
<i>Քայլերգ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Թ. քանակումի</i>	51
<i>Քայլերգ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ժ. քանակումի</i>	52
<i>Քաժանման երգ</i>	52
<i>Խարուկահանդէսի երգ</i>	53
<i>Խոսքացայ</i>	54
<i>Երդման երգ</i>	55
<i>Խօսք հայ գայլիկներուն</i>	55
<i>Գայլիկի դրօշին</i>	56
<i>Հ.Մ.Ը.Մ.ի արիներ</i>	57
<i>Հայ արի</i>	57
<i>Հայ արիներ</i>	58
<i>Հոգի՛ս կապեն</i>	59
<i>Հայ արեւոյշներ</i>	60
<i>Սկաուտ փեսնէլիս</i>	60
<i>Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ ենք</i>	61
<i>Սկաուտներ</i>	62
<i>Երէջների երգը</i>	62
<i>Այգն է բացուեր</i>	63
<i>Հ.Մ.Ը.Մ.ը «փորրիկ Հայաստան» մը Սփիւռքի մէջ</i>	64
<i>«Արի արանց» վայել արժանապատուութեամբ</i>	66
<i>Սերունդներ ներշնչող եւ առաջնորդող մեծութիւնը</i>	68
<i>Պատմութեան արութեամբը «արի»</i>	69
<i>Ամէնուն սիրած միութիւնը</i>	70

<i>Ո՛չ միայն մարմին</i>	71
<i>Հաւարքի գործ</i>	73
<i>Հ.Մ.Ը.Մ.</i>	74
<i>Հ.Մ.Ը.Մ.</i>	77
<i>Հ.Մ.Ը.Մ.</i>	81
<i>Մեր աննման փղաքը</i>	84
<i>Այս ալ մեր Չափիկը</i>	86
<i>Շքերթը</i>	89
<i>Ոտքի՛, Հ.Մ.Ը.Մ.ը կ'անցնի</i>	92
<i>Մարմնին առններ...</i>	94
<i>Հ.Մ.Ը.Մ.ը յաղթել սորվեցուց մեզի</i>	96
<i>Արի ու առաքինի կազմակերպութիւնը</i>	97
<i>Երիտասարդական վահանը</i>	99
<i>Իր ժողովուրդէն ծնած, իր ժողովուրդին համար</i>	100
<i>Պատմական առաքելութեամբ</i>	102
<i>Հպարտառիթ յիսնամեակ մը</i>	103
<i>«Բարոյական զինուորագրութիւն»</i>	108
<i>Մէկ ընդհանուր նպատակ</i>	110
<i>Հայկական լինելութեան փարոսը</i>	111
<i>Յարկանշական երկու բառ</i>	112
<i>«Տղոցմէ պէտք է մարդեր կերպել»</i>	113
<i>Հայ սկսույթներուն</i>	116
<i>Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընդամենիքը</i>	119
<i>Հ.Մ.Ը.Մ.ականը</i>	122
<i>Հ.Մ.Ը.Մ. ունի փեսայականներ</i>	124
<i>Հայապահպանումի անխորտակ բերդը</i>	125
<i>Կառչած մնալ միութեան անփոխարինելի նպատակներուն</i>	126

<i>Ուժի աղբիւր՝ Հ.Մ.Մ.</i>	128
<i>Գաղափարի միութիւնը</i>	130
<i>Ընդհանրական հայութիւն</i>	131

**Հ.Մ.Մ.Ի 100-ԱՄԵԱՅ ԵՐԹԻՆ  
ՆՈՒԻՐԵԱԼ 100 ԴԷՄՔ**

<i>Ազնաւորեան Սարգիս</i>	134
<i>Ալահայրոյեան Վարդգէս</i>	135
<i>Անդրէասեան Վազգէն</i>	136
<i>Անմահունի Յարութիւն</i>	136
<i>Առաքելեան Քերոբ</i>	138
<i>Ասրուածապորեան Ներսէս</i>	140
<i>Արզումալեան Սինաս</i>	140
<i>Արզումանեան Սիւսք</i>	141
<i>Բախշեան Վարդան</i>	142
<i>Բարսեղեան Սիւսք</i>	143
<i>Բարսեղեան Յարութիւն</i>	144
<i>Գազանճեան Վարուժան</i>	145
<i>Գայեան Լեւոն</i>	146
<i>Գապագեան Արուր</i>	148
<i>Գաբեան Յակոբ</i>	150
<i>Գարսպոյաճեան Գէորգ</i>	151
<i>Գաւուրճեան Վահան</i>	152
<i>Գեղարդ Յարութիւն</i>	153
<i>Գէորգեան Վարուժան</i>	154
<i>Գոյումճեան Կարպիս</i>	156
<i>Դանիէլեան Դանիէլ</i>	157

<i>Դանիելիան Վահրամ</i>	<i>158</i>
<i>Եազմաճեան Օննիկ</i>	<i>159</i>
<i>Չարիֆեան Մապթէս</i>	<i>160</i>
<i>Չաքարեան Վիգէն</i>	<i>160</i>
<i>Թապագեան Ֆլորա</i>	<i>161</i>
<i>Թիւթիւնճեան Կարօ</i>	<i>163</i>
<i>Թիւսիզեան Նշան</i>	<i>164</i>
<i>Թորիկեան Բիզանդ</i>	<i>165</i>
<i>Ինճէեան Պեպիկ</i>	<i>167</i>
<i>Խանճեան Սյուփան</i>	<i>167</i>
<i>Խոյեան Տիգրան Ա. Քինյ.</i>	<i>168</i>
<i>Ծալորեան Յովհաննէս</i>	<i>169</i>
<i>Ծալորեան Վարդգէս</i>	<i>171</i>
<i>Կարապետեան Գէորգ</i>	<i>172</i>
<i>Կարապետեան Սիամանթօ</i>	<i>173</i>
<i>Կէօզիւպէօյիքեան Բիզանդ</i>	<i>174</i>
<i>Հինդլեան Յովհաննէս</i>	<i>175</i>
<i>Ճիզմէճեան Հայկ</i>	<i>176</i>
<i>Մալումեան Սիրպիչ</i>	<i>177</i>
<i>Մանուկեան Եղիշէ</i>	<i>178</i>
<i>Մասպանաճեան Լուսեր</i>	<i>180</i>
<i>Մարութեան Արարաւազ</i>	<i>182</i>
<i>Մարտոյեան Յովհաննէս</i>	<i>183</i>
<i>Մեհեան Կարօ</i>	<i>184</i>
<i>Մեհրապեան Շաւարշ Ա. Քինյ.</i>	<i>185</i>
<i>Մերճանֆ Գրիգոր</i>	<i>188</i>
<i>Մինքաճեան Ժիրայր</i>	<i>190</i>
<i>Միշաւետիքեան Կրէկուար</i>	<i>190</i>

<i>Մկրեան Մկրտիչ</i>	191
<i>Մուրաբեան Հրանդ</i>	192
<i>Մուրաբեան Սուրէն</i>	193
<i>Մուրաբեան Վարուժան</i>	194
<i>Յաբէթեան Գէորգ</i>	195
<i>Յակոբեան Ալպէր</i>	196
<i>Յակոբեան Գրիգոր</i>	198
<i>Յակոբեան Լեւոն</i>	199
<i>Յովհաննէսեան Վարդիվառ</i>	199
<i>Յովսէփեան Հայկ</i>	202
<i>Նազարեան Սուրէն</i>	203
<i>Նալպանյան Սահակ</i>	204
<i>Նիկողոսեան Արամ</i>	205
<i>Շահինեան Գարլօ</i>	206
<i>Շահինեան Յովհաննէս</i>	207
<i>Շէիրիկեան Գառնիկ</i>	208
<i>Շիմշիրեան Միհրան</i>	208
<i>Շիրինեան Պարգեւ</i>	210
<i>Շիրրյունեան Կարպիս</i>	211
<i>Ոսկունի Տիգրան</i>	213
<i>Ուշագլեան Կարօ</i>	214
<i>Ուրֆայեան Անդրանիկ</i>	215
<i>Չերազ Վահան</i>	216
<i>Չոքիարեան Վահէ</i>	217
<i>Պայթարեան Յովհաննէս</i>	218
<i>Պապլուզեան Լեւոն</i>	220
<i>Պարսամեան Պարգեւ</i>	221
<i>Պէրպէրեան Լեւոն</i>	222

<i>Պոյաճեան Ժիրայր</i>	223
<i>Ռուսպոմեան Վաչէ</i>	224
<i>Սապունճեան Չաւէն</i>	225
<i>Սարգիսեան Ճեմիլ</i>	227
<i>Սիրունի Յ.Ճ.</i>	228
<i>Սնարեան Մուշեղ</i>	229
<i>Տաղեան Ճորճ</i>	231
<i>Տաթևեան Ճորճ</i>	232
<i>Տէմիրճեան Երուանդ</i>	234
<i>Տէյիրմէճեան Արմէն</i>	235
<i>Տէր Կարապետեան Վարդգէս</i>	235
<i>Տէր Ղուկասեան Վազգէն</i>	237
<i>Տէր Յարութիւնեան Յովհաննէս</i>	238
<i>Տօնապետեան Վահան</i>	239
<i>Փափազեան Վահրամ</i>	240
<i>Փողարեան Վարսգ</i>	241
<i>Քաջունի Եզնիկ</i>	242
<i>Քաջունի Եղիշէ</i>	243
<i>Քիրազեան Խորէն</i>	243
<i>Քրիսեան Շաւարշ</i>	245
<i>Օվայեան Յակոբ</i>	246
<i>Ճենեթճեան Քրիս</i>	248
<i>Յրէնկեան Օննիկ</i>	249





**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

*Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչություն*

**ԽՄԲԱԳԻՐ**

*Վ. Ասագեան*

**ԳՐԱՇԱՐՈՒԹԻՒՆ**

*Շողիկ Պոյաճեան*

**ԷԶԱԳՐՈՒՄ**

*Արշո Պալեան*

**ԿՈՂՔԻ ՉԵՒԱՒՈՐՈՒՄ**

*Հրանդ Եունիսէս*



**ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**

*Համազգայինի «Վահէ Սէրեան»*

*Հրատարակչություն*



ՊԵՅՐՈՒԹ-  
2019

